

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում
Տիար Ալեքսան Խաչատրյանին եւ Սամվել
Մուրադյանին
սույն գրքույկի թարգմանությանը եւ
տպագրությանը սիրահոժար ցուցաբերած
նյութական աջակցության համար

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բարի է գոհաբանել Տիրոջը,
Սաղմոս երգել Քո անվանը, ո՛վ Բարձրյալ:
Առավոտյան պատմել Քո ողորմությունները
եւ գիշերը՝ Քո ճշմարտությունը,
տասնալար սաղմոսարանով, օրհնության ձայնով գովաբա-
նել:

Ուրախացրիր ինձ, Տե՛ր, Քո արարումներով,
եւ պիտի ցնծամ ձեռքիդ գործերով:

Որքա՜ն մեծ են Քո գործերը, Տե՛ր,
եւ չափազանց խոր են խորհուրդները Քո:

Անզգամ մարդը չի ըմբռնի,

եւ անմիտը չի հասկանա այս (Սաղմ. ՂԱ 2-7):

Իր տեսակի մեջ եզակի եւ հույժ շահեկան այս գրքույկի հա-
յերեն հրատարակությունը, թվում է, ուշացումով է գտնում ճշ-
մարտություն փնտրող իր ընթերցողին: Այս գրքույկը ժողովա-
ծու է, ուր ի մի են բերված աշխարհի հռչակավոր մարդկանց՝
ֆիզիկոսների, քիմիկոսների, աստղագետների, երկրաբաննե-
րի, աշխարհագրագետների, կենսաբանների, պատմաբաննե-
րի, փիլիսոփաների, գրողների եւ բանաստեղծների, ինչպես
նա՝ քաղաքական՝ պետական գործիչների՝ հոգեշահ վկայու-
թյունները Աստվածաշնչի հավիտենական արժեքի, նշանակու-
թյան, իսկության, դաստիարակչական դերի, բարերար ազդե-
ցության, հոգին ու միտքը լուսավորող նրա գործության, նաեւ
փրկության եւ բարոյականության աղբյուր լինելու եւ այլնի մա-
սին: Ավելին, այստեղ արծարծված է նաեւ արդիական հնչեղու-
թյուն ունեցող կրոնի ու հավատի եւ գիտության ու առաջադի-
մության փոխհարաբերության հարցը, որը վերջին դարերում
ալեկոծել է մարդկությանը: Ընդ որում, վերջին տասնամյակնե-
րում մարդկային կեցության այս երկու կարեւորագույն ոլորտ-
ների պայքարը մեզ հրամսվում էր իբրեւ գիտության առաջըն-
թացի փայլուն հաղթանակ կրոնի նկատմամբ: Մինչդեռ իրա-

կանում կյանքը այլ բան ապացուցեց: Քրիստոնեական աստվածաբանության մեջ, որից երկար ժամանակ մենք անջրպետված էինք «երկաթյա վարագույրով», համենայն դեպս նման խնդիր գոյություն չունի. կրոնն ու հավատը եւ գիտությունն ու բանականությունը չեն հակադրվում միմյանց. դրանք դիտարկվում են ի վերուստ մարդ արարածին պարզեված շնորհների լույսի ներքո: Այսպես, ըստ ս. Գրիգոր Տաթևացու՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եռամեծ վարդապետի, մարդն օժտված է ճանաչողության զանազան միջոցներով: Օրինակ՝ աչքերով տեսնում ենք միմիայն ֆիզիկական՝ տեսանելի աշխարհը՝ պատերը, լեռները, երկինքը. բանականությանը՝ այս ամենը, նաեւ ոչ նյութական բաները՝ իմանալի աշխարհը. իսկ հավատի աչքերով՝ հոգեւոր աշխարհը, այսինքն՝ Աստծուն: «Ընդ որում,- գրում է նա,- բանականությունը, քանի որ ստեղծված է եւ չափավոր (այսինքն՝ սահմանափակ), չի կարող տեսնել անեզր ու անչափ Աստծուն: Այսպես է, օրինակ, այն իմաստասերների պարագայում, որոնք թեւ մտքի գիտություն ունեն, սակայն Աստծուն չեն կարող ճանաչել առանց հավատի»:

Ուստի խնդիրը ոչ թե ճանաչողության մեկ միջոցի կամ մարդկային կեցության մեկ ոլորտի արհեստական հակադրումն է մյուսին, ինչպես անցյալում անում էին մատերիալիստ փիլիսոփաները, այլ հավատ ունենալը՝ «ծայրագույն բարիքը» տեսնելը, եւ չունենալը՝ ըստ Պողոս առաքյալի խոսքի. «Բոլորը չէ, որ հավատ ունեն (Բ Թեսաղ. Գ 2): Մանավանդ սխալ էր ու անհիմն հավատը դիտարկել իբրեւ «ֆանտաստիկ արտացոլում մարդկանց գլուխներում», այսինքն՝ օբյեկտիվ իրականության աղավաղված արտացոլում, կամ անբացատրելի երեւույթների ետեւում գերբնական ուժեր տեսնելու մտայնություն, որն, իբր, ժամանակի ընթացքում գիտության առաջընթացի հետ պետք է իսպառ վերանար: Ի դեպ, մատերիալիստական այս թյուր տեսակետի դեմ է խոսում նաեւ վիճակագրությունը,

ըստ որի՝ այսօր աշխարհի բնակչության 70%-ն իրեն հավատացյալ է համարում, որն ավելի գերակշռ է մանավանդ գերզարգացած՝ գիտական մեծ նվաճումներ ունեցող երկրներում:

Սակայն այն, ինչ աստվածաբանության մեջ պարզ է եւ աներկբա, կարող է տարակուսանքի տեղիք տալ ոմանց: Ուստի այսօր չափազանց արդիական է, բացի Եկեղեցու հայրերի եւ վարդապետների ճշմարիտ խոսքերից, իմանալ նաեւ գիտության ռահվիրաների եւ մեծ մտածողների կարծիքները՝ իբրեւ մեզանում մեծ հեղինակություն վայելող գիտության ձայն խնդրո առարկայի վերաբերյալ:

Մեզ համար նվազ կարեւոր չէ այն հանգամանքը, որ այս գրքույկում (առաջին անգամ հրատարակվել է 1913 թ., իսկ երկրորդ անգամ ուղղված՝ լրացված՝ 1998 թ.) տեղ գտած հեղինակներն ապրել, ստեղծագործել եւ պայքարել են Վերածննդից մինչեւ XX դար ընկած ժամանակահատվածում, երբ մատերիալիզմը, աստիճանաբար մեծ թափ առնելով ու ելնելով գիտության սահմաններից, փորձեց պարտադրել իրեն ու «բարեփոխել» հասարակական կյանքը:

Գիտության այս մեծ երախտավորների եւ մտածողների քաղվածքները, որոնց անունները մեզ քաջ հայտնի են դպրոցական եւ բուհական ձեռնարկներից, տոգորված են Աստծո խոսքի հանդեպ զարմանալի երկյուղածությամբ, խոնարհությամբ, անմընացորդ սիրով ու նվիրվածությամբ եւ դրանով արժեքավոր են նաեւ քրիստոնյաների համար՝ չմոռանալով, սակայն, որ նրանց խոսքերը մեզ համար հոգեչափ վկայություններ են, բայց ոչ՝ Սուրբ Հոգով լցված Եկեղեցու հայրերի ու վարդապետների ուղղադավան եւ անսխալ բանաձեւումներով անվերապահորեն առաջնորդվելու խրատանի:

Ղեւոնդ Քահանա Մայիլյան

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՐ ՄԱՐԴԻԿ ԱՍՏԿԱԾԱՇՆՉԻ ՄԱՍԻՆ

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ գիտական գիտելիքների չափից դուրս նախանձախնդիր ջատագովները, մեծ մասամբ մակերեսորեն ծանոթ իրական գիտությանը, համարձակ ու բացահայտ հայտարարում են, թե մեր հավատն Աստվածաշնչի աներկբա ճշմարտության եւ հավիտենական նշանակության հանդեպ՝ իբրեւ ե՛ւ հավատի կանոնի, ե՛ւ բարոյականության աղբյուրի, աններելի հիմարություն է մտածող մարդու համար: Ըստ նրանց՝ գիտությունն, իբր, արդեն ապացուցել է, որ Աստվածաշունչը բազում ակներեւ սխալներ ու ծայրահեղ մոլորություններ է պարունակում իր մեջ: Եվ իրենց հոգեւոր հպարտությունից կուրացած՝ այս անձինք անամոթաբար հանդգնում են անգամ ծաղրել Աստվածաշունչը՝ մեծ ու սրբազան այս Գիրքը, որը հազարամյակների ընթացքում մարդկության համար ծառայել է որպես հոգեւոր մխիթարության, բարոյական ուժի եւ կրոնաբարոյական դաստիարակության անսպառ աղբյուր:

Յենայի համալսարանի պրոֆեսոր Հեկկելը այս առումով ամենաժպիրի լկտիության վառ օրինակն է՝ եկեղեցական պատմությունից եւ աստվածաշնչագիտությունից իր ցնցող տգիտությամբ հանդերձ: Գերմանիայում ավելի քան 180 հազար օրինակով տարածված իր «Տիեզերական առեղծվածներ» գրքում Հեկկելը պատմում է, թե բոլոր կանոնական եւ պարականոն Ավետարանները դրվում են եկեղեցու բեմի սեղանի տակ, եւ ապա ժողովին հրավիրվածները աղոթում են Աստծուն, որ սուտ գրքերը՝ մարդկանց հորինվածքները, մնան հատակին, իսկ իսկականները՝ Տիրոջ հայտնությունը պարունակողները, թռչեն Աստծո սեղանի վրա, ինչը եւ պատահեց իրականում. Հեկկելի խոսքերով՝ մեր չորս Ավետարանները ցատկեցին սեղանի վրա: Այս հրաշքով էլ, իբր, հաստատվեց

նրանց կանոնականությունը¹: Չէ՞ որ սա ոչ այլ ինչ է, քան բարեխիղճ գիտնականին անվայել հեքիաթ, որն ի վերջո Հեկկելը չգետեղեց իր գրքի անգլերեն հրատարակության մեջ, մինչդեռ այն, չգիտես ինչու, նախկին տեսքով մնում է գերմաներեն հրատարակության մեջ, թեպետ եւ դրա բովանդակ պատմական անարժանահավատությունը հեղինակին ապացուցվել էր բազմաթիվ գերմանացի աստվածաբանների կողմից:

Արժանահավատության առումով նույնքան սին են նաեւ որոշ բնագետների բազմաթիվ այլ էքսկուրսները կրոնագիտության եւ աստվածաբանական գիտությունների ոլորտում: Այնինչ մեզանում շատ կան խոր ու բազմակողմանի գիտելիքներից զուրկ եւ թերուս մարդիկ, որ ոյուրությամբ ընկնում են «ժամանակակից» գիտության դրոշի ներքո ընթացող խաբեպատիր գիտության (Ա Տիմ. Ջ 20) ծուղակը եւ Հեկկելի ու նրա նմանների ճառերի հիման վրա պարսավում ու անվանարկում Ս. Գիրքը: Այս կերպ նրանք ցանկանում են ցույց տալ իրենց կասկածելի «կրթվածությունը» եւ հասարակության մեջ «առաջադեմ» մարդու համբավ ձեռք բերել: Այսօր հաճախ ենք նկատում մի ցավալի երեւոյթ, երբ «մեր ժամանակների ոգով» համակված յուրաքանչյուր ոք արդեն իսկ ամաչում է ընթերցել եւ սերտել Աստվածաշունչը՝ այս հնամենի գրքի բովանդակությամբ հետաքրքրվելը ասես նվաստացուցիչ համարելով իր անձի համար:

¹ ? . Gekkel6, M]rovy[zagadki. Perv. s9 n9meck. F. Kapellwa. Lejpcig9-Spburg9, Ա»»Օ, էջ 163

Նման մտացածին պատմության հանդիպում ենք նաեւ Վոլտերի մոտ, ըստ որի՝ Նիկիայի ժողովի հայրերը, բոլոր կանոնական եւ պարականոն գրքերի կույտը դնելով սեղանի վրա, ջերմեռանդորեն աղոթեցին Տիրոջը, որպեսզի վերջիններս ընկնեն սեղանից, իսկ աստվածաշունչ գրքերը մնան սեղանի վրա: Եվ իսկույն այդպես էլ պատահեց (Collection d'anciens evangiles, predisl. t. VI, էջ 468. տե՛ս A. P. Mit[kin. 5Vol6ter9, kak9 glava i tip9 francuzskago never][5, 5Xrist. Qten]i5, Ա»»°, vyp. VI):

Տիրող նման մտայնության պայմաններում հասարակության մեջ, մանավանդ ուսանող երիտասարդության շրջանում, կարծում ենք, ավելորդ չպետք է դիտվի մեր այս փորձը, որը նպատակ ունի ցույց տալ, որ իրական կրթությունն ու գիտությունը ընդունում են Աստվածաշունչն իբրև մարդկության հոգեւոր զարգացման արժանավոր կոթող: Մեր նպատակն է նաեւ հստակ ապացույցներ ներկայացնել այն մասին, որ գիտության եւ արվեստի ոլորտներում մեծ հռչակ եւ նույնիսկ համաշխարհային համբավ ունեցող ոչ փոքրաթիվ ականավոր անձինք բարձր էին գնահատում Ս. Գիրքը եւ մեծ երկյուղածությամբ վերաբերվում Գիրք գրողին՝ խոնարհվելով նրա հոգեւոր հեղինակության եւ վարդապետության բովանդակության վստեղության առջեւ: Նրանք համոզված էին, որ, ի հեճուկս բազմաթիվ հարձակումների, երկարուձիգ դարեր հարատեւել կարողացած Գիրքը, որի ազդեցությունն առ այսօր ճանաչվել է ճանաչվում է բարի ու ճշմարտություն փնտրող մարդկության լավագույն մասի կողմից, պետք է բովանդակի ճշմարտությունը:

Մեր ակնարկը սկսենք բնագետներից:

Բանն այն է, որ հասարակության լայն խավերում կանխակալ կարծիք է տիրում, ըստ որի՝ գրեթե բոլոր բնագետները անհավատ մարդիկ են եւ Ս. Գրքի հանդեպ անթաքույց արգահատալից վերաբերմունք ունեն: Իրականում դա բնավ այդպես չէ: Ճշմարտությունն այն է, որ խիստ եւ գիտական տվյալների վրա խարսխված բնագիտությունն ու կրոնական հավատը կարող են խաղաղ գոյակցել եւ միմյանց հետ լինել համաձայնության մեջ: Աներկբա փաստ է, որ բնության մեծագույն հետազոտողները՝ գիտության առաջընթացի երախտավորները, լայն գիտական ճանաչողությունն իրենց մեջ զուգակցել են առ Աստված խոր հավատի եւ Նրա Հայտնության հետ: Այսօր էլ բնագետների մեջ մեծ թիվ են կազմում Աստծուն անկեղծորեն հավատացող քրիստոնյաները, որոնք մանկական պարզությամբ յուրացնում են աստվածային Հայտնության հավի-

տենական անխախտելի ճշմարտությունները: Ստորեւ կտեսնենք, թե Ս. Գրքի հանդեպ ինչպիսի հազվագյուտ երկյուղալից վերաբերմունք են ունեցել եւ առ այսօր ունեն բազմաթիվ ականավոր բնագետներ:

Այսպես, անվանի ֆիզիկոս եւ աստղագետ Գալիլեյը (1564-1642) խոր հավատով էր տոգորված Ս. Գրքի աստվածաշնչականության* հանդեպ: Իր նամակներից մեկում նա գրում է. «Աստվածաշունչը բնավ չի կարող ստել եւ սխալվել. նրա վկայությունները բացարձակապես եւ անձեռնմխելիորեն ճշմարիտ են»:²

Ականավոր քիմիկոս Բոյլը (1626-1691), որը կարող է դասվել բոլոր ժամանակների մեծագույն մարդկանց թվին եւ կոչվել ժամանակակից քիմիայի հայրը, այնպես էր սիրում Աստվածաշունչը, որ այն բնագրով ընթերցելու համար սովորեց երայերեն եւ հունարեն: Բացի այդ, նա միջոցներ հատկացրեց Ս. Գիրքը մալայերեն, թուրքերեն եւ այլ լեզուների թարգմանելու համար: Նրան է պատկանում Ս. Գրքի մասին հետեւյալ ասույթը. «Աստվածաշնչի համեմատ բոլոր մարդկային գրքերը, նույնիսկ կոթողայինները, լոկ մոլորակներ են, որոնք իրենց բովանդակ լույսն ու փայլը ստանում են արեգակից»:³

Ժամանակակից ճշգրիտ քիմիայի հիմնադիր, անվանի գիտնական Լավուազիեն (1743-1794) խստորեն սահմանազատում էր կրոնական ոլորտը գիտականից: Գիտության մեջ ջախջախիչ քննադատ եւ սկեպտիկ լինելով՝ նա անառարկելիորեն ընդունում էր Ս. Գրքով մեզ հայտնված հավատի դոգմաները եւ բարձր գնահատում նրա հոգեւոր գանձերը: «Դուք հրաշալի գործ եք նախաձեռնում,- գրում է Լավուազիեն ջատագովական աշխատություն հրատարակած ոմն Քինգի,-

* Աստվածաշնչականություն-Ս. Գրքի աստվածային ծագումը, Աստծո շնչով գրված լինելը:

² N. A. Llbimov9, Istorj[fiziki. գ. III. otd. Á, էջ 22

³ Dennert, Die Religion der Naturforscher. Berlin 1908, էջ 26

հանդես գալով որպես Հայտնության եւ Ս. Գրքի իսկության պաշտպան»:⁴

Ֆրանսիացի գիտնական Բիոն⁵ (1774-1862), որն օպտիկայում կատարած իր հայտնագործություններով համաշխարհային հռչակ էր վայելում, Մովսեսի շարադրած արարչագործության պատումների մասին գրել է. «Կա'մ Մովսեսը մեր դարաշրջանին հատուկ խոր գիտական փորձառություն ուներ, կա'մ էլ նա կրող էր հայտնության»:⁶

Մագնիսական եւ էլեկտրական երեւոյթների մեջ իր հետազոտություններով հռչակված ֆիզիկոս եւ մաթեմատիկոս Անդրե Ամպերի (1775-1836) մասին Արագոն գրում է.

«Աստվածաշնչի եւ Եկեղեցու հայրերի մշտական ընթերցումը նրա համար հուսալի միջոց էր, որով պատանի մաթեմատիկոսը [հեղափոխության տարիներին] զորացնում էր իր հավատը, երբ այն սկսում էր սասանվել»: Իր կյանքի վերջալույսին Ամպերը գրում է. «Ես կուզենայի միշտ հիշել Պողոս առաքյալի խոսքերը. «Նրանք, որ աշխարհիկ կյանք են վարում, որպես թե վայելած չլինեին» (Ա Կոր. Է 31)»:⁷ Էլեկտրադինամիկայի գյուտարարը հաստատում է աշխարհի արարման մասին Մովսեսի պատմությունների ստուգությունը. «Հաջորդականությունը, գրում է նա,- որով ի հայտ են գալիս օրգանապես ստեղծված արարածները, խիստ համահունչ է արարչագործության վեց օրերին, ինչպես այդ մասին մեզ պատմում է Ծննդոց գիրքը»:⁸

⁴ М. А. Engelgardt, Lavuaz6e. Ego hizn6 i nauqna[de[tel6nost6. SPb. Á»Á, էջ 27

⁵ Բիոյի մահվան հաջորդ օրը կոմս Շամբորը գրում է. «Նա առաջնակարգ գիտնական էր, առաջին օրերի քրիստոնյա եւ իմ ամենահավատարիմ ընկերներից մեկը» (Novyj 6ncikloped. Slovar6 Brokgauza-Efrona, t. VI, էջ 809):

⁶ Dennert, Die Religion der Naturforscher, էջ 45

⁷ Engel, Die gr6ssten Geister 6nb. die h6chsten Fragen. Dritte Auflage, էջ 19-20

⁸ «Revue des deux mondes». 1883 juillet, էջ 193 (մեջքերումը՝ ըստ Fr. Gettinger, 5Apolog][xrist]anstva%, գ. II, SPb. Á»ØÛ, էջ 124)

Հնէաբանության հիմնադիր Կյուվիեն (1769-1832) իր "Discours sur les rEvolutions du globe" աշխատության մեջ գրում է. «Մովսեսը մեզ ավանդել է կոսմոգոնիան (տիեզերածնությունը), որի դրույթների ճշտությունը զարմանալիորեն հաստատվում է օրեցօր»:⁹

Ս. Գիրքն ամբողջ հոգով էր սիրում հռչակավոր բնախույզ Ֆարադեյը (1791-1867), որը զբաղվում էր Աստվածաշնչի գրքերի մեկնությամբ: Մի անգամ «Արցունքի քիմիական անալիզը» թեմայով ելույթ ունենալիս նա ի դեպ ասել է, թե ինչպես արցունքներն են բխում սրտից եւ ուղղվում դեպի սիրտ, այնպես էլ Աստվածաշունչը բխում է Աստծուց, եւ ով Աստծուց է, լսում է Նրա խոսքերը»:¹⁰

Ս. Գրքի երկյուղալից ընթերցումը աղոթքով հանդերձ մեծ փիլիսոփա-բնագետ Ռոբերտ Մայերի (1814-1878) (որը հայտնագործել է էներգիայի պահպանման օրենքը իր ժամանակակից իմաստով) ամենօրյա զբաղմունքներից էր: 1840-ին Արեւելյան Հնդկաստան կատարած ծովային ճամփորդության ընթացքում նա գրում է հարազատներին.

«Մարտի 9-ին ես կարող էի իմ գրքերով լի արկղը վերցնել նավի տախտակամածերի միջեւ գտնվող ծանրոցատեղից... Հանդիսավոր տեսքով ես վեր բարձրացրի Ս. Գիրքն ու աղոթարանը, որոնց ամենից շատ էի կարոտել, եւ որոնք ամեն օր մի քանի ժամ քաղցրություն են ինձ պարգեւում: Աշխարհիկ ունայնությունից հեռացած սիրտը ողջ գորությամբ իրեն տրամադրում է աղոթելու, եւ ապրելով վեհաաքանչ բնությամբ՝ չես տեսնում ուրիշ առավել հրաշալի բան, քան սեփական անձդ առ Արարիչ բարձրացնելը»:¹¹

⁹ St'e Bettels, 5Nauka i Bibl] [%, էջ 107

¹⁰ Pestalozzi, Die christliche Lehre in Beispielen. Neue Folge, Ss. 37-38

¹¹ Kleinere Schriften und Briefe R. v. Meyers, herausgegeben von Dr. Jak. Weyrauch. Stuttgart 1893, էջ 92

Հայտնի ակադեմիկոս Կ. Է. Բերը (1792-1872), որը նոր ուղիներ է հարթել մարդաբանական եւ կենդանաբանական ուսումնասիրությունների բնագավառում, միշտ մեծ ակնածանք է տածել Ս. Գրքի հանդեպ: Իր աշխատություններից մեկում նա գրում է.

«Մովսեսի շարադրած արարչագործության պատմության վրա հարձակումները զավեշտորեն ժամանակավրեպ են, քանզի նորագույն բնագիտությունը վաղուց արդեն ապացուցել է դրանց սնանկությունը: Եթե այս պատմությունն ընդունենք ոչ լրիվ տառացիորեն, այլ միայն՝ ամենաէականը, ապա պետք է խոստովանել, որ հնուց մեզ չի հասել առավել վեհ պատմություն, քան այս, եւ հազիվ թե նման բան իսկ լիներ»:¹²

Դիտարկելով մարդկային ցեղի հնության հարցը՝ Բերն արտահայտվում է հոգուտ սուրբգրային տվյալների.

«Եթե նորագույն ժամանակների որոշ բնագետներ կամենում են մարդկային ցեղի գոյությունը թվարկել նույնիսկ հարյուր հազարավոր կամ միլիոնավոր տարիներով, ապա այդ կարծիքը բուրոգովին անհիմն է... Ես եզրակացնում եմ, որ մարդկությունը չի կարող լինել ավելի հին, քան ըստ Աստվածաշնչի է»:¹³

Ռուդոլֆ Վագները (1805-1864)՝ ականավոր կազմախոսներից եւ բնախոսներից մեկը, իր «Պայքար հանուն հոգու» աշխատության մեջ ասում է.

«Անտարակույս, Աստվածաշնչի ամենաաքանչելի յուրահատկությունն այն է, որ անշեղորեն զորացնում է համոզվածությունը իր աստվածաշնչականության՝ աստվածային ծագման նկատմամբ այն մարդու համար, ով ճշմարիտ նախանձախնդրությամբ եւ կատարյալ անձնվիրությամբ խորանում է

¹² Studien aus d. Gebiete der Naturwissenschaften. St. Petersburg 1876, էջ 465

¹³ Նույն տեղում, էջ 411-412

նրա մեջ եւ նրանով ստուգում իր ներքին ու արտաքին ապրումները»:¹⁴

Գերմանացի հռչակավոր փիլիսոփա-բնագետ Ֆեյսները (1801-1887) խորին համոզմունք ուներ մարդկության համար Աստվածաշնչի անանց մեծ նշանակության նկատմամբ: Նա խանդավառությամբ գրել է.

«Եթե Աստածաշունչը քննենք մարդկորեն, ապա ի՞նչն է նրա մեջ հաստատուն, ի՞նչն է, որ այն ծաղրի առարկա չի դարձնում բերանբացների համար, ինչպե՞ս է այն դեռեւս կարողանում պահել իր տեղը գրքի հարուստ շուկայում՝ հրաշալի, նորերս գրված, մարդկային հստակ իմաստությամբ լեցուն, խիստ տրամաբանորեն մեկը մյուսից բխող եւ հստակ ապացուցված դրույթներով աշխատությունների մեջ: Արդյոք ի վիճակի՞ է համեմատվել նրանցից գոնե մեկի հետ: Այսուհանդերձ, բոլոր ստեղծագործություններն էլ՝ ամենահրաշալի, ամենաիմաստուն եւ իրենց ուսմունքի հավերժությամբ հպարտացող, ոչնչանում են՝ իրենց տեղը զիջելով ուրիշ, նոր վարդապետություններ բովանդակող գրքերին: Իսկ Աստվածաշունչը՝ հնագույն Գիրքը, կա եւ մնալու է, եւ նրան հատուկ Քրիստոսի Հոգին, որպես տեր եւ պահապան, հավիտյանս հավիտենից ուրախացնելու եւ բժշկելու է նրանց, ովքեր Աստծո խոսքից հեռու, շատ երկար թափառելուց հիվանդ եւ ուժասպառ՝ գալիս են իր մոտ»:¹⁵

Նշանավոր աստղագետ Ի. Մեյլերի (1794-1874) մասին, որի աստղագիտության գրքի բնաբանում բերված են Դավիթ Սաղմոսերգուի այս խոսքերը՝ «Երկինքը պատմում է Աստծո փառքը» (Սաղմ. ԺԸ 2), պատմում են, թե նոր բնակարան տեղափոխվելիս նա ամենից առաջ իր ձեռքով տարել է Աստվա-

¹⁴ Der Kampf um die Seele vom Standpunkt der Wissenschaft. Göttingen 1857, էջ 124

¹⁵ Zendavesta oder N̄ber die Dinge des Himmels und des Jenseits 1851, I, էջ 322

ծաշունչը՝ ասելով. «Այս գիրքը մյուս գրքերից առաջ պետք է մտնի իմ տուն»:¹⁶

Ըստ ամերիկացի երկրաբան Ղանի (1813-1895)՝ բնական գիտություններն իրենց գլխավոր դրույթներում համամիտ են Մովսեսի տիեզերածնությանը: Այստեղից էլ նա եզրահանգում է, որ Աստվածաշունչը ոչ թե մարդկային, այլ աստվածային ծագում ունի: Նա գրում է.

«Կարելի է եզրակացնել, որ եթե Մովսեսի վավերագիրը հավաստի է (իսկ այն հավաստի է, քանի որ Ս. Գրքի՝ տիեզերածնության իրադարձությունների հաջորդականությունն ըստ էության համահունչ է երկրաբանական տվյալներին), ապա այն աստվածային ծագում ունի: Բանն այն է, որ մարդկային միտքը այդ իրադարձություններին ականատես չի եղել եւ չէր էլ կարող հորինել աշխարհի նախնադարյան տարիքի վերաբերյալ փաստերի այդպիսի դասավորություն, եթե օժտված չլիներ գերբնական խորաթափանցությամբ: Արեւի՝ երկրագնդի լույսի աղբյուրի արարումը նա երբեք չէր դնի լույսի արարումից բավական երկար ժամանակ անց, այսինքն՝ չորրորդ օրը, եւ որ նույնքան զարմանալի է՝ բույսերի ու կենդանիների արարման միջեւ, թեպետեւ այս լուսատուն նույնքան կենսական է ե՛ւ առաջինների, ե՛ւ վերջինների համար: Ոչ ոք չէր կարողանա հասնել փիլիսոփայության այնպիսի խորության, որը նկատվում է այստեղ ամենուր... Իր կտավում արարչագործությունը մեզ համար պատկերող սուրբ-գրային պատումը խորապես փիլիսոփայական է: Այստեղ ամեն ինչ ճշմարիտ է եւ աստվածային: Ահա Ս. Գրքի առաջին իսկ էջի ապացույցն այն բանի, որ արարչագործությունն ու Աստվածաշունչը միեւնույն Աղբյուրից են: Մեծ Հեղինակի երկու գրքերի միջեւ չի կարող իրական տարածայնություն լինել: Թե՛ մեկը, թե՛ մյուսը մարդկությանը Նրա կողմից շնորհված հայտնություններ են»:¹⁷

¹⁶ Pestalozzi, Die christliche Lehre in Beispielen, էջ 53

¹⁷ Manual of geology. Newyork 1876, էջ 767-770

Աստվածաշունչը բարձր է գնահատում Վիեննայի համալսարանի հանքաբանության եւ երկրաբանության պրոֆեսոր Վ. Վազենը (մահ. 1900)՝ ժամանակակից ամենահռչակավոր հնէաբաններից մեկը: Տիեզերքի խնդրին վերաբերող իր հողվածում նա գրում է.

«Գիտնականը պետք է համաձայնի, որ աշխարհի արարման մասին [աստվածաշնչական] պատմությունը ոչ միայն շարադրված է այնպես, որ հազարամյակների ընթացքում սնի ինչպես առանձին անհատների մատաղ զգացմունքը, այնպես էլ մանկական հասակում գտնվող ժողովուրդներին եւ նրանց համար միջնորդ ծառայի բարձրագույն ճշմարտությունների ճանաչման հարցում, այլեւ հազարամյակներ անց էլ այն պարունակում է ցուցումներ, որոնք կարող են միայն հաստատվել՝ կապված գիտելիքի մյուս բնագավառներում գիտական պրատունների ահռելի ջանքերի հետ: Գրական առավել մեծարժեք եւ փառահեղ ստեղծագործություն երբեւէ գոյություն չի ունեցել հնագույն ժամանակներից ի վեր»:¹⁸

Նորագույն ժամանակների հռչակավոր երկրաբաններից մեկը՝ մեծ տյուրինգենացի Կվենշտեդտը (մահ. 1889), գրում է.

«Այս Գիրքը (Ծննդոցը՝ աշխարհի արարման պատմությունը) այնքան ճշմարիտ է, որ մենք, իբրեւ հարգանք հնագույն տեսակետի հանդեպ, համարձակվում ենք այսօր էլ պնդել, որ Մովսեսը մեծ երկրաբան էր, որտեղից էլ նա քաղած լիներ իր երկրաբանական տեղեկությունները: Նրա պնդումը, թե երկրի վրա նախ եւ առաջ բուսականությունն է գոյացել, չի կարող ժխտվել, որովհետեւ հենց ջրային բույսերն են պատկանում ստորին դասին»: Այնուհետեւ Կվենշտեդտը բացականչում է չորրորդ օրը արեգակի արարման առնչությամբ. «Որքա~ն ճիշտ է այդ: Չէ՞ որ երկրագունդը, որ համեմատաբար փոքրա-

¹⁸ Natur u. Offenbarung. 1898, XLIV

մարմին է, պետք է արարվեր հսկայական չափեր ունեցող մարմնից՝ արեգակից առաջ»:¹⁹

Ամերիկացի անվանի գիտնական, երկրաբան Ջոն Դաուսոնը (1820-1901) շատ ձիգ ու ջանք է գործադրել գիտությունը Աստվածաշնչի հետ հաշտեցնելու, նույնքան էլ՝ երկրաբանական տվյալներն այս ուղղությամբ ժողովրդականացնելու համար: Նա այսպես է արտահայտվել աստվածաշնչական տիեզերածնության մասին.

«Ով էլ, երբ էլ փորձեր շարադրել տիեզերքի պատմությունը, այդ փորձն ավելի վսեմ ու արժեքավոր չի կարող լինել, քան աշխարհի արարման սուրբգրային պատումը»:²⁰

Վերջերս մահացած անվանի պրոֆեսոր բնագետ Դրուսոնդը (մահ. 1897) երբեմն դիմում էր ընկերներին իր հետ աղոթելու եւ իր համար նորկտակարանյան որեւէ հատված բարձրածայն ընթերցելու խնդրանքով: «Չէ՞ որ դա միակ գիրքն է, - ասում էր նա Նոր Կտակարանի մասին, - որին միշտ դիմում ես վերստին»:²¹

Պրոֆեսոր Թոմաս Հեքսլին (1825-1895)՝ խոշորագույն բնագետ-դարվինիստներից մեկը, ուշագրավ տողեր ունի Ս. Գրքի վերաբերյալ.

«Ուշադրություն դարձրեք այն մեծ պատմական փաստի վրա, - նկատում է անգլիացի գիտնականը, - որ երեք հարյուրամյակի ընթացքում այս Գիրքը (այսինքն՝ Աստվածաշունչը) սերտորեն ամնչվել է այն ամենի հետ, ինչն Անգլիայի պատմության մեջ լավագույնի եւ ազնվագույնի համարում ունի: Ուրիշ ո՞ր գրքի ուսումնասիրության միջոցով կկարողանայինք այսքան մարդասիրաբար ներգործել երեխաների վրա եւ ստիպել նրանց զգալ, որ յուրաքանչյուրն արժանի է հավիտենական

¹⁹ Die Schöpfung der Erde und ihre Bewohner. էջ 8,27

²⁰ Մեջբերումը՝ ըստ N. P. Rohdestvenskij, 5Xrist]anska[apologetika%, գ. II, SPb, Á××Ô, էջ 208-209

²¹ Smith, Leben Drummonds, էջ 436

օրհնության կամ հավիտենական անեծքի՝ ըստ բարին գործելու եւ չարն ատելու իր գործադրած ջանքերի... Ես չեմ ասում, թե Ս. Գրքում արծարծված բարձրագույն իդեալն ինքնին բացառում է մյուսները կամ որեւէ այլ լրացումների կարիք չունի:՝ Սակայն խորապէս հավատում եմ, որ մարդկությունն այսօր անկարող է ապրել առանց Գրքի եւ թերեւս երբեք էլ չկարողանա»:՝²²

Անցյալ դարի վերջում Ֆրանսիայում վախճանվեց հանրահռչակ բնագետ, նշանավոր քիմիկոս եւ բնախոս Լուի Պաստյորը (1822-1895): Նա շատ էր սիրում եւ մեծարում Աստվածաշունչը, մանավանդ՝ Աստծո նորկտակարանյան խոսքերը: Իր համբավի գագաթնակետում նա գրել է. «Երջանիկ է նա, ով ծառայում է ավետարանական առաքինությունների իդեալին: Ահա՛ մեծ խորհուրդների եւ սխրանքների աղբյուրը»:՝²³

Պաստյորի մասին պատմում են, թե մի անգամ նրա աշակերտներից մեկը իր հանձարեղ ուսուցչին հարցնում է, թե ինչպէս նա՝ մեծ գիտնականը, մտքի գերլարված աշխատանքից եւ այնքան գիտական պրպտումներից հետո էլ դեռեւս հավատում է Ս. Գրքի վարդապետությանը: Պաստյորը հրաշալի պատասխան է տալիս. «Քանի որ մտածել եմ եւ ուսումնասիրել, այդ իսկ պատճառով մնացել եմ բրետոնացուն վայել հավատացյալ: Իսկ եթէ առավել խորհեի ու զբաղվեի գիտություններով, ապա կդառնայի այնպիսի հավատացյալ, ինչպիսին բրետոնացի գեղջկուհին է լինում» (հայտնի է, որ բրետոնացիները հնուց ի վեր աչքի են ընկնում իրենց անսասան հավատով):

* Հարկ է նշել, որ գիտնականի այս միտքը աստվածաբանական առումով ճիշտ չէ: Աստծո խոսքն ինքը ճշմարտությունն է, որը մարդկային սին իդեալներով լրացվելու կարիք բնավ չունի: Իսկ եթէ Աստծո խոսքը չի բացասում մարդկային վարդապետությունները, ապա դա քրիստոնեական հանդուրժողականության հետեւանք է:

²² Essays on controverted questions, էջ 51-53 (տե՛ս F. Ball[rd, 5Qudesanever][%, էջ 71-72)

²³ Տե՛ս h. 5Vera i Razum9%, 1901, N 9, էջ 370

Մահվան վերջին րոպեներին ֆրանսիացի գիտնականը, դոդոջուն ձեռքերով բռնելով պղնձե ոչ մեծ խաչը, հոգին ավանդում է աստվածային Հայտնության ճշմարտությունների հավատո հանգանակի խոստովանության խոսքերով:²⁴

Գերմանացի ժամանակակից գիտնական, բնագետ Բետեքսը ասում է.

«Աստվածաշունչը կենաց ծառն է, որի վեհասքանչ եւ մըշտադալար կատարի միջով մերթ մեղմ, մերթ փոթորկալից երկնային հոգեւոր քամիներ են փչում: Աստվածաշունչը պտուղներով ծանրաբեռնված ծառ է, որոնք մեղքով թունավորված մարդուն բշկություն, զորություն, առողջություն եւ հավիտենական կյանք են պարգեւում: Այն սարսափելի եւ միաժամանակ հաճելի գիրք է՝ երկնային խաղաղությամբ լեցուն, գերիվեր ամեն մտքից, ամենակարող Աստծո կայծակներով ու որոտներով լի, Ով հալեցնում է ժողովուրդներին, ինչպես բրուտն իր կճուճները, եւ Ուն առջեւ նրանք ասես կաթիլ լինեն՝ դույլից կախված: Ամենանուրբ ու սրտառուչ մխիթարություններով եւ աստվածային խոստումներով լեցուն այս Գիրքը կերակրում է փոքրիկ թռչնակներին, հաշվում մեր գլխի մագերը եւ խեղճ մոր աղոթքով խաղաղ գիշեր պարգեւում նրա հիվանդ երեխային: Այն մի գիրք է, որը դյուրությամբ պատասխանում է մարդկությանը հնուց ի վեր հուզող ամենից խորախորհուրդ հարցերին. այն պոեմ է եւ էպոս՝ այնքան վեհասքանչ եւ համապարփակ, այնքան խոր ու վսեմ, ինչպիսին երբեք չի գրվել մարդկանց կողմից»:²⁵

Բետեքսի «Աստվածաշնչի առաջին էջը» աշխատության մեջ կարդում ենք.

«Յուրաքանչյուր մարդ առանձին, ինչպես նաեւ բովանդակ մարդկությունն ամբողջությամբ վերցրած, կանգնած է երկակի

²⁴ “Revue des quest. scient. XXXIX”, Louvain 1896, էջ 385-387. տե՛ս նաեւ Apolog. Rundschau 1908 Aug., էջ 423.

²⁵ Die Bibel Gottes-Wort. Stuttgart 1903, էջ 43

հարցի առջեւ՝ ո՞վ ենք մենք եւ ո՞ւր ենք գնում: Սակայն Տերը, որ ստեղծել է մարդու սիրտը եւ գիտե նրա բոլոր հարցերը, տալիս է դրանց պատասխանները Իր խոսքում: Մովսեսի առաջին գիրքը՝ Ծննդոցը, պատմում է, թե որտեղից ենք սերել, իսկ Աստվածաշնչի վերջին գիրքը՝ ս. Հովհաննես առաքյալի Հայտնությունը, ցույց է տալիս, թե ուր ենք գնում...

«Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծն. Ա 1). որքա՜ն վեհորեն պարզ է հնչում... Սրանով իսկ Ս. Գրքի առաջին տողում մեզ համար բացահայտվում է այն տեսակետը, որը պետք է ընդունենք: Տերն Իր խոսքում վարվում է հանճարեղ գրողի պես, որն արագ ըմբռնում է երեւոյթի բուն էությունը եւ իր առաջին իսկ խոսքերում պարզաբանում այն, ինչ մտածում է: Այս առաջին խոսքերը մեզ հայտնում են, թե ինչի մասին է խոսվելու բովանդակ Աստվածաշնչում, այն է՝ վսեմի կամ վեհի եւ ստորի, երկնայինի ու երկրայինի մասին: Այս երկու հասկացությունների՝ «երկնքի ու երկրի» շուրջ է, այսպես ասած, պտտվում բովանդակ Աստվածաշունչը: Այն մեզ ցույց է տալիս, թե նրանք ինչպես էին ի սկզբանե գտնվում կատարյալ ներդաշնակության մեջ եւ ինչպես հետագայում մեղքի պատճառով բռնի զատվեցին, ինչպես Աստված հազարամյակների ընթացքում նախապատրաստեց նրանց վերամիավորումը, ինչպես են նրանք միավորված ի Հիսուս Քրիստոս, եւ ինչպես «մի օր երկիրը երկինք կդառնա, Նոր Երուսաղեմը կիջնի երկրի վրա, որպեսզի Տերը բովանդակի ամեն ինչ» (հմմտ. Հայտ. ԻԱ 1-2), ինչի մասին վկայում է Աստվածաշնչի վերջին գիրքն ու էջը»:²⁶

«Ես զբաղվում եմ գիտություններով,- գրում է անգլիացի աստղագետ Վիլյամ Աբնեյը (ծն. 1843)՝ երկնքի լուսանկարչության հեղինակավոր մասնագետը,- եւ պետք է անկեղծորեն ասեմ, որ Ս. Գրքի եւ բնագիտության միջեւ ոչ միայն թշնա-

²⁶ Perva[stranica Bibl]i. Perv. s9 n9m. Odessa Á»»°, էջ 3, 5, 7

մանք չկա, այլ գործ ունենք հենց հակառակ երեւոյթի հետ: Գիտութիւնը մեզ սովորեցնում է, որ բնութեան մեջ գոյութիւն ունեն հայտնի օրենքներ, իսկ որտեղ օրենքներ կան, այնտեղ պետք է լինի նաեւ Օրենսդիրը՝ Աստված: Բնական գիտութիւններով զբաղվողը համենայն դեպս պետք է երկյուղած մարդ լինի, քանզի այս գիտութիւններն ազդու կերպով մեզ ուսուցանում են, թե որքան հեռու ենք այդ Օրենսդիրն ճանաչելու»:²⁷

Այս միտքը հաստատվում է նաեւ Դուբլինի համալսարանի պրոֆեսոր Գ. Մակինտոշի կողմից.

«Որքան շատ եմ ուսումնասիրում Ս. Գիրքը՝ ճշմարիտ կրօնի հիմքը, այնքան առավել համոզվում եմ նրա աստվածային ծագման եւ հեղինակութեան մեջ: Եվ որքան խորամուխ եմ լինում արարչագործութեան այն մասում, որի հետ մասնագիտութեանս բերումով շփվում եմ առավելապէս, այնքան ավելի համոզվում եմ, որ արարչագործութիւնը կարող է բացատրվել միայն բնական Արարչի գոյութիւնն ընդունելու ճանապարհով, Ով անսահմանորեն գերազանցում է մեզ հայտնի անխտիր ամեն բան»:²⁸

Նույն կերպ է արտահայտվում նաեւ անվանի բուսաբան, Բրիտանական թանգարանի բուսաբանութեան բաժնի թանգարանապահ Վիլյամ Կարուտերսը.

«Ճշմարտութեանը դեմ է ասել, թե իբր գիտական հետազոտութիւններն ապացուցել են Աստվածաշնչի սնանկութիւնը: Ես չգիտեմ ճիշտ հասկացված որեւէ գիտական փաստ, որը հակասեր Ս. Գրքին: Մեր օրացույցներն ասում են մեզ, թե արեգակը ծագում է որոշակի ժամի. յուրաքանչյուրը գիտեմ, որ այդ սխալ է գիտական տեսանկյունից, բայց եւ այնպէս սա միակ եղանակն է՝ հասկացնելու մարդկանց, թե դա ինչ է նշանա-

²⁷ A. Tabrum, *Religjoznye verovanja v sovremennyye vremena*.
Per. s 9 angl. M. Á»ÁÜ, էջ 21

²⁸ Նույն տեղում, էջ 81

կում: Ահա այսպես կիրառելով նույն եղանակը (ընդ որում՝ ըստ անհրաժեշտության, քանզի արտահայտման ուրիշ՝ խիստ եւ գիտական եղանակի դեպքում Աստվածաշունչն անհասկանալի կլինէր մեծամասնության համար)՝ Աստվածաշունչը, որքան հասկանում եմ, գիտական սխալներ չի պարունակում»:²⁹

Ս. Գրքի մեծ հեղինակության առջեւ խոնարհվում է նաեւ մեր ժամանակի նշանավոր բնագետ, Անգլիայի Գիտությունների թագավորական քոլեջի երկրաբանության պրոֆեսոր Էդուարդ Գուլը, որը հավատում է, որ Ս. Գիրքն աստվածային հայտնություն է: Մեզ համար հետաքրքիր են նրա հետեւյալ խոսքերը.

«Քանի որ Ս. Գիրքը գրված չէ մարդկանց պատմություն եւ բնական գիտություններ ուսուցանելու նպատակով, այլ ի սկզբանե նախատեսվել է ժամանակակից հետազոտությունների արդյունքներին անժանոթ արեւելյան ժողովուրդների համար, ուստի բնագիտությանը վերաբերող նյութերի շարադրման լեզուն այնպիսին է, ինչպիսին պիտի լինէր՝ համապատասխանելու համար այն հասկացություններին, որ հատուկ են նրանց, ում հասցեագրված է խոսքը: Ժամանակակից հետազոտությունների արդյունքներին հասնելու հնարավորություն ընձեռվեց հաջորդ դարերի մարդկային բանականությանն ու փորձառությանը: Ուստի Ս. Գիրքը եւ գիտությունն ընթանում են զուգահեռ ուղիներով: Մարդկային բանականությանը մատչելի հարցերը պատկանում են իր իսկ ոլորտին, մինչդեռ Ս. Գիրքը մեկնաբանում է մարդու բնության բարոյական եւ հոգեւոր կողմերը, որոնք բանականությունն ի զորու չէ լուծել առանց կողմնակի օգնության:

Ինչ վերաբերում է Աստվածաշնչի պատմական գրքերի հավաստիությանն ու արժանահավատությանը, ապա ամենօրյա հայտնագործությունները հակված են վավերացնելու դրանք: Վերջերս Եգիպտոսում, Պաղեստինում եւ մյուս արեւելյան եր-

²⁹ Նույն տեղում, էջ 34

կըրներում կատարված ուսումնասիրությունները հաստատեցին հինկտակարանյան փաստերի՝ նույնիսկ աննշան մանրամասների աներկբա արժանահավատությունը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսին ամնչվող հինկտակարանյան մարգարեությունների (որոնք կանխասվել են Նրա հայտնվելուց դարեր առաջ), ինչպես նաեւ ազգերին ու հատկապես հրեությանը վերաբերող մարգարեությունների կատարումը համոզիչ կերպով ապացուցում է, որ այս մարգարեական խոսքերը հնչել են աստվածային ներշնչանքի ներգործությամբ: Ընդսմին, Ս. Գրքի վսեմագույն բարոյականությանն անհարիր է այն միտքը, թե մարգարեությունները կարող էին խաբեության արդյունք լինել: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի եւ Նրա առաքյալների վարդապետությունը իր մեջ կրում է աստվածային ճշմարտության դրոշմը»:³⁰

Գրինվիչի Թագավորական դիտարանի Արեգակնային բաժնի վարիչ, բազմաթիվ աստղագիտական աշխատությունների հեղինակ Է. Վ. Մաունդերը այնքան է հետաքրքրվում Ս. Գրքով, որ վերջերս հրապարակեց «Աստվածաշնչի աստղագիտությունը» խորագրով մի գիրք: Վիկտորիայի ինստիտուտում արտասանած իր «Աստվածաշունչը եւ աստղագիտությունը» ճառում անգլիացի գիտնականը՝ մեծ հավատավորն ու համոզված քրիստոնյան, բացահայտորեն հայտարարեց. «Ս. Գրքի առաջին տողերում շարադրված ճշմարտությունը՝ «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը», հանդիսանում է բովանդակ գիտության, ինչպես եւ բովանդակ կրոնի հիմքը»:³¹

Աշխարհագրագետներից հիշատակենք նոր ժամանակների մեծագույն գիտնական, ակադեմիկոս Կարլ Ռիտտերին (1779-1859), որը Ս. Գրքի էջերում շողարձակող երկնային լույսի խոնարհ մեծարողն էր: Նրան ամենուր ուղեկցում էր գրպանի Աս-

³⁰ Նույն տեղում, էջ 28-29

³¹ The Bible and Astronomy, էջ 20 (տե՛ս Tabrum9, Relig. verov. sovr. uqenyx9, էջ 118-119)

տվածաշունչը, եւ այն տողերը, որոնք նա կարելու էր համարում, ընդգծում էր կամ էլ գրում գրքի առաջաթերթի կամ վերջաթերթի վրա: * Այս գրառումները եզրափակվում են հետեւյալ խոսքերով. «Մենք զուր չէկանք այս աշխարհ, ուր հասունանում ենք այն աշխարհի համար»:³²

Իրենց գիտական աշխատություններով բնախույզներին հարում են բժիշկները, որոնց թվում հիշատակենք անվանի մանկաբարձ եւ վիրաբույժ Ջեմս Յունգ Սիմփսոնին (1811-1870): Նա գիտության մեջ իր անունը հավերժացրել է քլորոֆորմի անզգայացնող ազդեցությունը հայտնաբերելու եւ վիրաբուժական պրակտիկայում ներմուծելու համար: Դստեր կողմից գրված Սիմփսոնի կենսագրության մեջ հայտնվում է, որ բժիշկը քաջատեղյակ էր Ս. Գոքին սկզբից մինչեւ վերջ, եւ այն ուղեկցում էր նրան ամբողջ կյանքում: Մի անգամ այս հրաշալի վիրաբույժը եղբորորդու հետ զրուցելիս ասել է. «Գիտնականներից ու փիլիսոփաներից Ավետարանի դեմ կասկածի եւ առարկության ձայներ եմ լսել, սակայն ինքս երբեք, ոչ մի թույլ իսկ տարակույսներ չեմ ունեցել»:³³

Աստծո խոսքի շնորհական զորեղ ազդեցությունը ճաշակել է նաեւ XIX դ. մեծ բժիշկ, հանճարեղ վիրաբույժ եւ կազմախոս Ն. Ի. Պիրոգովը (1810-1881): Կասկածով ու անհավատությանը ակեկոծված՝ նա ներքին տազնապ էր ապրում եւ հանգիստ ու խաղաղություն որոնում: «Ես կարիք ունեի,- գրում է շնորհալի բժիշկն իր օրագրում,- հավատի վերացական, անհասանելի իդեալի: Եվ, ձեռքս առնելով Ավետարանը, որը երբեք չէի ընթերցել (իսկ ես արդեն 38 տարեկան էի), գտա իմ փնտրած իդեալը»: Քրիստոսի ուսմունքի մեջ խաղաղություն եւ

* Կարծում ենք, որ սովորական գրքերի օրինակով Աստվածաշնչում ընդգծումներ կամ գրառումներ անելը ճիշտ չէ: Պարզապես կարելի է դուրս գրել ուշագրավ տողերը կամ հատվածները առանձին թղթի վրա եւ պահել Ս. Գրքի մեջ:

³² Engel, Die gr1sten Geister N1b. d. h1chsten Fragen, էջ 48

³³ Tabrum9, Relig. verov. sovr. uqenyx9, էջ 102

մխիթարություն գտնելով՝ Պիրոգովը մինչեւ մահ երեխայի դուրահավատությանը էր ընդունում նորկտակարանյան վարդապետությունը: Իր առջեւ հառնող Ավետարանի աստվածային գեղեցկությանը զմայլված՝ նա վստահորեն ասում է.

«Յուրաքանչյուր քրիստոնյա համարձակորեն եւ որեւէ պատմական հետազոտության վրա ուշադրություն չդարձնելով պետք է պնդի, որ մահկանացուներից ոչ ոք չէր կարող հորինել եւ մանավանդ հասնել բարոյական զգացմունքի եւ կյանքի այնպիսի վեհության ու մաքրության, ինչպիսին պարունակում է Քրիստոսի վարդապետությունը: Անհնար է չզգալ, որ այն այս աշխարհից չէ: Հավատալով, որ Քրիստոսի վարդապետության հիմնական իդեալն իր անհասությանը կապրի հավերժ եւ Աստծո հետ ներքին հաղորդակցության միջոցով հավիտենապես կներգործի խաղաղություն փնտրող հոգիների վրա, նաեւ ոչ մի բոպե չենք կարող տարակուսել, որ այս ուսմունքին վիճակված է լինել իբրեւ անմար փարոս մեր առաջընթացի ոլորապտույտ ճանապարհին»:³⁴

Բնագետներից ու բժիշկներից դառնանք մեծ մաթեմատիկոսներին:

Հռչակավոր մաթեմատիկոս եւ փիլիսոփա, ֆրանսիական ոսկեդարի փայլուն գրող Բլեզ Պասկալը (1623-1662) անհուն սիրով ու ակնածանքով էր տոգորված աստվածային վարդապետության նկատմամբ: Նա անգիր գիտեր ողջ Աստվածաշունչը, բայց եւ այնպես մեծագույն երկյուղածությամբ էր ընթերցում այն: Պասկալը միեւնույն անձի մեջ խոր գիտնականության եւ նույնքան խոր հավատի զուգորդման ցայտուն օրինակ է: Իր ժամանակի գիտության բոլոր գաղտնիքների մեջ ներթափանցած եւ նրա հետագա հաջողություններին իր ոչ սակավ նպաստը բերած ֆրանսիացի մաթեմատիկոսը թշվառ կասկածների փոխարեն, որոնց ենթարկվում էին որոշ իմաստակ-

³⁴ Soqinen] [N. I. Pirogova, t. I, SPb. 1887 էջ 175-182

ներ գիտական սնափառությունից, իր ընդարձակ գիտելիքներից միմիայն նոր անսասան համոզվածություն քաղեց ավետարանական վարդապետության աստվածաշնչականության նկատմամբ: Պասկալը գրում է.

«Ավետարանը մխիթարում է մարդուն, ինչ վիճակում եւ պայմաններում էլ նա գտնվի: Քրիստոսն առինքնում է ողջ մարդկությանը: Առանց Նրա ուսմունքի մենք ոչինչ չգիտենք եւ ոչինչ չենք տեսնում ինչպես Աստծո, այնպես էլ մեր մեջ. առանց Քրիստոսի ամեն ինչ մեզ համար խավար է ու խառնաշփոթություն: Առանց Նրա վարդապետության մարդը մատնված է արատների եւ աղետների, մոլորության, խավարի, հուսահատության ու մահվան: Հետեւելով Քրիստոսի ուսմունքին՝ մարդիկ կարող են ազատվել այդ ամենից: Մեր բովանդակ առաքինությունն ու երանությունը ի Քրիստոս է: Առանց Քրիստոսի վարդապետության մարդիկ կհոշոտեին միմյանց, աշխարհը դժոխք կդառնար եւ կայլասերվեր»:³⁵

Փիլիսոփա-մաթեմատիկոսներից մեծագույնը՝ Իսահակ Նյուտոնը (1642-1727)՝ ձգողության օրենքի հայտնագործողը, Աստվածաշնչի նախանձախնդիր եւ խոնարհ ընթերցողն էր: Այս հրեշակավոր գիտնականը, որը հենց միայն Աստծո անունը լսելիս երկյուղածորեն հանում էր գլխարկը, խոր հավատ էր տածում Ս. Գրքի աստվածաշնչականության, նրանում շարադրված աստվածային Հայտնության գերբնական ծագման, սուրբգրային հրաշքների եւ մարգարեությունների հավաստիության հանդեպ: Այդ եւս վկայում Աստվածաշնչի ամենից դժվարըմբռնելի երկու գրքերի՝ Դանիել մարգարեի եւ ս. Հովհաննես Աստվածաբան առաքյալի Հայտնության՝ Նյուտոնի մեկնությունները:³⁶ «Մենք ունենք,- ասում էր նա,- Մովսես, մարգարեներ եւ առաքյալներ, նույնիսկ Իր՝ Հիսուսի խոսքը: Եթե

³⁵ А. И. Орлов⁹, Franc. uqenyj B. Paskal⁶. Ego hizn⁶ i trudy. M. Á××», էջ 104

³⁶ Observations upon the profecies of Daniel and the Apocalypse of John, 1733

չենք կամենում համաձայնել նրանց հետ, ապա արժանի ենք նույնքան քիչ ներման, որքան հրեաները»:³⁷

Այժմ դիմենք պատմաբաններին:

Նոր պատմագիտական դպրոցի հիմնադիր, գերմանացի ականավոր պատմաբան Լ. Ռանկեի (1795-1886) կենսագիրը հաղորդում է, որ պատմաբանը մահվան շեմին իր բոլոր մտքերը երկրային ունայնությունից ուղղեց դեպի հավիտենականը եւ ստիպում էր իր համար բարձրաձայն ընթերցել Ս. Գիրքը: Վերջին տողերը, որ նա խնդրեց կարդալ, հետեւյալ սաղմոսն էր.

Երբ Տերը Սիոնը վերադարձրեց գերությունից,
մենք մխիթարվեցինք:

Այնժամ մեր բերանները խնդությամբ լցվեցին,
եւ մեր լեզուները՝ ցնծությամբ... (Սաղմ. ՃԻԵ 1, 2):³⁸

Անգլիացի ականավոր պատմաբան Թոմաս Կարլեյը (1795-1881)՝ Անգլիայի ընդհանուր մտավոր զարգացման երախտավորներից մեկը, մի անգամ խոստովանում է ընկերոջը, որ սիրում է Աստվածաշնչի խոսքերն այնպես, ինչպես մայրն է երբեմնի սովորեցրել իրեն դրանք սիրել:³⁹

Շվեյցարացի նշանավոր պատմաբան Յոհ. Մյուլլերը (1752-1809) իր պատմագիտական հետազոտությունների ժամանակ 1782 թ. գրում է ընկերոջը՝ Կարլ Բոնետին, որի հետ մինչ այդ տարածայնություններ ուներ կրոնական հարցերի վերաբերյալ.

«Դուք սիրում եք ինձ, իմ թանկագին ու հարգարժան բարեկամ, բայց մի՞թե ավելի շատ չեք սիրի, երբ իմանաք, որ այսուհետեւ մեզ իրարից ոչինչ չի բաժանելու: Այն օրից, ինչ Կասելյուն եմ, ժամանակագրական հաջորդականությամբ ընթերցում եմ հին հեղինակներին ու քաղվածքներ անում, երբ ինձ ապ-

³⁷ Dennert, Religion d. Naturforscher, էջ 23

³⁸ Engel, Die gr1sten Geister N1b d. h1chsten Fragen, էջ 217-218

³⁹ Hand and Heart. 18 Febr. 1881. հմմտ. Osswald. Th. Carlyle

շեցնում է ինչ-որ հրաշալի մի բան: Չգիտեմ ինչու, երկու ամիս ամառ օրոշեցի կարողալ Նոր Կտակարանը, նախքան ձեռնամուխ կլինեի այն դարի ուսումնասիրությանը, որի ընթացքում այն գրվել է: Ինչպե՞ս ձեզ նկարագրեմ այն, ինչ գտա այնտեղ: Կաղուց է, ինչ չէի կարողացել այդ գիրքը, եւ նախքան ձեռքս վերցնելը նախապաշարված էի նրա նկատմամբ: Լույսը, որ Դամասկոսի ճանապարհին կուրացրեց ս. Պողոսին, չէր կարող նրա համար ավելի տարօրինակ ու զարմանալի լինել, քան ինձ համար, երբ ես հանկարծ հայտնաբերեցի բոլոր հույսերի իրականացումը, փիլիսոփայության բարձրագույն կատարելությունը, նյութական եւ բարոյական աշխարհի բոլոր հեղաշրջումների, կյանքի ու մահվան բացատրությունը: Ես տեսա, որ ամենազարմանահրաշ բանը իրականություն դարձավ ամենամանրան միջոցներով: Ես նկատեցի Եվրոպայում եւ Ասիայում կատարված բոլոր հեղաշրջումների աղերսները այս թշվառ ժողովրդի հետ, որին շնորհված էին խոստումները՝ այնպես, ինչպես կարելու փաստաթղթերը վստահվում են մեկին, ով չի կարող դրանք ո՛չ ընթերցել, ո՛չ էլ կեղծել: Ես տեսա, որ կրոնը հայտնվել է իր համար ամենաբարենպաստ պահին, ընդ որում՝ մի ճանապարհով, որով ամենից հուսալիորեն կարելի էր հասնել նրա ընդունելությանը... Ողջ աշխարհն ասես մի նպատակ էր հետապնդում՝ տարածել Փրկչի կրոնը, իսկ եթե այս կրոնն աստվածային չէ, ուրեմն ես ամենեւին ոչինչ չեմ հասկանում: Ոչ մի գրքում ոչինչ չէի կարողացել այդ մասին, սակայն ուսումնասիրելով հնագույն ժամանակները՝ ցայսօր միշտ զգացել եմ ինչ-որ բանի պակաս, որն էլ փարատվեց միայն Տիրոջը ճանաչելուց հետո: Նրա հետ ինձ համար անբացատրելի ոչինչ չկա»:⁴⁰

⁴⁰ Werke XV, 315. ըստ Xr. & Ltard, 5Apologj[xr]stianstva%, SPb. Áx»Û, էջ 804

Պատմաբան Ի. Ֆ. Բեներին (1795-1863) ապշեցնում էր Աստվածաշունչ Մատյանի բոլոր գրքերի կուռ եւ զարմանալի միասնությունը: Այս առիթով նա գրում է.

«Թեւեւ Ս. Գիրքը գրվել է տարբեր հեղինակների կողմից, վայրիվերո եւ դժբախտ դարերի ընթացքում, չնայած նրանում ամփոփված մտքերի անսպառ հարստությանն ու շարադրանքի ձեւերի գերառատ բազմազանությանը, այնուհանդերձ կուռ ամբողջություն է ներկայացնում, այնպես որ յուրաքանչյուր նախորդ գիրք նախապատրաստում եւ կանխասում է հաջորդը: Վերջինս էլ հավելում եւ լրացնում է բոլոր նախորդները, այնպես որ Աստվածաշնչի ամեն մի գիրք, որպես սորիտի* անհրաժեշտ անդամ, իր որոշակի տեղն ունի գրքերի բաժանված եւ հազարամյակների ընթացքում չխախտված ամբողջության օրգանիզմում: Նմանվելով ցորենի ցողունի աճին, ուր ոչ մի հատիկ, ոչ մի հանգույց պատահաբար չի գոյանում, յուրաքանչյուր գիրք, ըստ միասնական արմատի կենսական օրենքի, կազմում է կենդանի օրգանիզմի անքակտելի եւ անհրաժեշտ մասը»:⁴¹

Բարձր էր գնահատում Ս. Գրքի՝ իբրեւ աստվածային մատյանի հեղինակությունը անվանի պատմաբան-արեւելագետ եւ հնէաբան Լենորմանը (1837-1883):

«Առաջին մարդկանց եւ մեր կրոնի սկզբնավորման պատմության մասին,- գրում է նա,- չկա առավել ստույգ եւ հաջորդական շարադրանք, քան այն, ինչ ամփոփված է Ս. Գրքում: Սա մարդկության համաշխարհային պատմության հիասքանչ ներածությունն է: Սա միակ հնագույն ավանդությունն է, որ զարդարված չէ երեւակայական դիցաբանությամբ»:⁴²

* Սորիտ (տրամ.) – սիլլոգիզմի՝ հավաքաբանության շղթայի կրճատված տեսակը: Հավաքաբանություն – մտահանգման ձեւ, որի մեջ տրված երկու դատողություններից (նախադրյալներից) բխում է երրորդը (եզրակացությունը):

⁴¹ Pestalozzi, Die christl. Lehre in Beispielen. ZŃrich, 1901, էջ 30-31

⁴² F. Lenormant, Manuel d'histoire ancienne. t. I, էջ 3

Ըստ Լենորմանի՝ Ծննդոց գրքի Ժ գլխի ազգագրական աղյուսակը «հնագույն, ամենաարժեքավոր եւ ամենակատարյալ փաստաթուղթն է հեռավոր անցյալում ժողովուրդների՝ աշխարհում սփռվելու վերաբերյալ... Պատմության ավանդությունների մանրագնին ուսումնասիրության, լեզուների համեմատության եւ զանազան ազգերի բնախոսական գծերի հետազոտության որոշ արդյունքները այս առումով լիովին համահունչ են Աստվածաշունչ գրքերի վկայություններին»:⁴³

Շնորհալի գիտնական, աշխարհահռչակ եգիպտագետ Գ. Բրուզին (1827-1894) բազում հաճելի հուշեր են կապում Ս. Գրքի հետ վաղ մանկությունից ի վեր: Ահա թե ինչ է նա ի միջի այլոց հայտնում այդ մասին.

«Պապիկիս ու տատիկիս տանը ամենամեծ հաճույքն ինձ պատճառել է բազմաթիվ պոլիտիպաժներով՝ զարդարված ընտանեկան Աստվածաշնչի ընթերցանությունը, որն իմ հմայված հայացքի առջեւ դյութական լույսի ներքո պատկերում էր Արեւելքի հին բնակիչների կյանքն ու գործերը: Ես չէի հոգնում մինչեւ իսկ ամենաաննշան մանրամասնությունների նկարագրությունը զննելուց, եւ նույնիսկ Աստծո Հոգին, Ում նկարիչը պատկերել էր մորուքով զարդարված եւ ծածանվող հագուստով ծերունու կերպարով՝ ջրերի վրա սլանալիս, անչափ առինքնում էր ինձ: Մեծարանքի արժանի Գիրք գրոցը, որին քաջատեղյակ եմ առ այսօր, հմայել էր ինձ: Նրան եմ վերագրում Արեւելքի ժողովուրդներին եւ երկրներին ծանոթանալու իմ առաջին բուռն ցանկությունը: Նա որոշակի ուղղություն է հաղորդել իմ ողջ հետագա կյանքին»:⁴⁴

Ասորա-բաբելական պատմության պրոֆեսոր Ն. Ա. Աստաֆեւը (1825-1906) Ս. Գրքի նշանակության մասին գրում է.

⁴³ Նույն տեղում, էջ 96-97

* Պոլիտիպաժ – փորագրանկար գրքի տեքստում սովորական խորագրերի՝ տիպական նկարների կլիշե:

⁴⁴ H. Brugsch, Mein Leben und Wandern. 2. Aufl., էջ 20

«Առանձին անհատի, ինչպես եւ բովանդակ ազգի համար կենսական խնդիր է՝ ինչպես է գնահատվում Ս. Գիրքը. բա՞րձր, թե՞ ցածր. երկնայի՞ն ծագում է նրան վերագրվում, թե՞ երկրային: Եթե երկրային... Եթե այն դիտվում է իբրեւ մարդկային մտքի ստեղծագործություն, ապա դա անդրադառնում է ամեն ինչի վրա. ամեն ինչ փոքրանում է, ապագան՝ սահմանափակվում, վսեմ ավանդությունները՝ կորսվում, բարոյական զգացմունքը՝ բթանում. միայն մամոնային ծառայելն է ընդլայնվում ու դրվատվում: Այլ է պատկերն այն ժողովրդի, որը բարձր է գնահատում Ս. Գիրքը իբրեւ Աստծո խոսք, ուր այն յուրաքանչյուր ընտանիքի սեղանի գիրքն է՝ թե՛ ազնվականի պալատում, թե՛ աղքատի խրճիթում, ուր ամեն օր «կենաց ջուր» են վերցնում այս կյանքի Աղբյուրից՝ «զօր ու գիշեր խորհելով Տիրոջ օրենքի մասին» (հմմտ. Սաղմ. Ա 1, 2): Եվ այդպիսի մարդը, այդպիսի ժողովուրդը, ըստ Սաղմոսերգուի խոսքի.

նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի,
որն իր պտուղը ժամանակին կտա,
իսկ նրա տերեւը չի թափվի,
ու ամեն բան, ինչ էլ որ անի, կհաջողվի նրան (Սաղմ. Ա 3):

«Ու՛վ թանկագին Աստծո խոսք,- այսպես է նա եզրափակում իր կարծիքը Աստվածաշնչի մասին,- այն մեզ շնորհական հաղորդակցությամբ միացնում է Նրան, Ումից բխել է: Այն հիմքն է մեր ապավինության: Որքան շատ ենք խորամուխ լինում Ս. Գրքի մեջ, այնքան ավելի ենք սիրում եւ գնահատում այն: Խոնարհ եւ նախանձախնդիր ընթերցողը այստեղ ճշմարտապես ու էապես ճանաչում է Աստծուն եւ իր Փրկչին: Իսկ այդպիսի ճանաչողության մեջ մեր փրկությունն է»:⁴⁵

Անվանի պրոֆեսոր Մ. Ն. Պետրովը (մահ. 1888) իր «Ավետարանը պատմության մեջ» ակնարկում, խոսելով քաղաքա-

⁴⁵ Posobje k9 razumnomu qtenj1 Biblii. M. Áx», էջ 49-50

կըրթության վրա քրիստոնեության ազդեցության մասին, նկատում է.

«Ավետարանն իր վրա չի կրում ո՛չ տեղային, ո՛չ էլ ազգային կնիք: Այն սկզբնավորվել է ոչ թե զգայական եւ նյութական տպավորություններից, այլ՝ ի վերուստ շնորհված հոգեւոր լուսավորումից... Ամենուր գործուն սեր եւ ժողովուրդների միջեւ հոգեւոր եղբայրություն ներշնչելով՝ Ավետարանն առհավետ եւ ամուր հաստատեց համաշխարհային քաղաքակրթության գաղափարն իր անսպառ ապագայով հանդերձ: Այն հնարավոր դարձրեց համընդհանուր օգտին ուղղված համատեղ աշխատանքը, որով այժմ սերտորեն շաղկապված են իրար ամենահեռավոր երկրներն ու մարդկության ամենաբազմազան ցեղերը... Այն ոչ միայն առաջադիմության թշնամին չէ, ինչպես երբեմնի կարող էր թվալ միջնադարյան կաթոլիկ կղերականության շահախնդի մեկնություններում, այլեւ ընդհակառակը՝ իր մեջ ամփոփում է առաջադիմության պայմաններն ու նախադրյալները: Բավական էր Աստծո ճշմարտությանը կարոտած ժողովուրդներին Ս. Գիրքը կորզել անարժան ձեռքերից՝, եւ XVI դարից սկսված մարդկային մտքի սրընթաց հաջողությունները անմիջապես ապացուցեցին աշխարհին նրա բարձր կրթական դերը»:⁴⁶

Նշանավոր բեռլինցի պատմաբան, պրոֆեսոր, Պրուսիայի Գիտությունների ակադեմիայի անդամ Ա. Գարնակը այսպես է արտահայտվում Ս. Գրքի մասին.

«Ինչպիսի~ օրհնություն բերեց այս գիրքը Եկեղեցուն: Իբրեւ խրատի, մխիթարության, իմաստության եւ համերաշխության գիրք՝ այն անչափ մեծ ազդեցություն է ունեցել կյանքի եւ ջատագովության վրա: Հունա-հռոմեական աշխարհում քրիստոնեությանը հանդիպած ո՞ր կրոնը կարող էր պարծենալ նման

* Խոսքը վերաբերում է Կաթոլիկ Եկեղեցուն որոշ ժամանակ Ս. Գրքի ընթերցանության արգելմանը:

⁴⁶ Evangelje v istorji. M. Á»»»», էջ 19, 26, 30

հարստությամբ:⁴⁷ Աստվածաշունչն անսպառ է: Այն հին, միջին եւ նոր դարերի գիրքն է: Նրա համեմատ ի՞նչ են Հոմերոսը, Վեդաներն ու Ղուրանը: Ամեն անգամ, երբ որեւէ անհատի թույլատրվում էր մեկ անգամ եւս լիաձեռն քաղել Ս. Գրքից, մարդկությունը ելնում էր ամենաբարձր աստիճանին... Հին եւ մանավանդ Նոր Կտակարանները բանալի են հանդիսանում յուրաքանչյուր կրոնապատմական խնդրի ըմբռնման համար»:⁴⁸

Հիշատակենք նաեւ արդարադատության բնագավառի որոշ ներկայացուցիչների:

Ժամանակակից հռչակավոր իրավաբաններից մեկը՝ Պետական խորհրդի անդամ Ա. Օ. Կոնին, որը հայտնի է դարձել առավելապես իբրեւ դատական ատենաբան, ասում է, թե Ավետարանը միշտ անջնջելի ազդեցություն է թողնում իր մտքի ու զգացմունքների վրա. եւ տարեցտարի Ավետարանում նորանոր զեղեցկություններ է ինքը բացահայտում, իսկ յուրաքանչյուր ավետարանական խոսք իր կյանքին զուգընթաց դառնում է առավել ծանրակշիռ, հասկանալի, նվիրական ու բերկրալի:⁴⁹

Մեկ ուրիշ իրավաբանի՝ հայտնի դատապաշտպան Լ. Վ. Ստասովի հուշերում կարդում ենք.

«5-6 տարեկանից ի վեր միշտ ընթերցել եմ Ավետարանը: Կարելի է ասել, որ դա այնժամ (հատկապես մինչեւ 17 տարեկանը) եւ ավելի ուշ ինձ վրա ներգործած տպավորություններից եւ ազդեցություններից ամենազորեղն էր»:⁵⁰

Գալով փիլիսոփաներին՝ առաջին տեղը կհատկացնեինք նոր ժամանակների ամենահռչակավոր փիլիսոփա Իմանուիլ

⁴⁷ Su\most6 xrist]anstva. Perv. s9 nem. V. i M. Bl1m9. M. Á»»Ö, էջ 127

⁴⁸ Neue Preussische Zeitung. 1901 Nr. 306

⁴⁹ Mnen][russkix l1dej o luqwix9 knigax9 dl[qten][. Izd. M. M. Lederle, 1895, էջ 69

⁵⁰ Նույն տեղում, էջ 48:

Կանտին (1724-1804): Նա պատվում էր Աստվածաշունչը եւ այն համարում կրոնի օժանդակության եւ պահպանության լավագույն միջոց, որը հիրավի բարելավում է մարդկանց հոգիները, ինչպէս նաեւ՝ բավարար միջոց այս նպատակին հասնելու՝ ոչ միայն իր ժամանակի, այլեւ հավիտյանների համար: Ուստի երբեք նա իրեն թույլ չէր տալիս ծաղրել Ս. Գիրքը եւ գտնում էր, որ անօգուտ ու թեթեւամիտ հարծակումները Աստվածաշնչի վրա բնավ չեն նսեմացնում նրա արժեքը: Կանտը գրում է.

«Հանդուգն իմաստունները երեւակայում են, թե իրենք արդեն իսկ գերազանցել են մեր ունեցած Աստվածաշունչը, որը եկեղեցական հավատի առաջնորդն է: Անկարելի է, որ նրանք ստեղծեն եւ այն փոխարինեն մեկ այլ գրքով՝ այն դեպքում, եթե այն կորցնէր իր վարկը: Բացահայտ հրաշքներ չեն լինում երկրորդ անգամ միեւնույն գործում»:⁵¹

Այս մտածողը՝ փիլիսոփայության մեջ քննադատական ուղղության հիմնադիրը, մեծ ակնածանք էր տածում Ավետարանի հանդէպ: Մի առիթով նա իր ժամոթներից մեկին՝ Յունգ Շտիլինգին գրում է. «Ճիշտ էք անում, որ սփոփանք էք փնտրում Ավետարանում, քանզի այն անսպառ աղբյուրն է բոլոր ճշմարտությունների, որոնք անհնար է գտնել որեւէ այլ տեղում, թեկուզ եւ բանականությունը պրպտի իր ամբողջ ոլորտը»:⁵²

Յակոբին ուղղած նամակում Կանտը գրում է. «Կարելի է համաձայնել, որ եթե Ավետարանը չուսուցանէր համընդհանուր բարոյական օրենքներն իրենց ողջ մաքրությամբ, ապա բանականությունն առ այսօր այսպիսի խորությամբ հասած չէր լինի դրանց»:⁵³

⁵¹ Ըստ “Geschichte d. protest. Theologic” Frank’a, Th. III. 1875, 5. 226
©5Xrist]anska[apologetika% N. P. Rohdestvenskogo, գ. I.
էջ 86-87)

⁵² Allgemeine deutsche Biographie. Artikel Jung

⁵³ Jakobi’s Werke III, 322 (մեջբերումը՝ ըստ Fr. Gettinger, 5Apolog][
xrist]anstva%, գ. I, otd. 2, էջ 44

Մի առիթով քյոնիգսբերգյան իմաստասերը խոստովանել է. «Իմ ընթերցած բոլոր գրքերը, միասին վերցրած, ինձ այնքան չեն մխիթարել, որքան այս սաղմոսի խոսքերը.

Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով,
չեմ վախենա չարից, քանզի Ղու, Տե՛ր, ինձ հետ ես

(Սաղմ. ԻԲ 5):⁵⁴

Մի երիտասարդ աստվածաբան բողոքում էր հռչակավոր փիլիսոփա Ֆիխտեին (1762-1814), թե վերջինիս երկերում շատ բան անհասկանալի է մնում իր համար, եւ ինքը չի կարողանում դրանք յուրացնել: Այդժամ Ֆիխտեն, ձեռքը դնելով իր առջեւ բացված Հովհաննեսի Ավետարանի վրա, ասում է. «Ընթերցե՛ք Հովհաննեսի Ավետարանը: Այստեղ կգտնեք այն, ինչի մասին ես խորիում եմ. հետեւե՛ք դրան»: Ֆիխտեի այս խոստովանությունը մեզ համար առավել եւս կարելոր է նրանով, որ այն հնչել է փիլիսոփայի մահանալուց քիչ առաջ:⁵⁵

Աստվածաշնչի ընթերցանությունը սքանչելի բարոյական ու կենսարար ներգործություն է ունեցել անվանի փիլիսոփա եւ քրննադատ Յ. Համանի (1730-1788) վրա: Վերջինս իր ահռելի գիտելիքների եւ բացառիկ ընդունակությունների շնորհիվ ժամանակակիցների կողմից կոչվել է «հյուսիսային մոզ» եւ մեծապես ազդել իր դարաշրջանի լավագույն մտածողների՝ Հերդե-րի, Գյոթեի, Յակոբիի եւ ուրիշների վրա:

Ծառայության բերումով գտնվելով Անգլիայում՝ Համանը վատ միջավայր է ընկնում եւ, անկանոն կյանք վարելով, ծախողում ե՛ւ իր, ե՛ւ այլոց գործերը: Այս անելանելի վիճակում նա ընկնում է խոր վիատության մեջ: Փիլիսոփայի խոստովանությամբ՝ կրքերն այնպես էին տիրել իրեն, որ հաճախ նույնիսկ շունչ առնել չէր կարողանում եւ աղոթում էր մի ընկեր գտնել, որը կտա իր իսկ սրտի բանալին եւ առաջնորդող թելը իր բա-

⁵⁴ Engel, Die gr1sten Geister N1b. d. h1chsten Fragen, էջ 88

⁵⁵ Pestalozzi, Die christl. Lehre in Beispielen. ZNrich 1901, էջ 31

վիղի մեջ. որովհետեւ մարդկային բոլոր գիտական գրքերը նրա համար սոսկ թշվառ մխիթարիչներ էին: Նման սոսկալի վիճակում հայտնվելով եւ ոչ մի տեղ բարոյական աջակցություն չգտնելով՝ Համանը սկսում է ուշադիր ընթերցել Ս. Գիրքը եւ ապշում աստվածահայտ ուսմունքի ինքնատիպությամբ ու խորությամբ: Եվ միայն այստեղ է նա գտնում կյանքի՝ իրեն անհասկանալի շատ կողմերի բացատրությունը: Նա հանգում է այն եզրակացության, թե «յուրաքանչյուր փիլիսոփայական հակասություն եւ մեր գոյության ողջ պատմական առեղծվածը, նրա անթափանց գիշերը՝ terminus a quo եւ terminus ad quem», լուծվում են մարմնացյալ Բանի վկայություններով»:⁵⁶

Աստվածաշնչի ներգործությամբ խորին բարոյական հեղաշրջում է կատարվում փիլիսոփայի հոգում. նրա բանականությունը եւ սիրտը թրթափվում են ծանր ծածկույթից, նա կենդանանում է հոգով: Փիլիսոփային բարոյական կործանումից փրկած Աստվածաշունչը այլեւս ընդմիշտ դառնում է նրա իսկական եւ անբաժան ընկերը: Ըստ Համանի ուսմունքի՝ սուրբգրային պատմության յուրաքանչյուր պատում աստվածաշնչի մարգարեություն է, որը վերաբերում է բոլոր դարերին եւ իրականանում ամեն մարդու հոգում, իսկ Աստծո շուրթերից ելած յուրաքանչյուր խոսք հոգեւոր մտքերի եւ զգացմունքների զարմանահրաշ գուգորդում է:

Նորագույն ֆրանսիական ռացիոնալիզմի ներկայացուցիչ Ալբերտ Ռեյլը "Revue des deux mondes" ամսագրում հրատարակած իր հոդվածը եզրափակում է հետեւյալ հրաշալի խոսքերով.

«Աստվածաշունչը մնում է այնպիսին, ինչպիսին կա իրականում, այն է՝ մեր կրոնական ծագման անկործանելի կոթողն ու խոհեմ բարեպաշտության լավագույն սնունդը: Հենց նրանից է զգալի չափով ծագում նորագույն աշխարհը: Աստվածա-

* Սկզբնաժամկետ, որից պետք է հաշվել, եւ վերջնաժամկետ, մինչեւ որը պետք է հաշվել:

⁵⁶ Vera i Razum%, 1899 N 12, էջ 731-732

շունչը երբեք չի եղել առավել կատաղի ու դաժան քննադատության թիրախ, քան մեր օրերում, եւ երբեք նրա ազդեցությունը չի եղել այնքան մեծ, իսկ տարածումը՝ այնքան գործուն»:

Նույն հողվածում նա մի դեպք է պատմում:

Մի անգամ լուրջ մարդկանց ժողովում հարց է ծագում. դիցուք, մի մարդ դատապարտվում է ցմահ մեկուսի բանտարկության, եւ մինչեւ վերջին շունչը ո՛չ նրանից եւ ո՛չ նրան, ո՛չ որեւէ տեղից եւ ո՛չ էլ մի տեղ որեւէ լուր չի հասնելու: Ջրուցակցի փոխարեն նրան թույլատրվում է իր հետ մի գիրք վերցնել. ցանկացած գիրք, բայց ընդամենը՝ մեկ հատ: Ժամանակը կանցնի, տարիները կհաջորդեն իրար, սակայն գիրքը չի փոխվելու: Քանի անգամ էլ ընթերցի, ավարտելուց հետո կրկին ստիպված պիտի ձեռքն առնի այն: Այս դեպքում ո՞րն է ամենահարմար գիրքը: Գիրք, որ ժամանակի ընթացքում հաճախակի, նույնիսկ հարատեւ ու մշտական վերընթերցանությունից հետո չկորցնի իր հետաքրքրությունը, այլ, եթե հնարավոր է, ավելի ու ավելի հրապուրի նրան: Ժողովի բոլոր մասնակիցները, չնայած կրոնական հայացքների տարբերությանը (այստեղ ներկա էին թե՛ հավատացյալներ, թե՛ անհավատներ), համաձայնեցին, որ այդպիսի եզակի եւ բացառիկ գիրք կարող է ճանաչվել միմիայն Աստվածաշունչը»:⁵⁷

«Որքան շատ եմ ապրում,- հայտարարել է փիլիսոփայության եւ բարոյագիտության նշանավոր պրոֆեսոր Օրչարդը,- այնքան ավելի եմ հանդիպում Ս. Գրքի եւ գիտության միջեւ կատարյալ համաձայնությունը փաստող ապացույցների: Հատկապես բազմապատկվել եւ մեր օրերում էլ բազմապատկվում են հնագիտական փաստերը՝ իբրեւ Ս. Գրքի իսկության ապացույցների անվերջ շարան: Աստվածաշունչը ոչ միայն համահունչ է գիտության եզրահանգումներին, այլեւ նույնիսկ կանխում է այնպիսի գիտական ճշմարտություններ, որոնք

⁵⁷ “Revue des deux mondes”, 1864, 4

գիտնականներին հայտնի դարձան ավելի ուշ: Այդպիսին է, օրինակ, Հոբի գրքի ԻՉ 7-ի գիտական հայտնագործությունը»:⁵⁸

Ուկրաինացի մեծ մտածող, փիլիսոփա Գ. Ս. Սկովորոդան (1722-1794) Ս. Գրքին վերաբերվում էր խորին հարգանքով եւ այն բարձր դասում աշխարհի բոլոր գրքերից: Իր ժամանակակից Գուստավ Գեսս-դե-Կալվեի վկայությամբ՝ Սկովորոդան երբեք չէր բաժանվում իր եբրայական Աստվածաշնչից, որը գրեթե իր ողջ ունեցվածքն էր կազմում:⁵⁹ Ընկերներին հղած նամակներում ուկրաինացի փիլիսոփան հաճախ է խոսում «Սրբազնագույն Գրքի» հանդեպ իր սիրո մասին, որը լավագույնս հասկանալու համար նա նույնիսկ հնարավորին չափ եբրայերեն էր սովորել:⁶⁰ Սկովորոդան մշտապես քննում էր Ս. Գիրքը՝ հանդգնած, որ այն պատասխաններ է տալիս մարդկային հոգու բոլոր նվիրական հարցերին:

Իր աշխատություններից մեկում նա Աստվածաշունչն անվանում է «մեր մայր»,⁶¹ իսկ «Սոխակը, արտույտը եւ կեռնեխը» առակում ասում է. «Աստվածաշունչը մեր գերագույն ընկերն ու մերծավորն է, որը բերում է մեզ դեպի այն, ինչը միակ ամենաթանկագինն է եւ ամենասիրելին: Մեզ համար այն մեր նախնիների ավանդած պատգամն է, որ պահում է բարերարության գանձը»:⁶²

Ականավոր ռուս փիլիսոփա եւ հրապարակախոս Վ. Ս. Սոլովյովի (1853-1900) գրվածքներում հաճախակի հանդիպող սուրբգրային հղումները ուղղակի նշում են, որ հանձարեղ փի-

⁵⁸ Tabrum9, Relig, verovan][sovremenn. uqenyx9, էջ 107-108

⁵⁹ 5Ukrainsk]j vestnik9%, 1817, գ. VI, էջ 114

⁶⁰ Soqinen][G. S. Skovorody, sobranny[i redaktirovanny[prof. D. I. Bagal9em9. Xar6kov9, 1894, էջ 115, 131, 151, 153, 283 եւ այլն

⁶¹ 5Druhesk]j razgovor9 o duvevnom mir9%, էջ 146

⁶² Soqin. Skovorody, II otd., էջ 174. տե՛ս Մ. Krasnlk, 5Relig]ozno-filasofsk][vozvr9n][Skovorody%, h. 5Vera i Razum9%, 1890, N 16

լիստփան Ս. Գիրքը համարում էր իր աշխարհայացքի միակ աղբյուրը: Սոլովյովն առանձնահատուկ սիրով եւ արտասովոր ջանասիրությամբ էր քննում Ս. Գիրքը, որի հանդեպ նրա ականածալից վերաբերմունքը զարմացնում էր իր անկեղծությամբ: Նա սուրբ Ավետարանն ընդունում էր որպես մարդկային կյանքի միակ եւ անփոխարինելի կանթեղ, իսկ նրանում պատկերված Քրիստոսի նկարագիրը համարում էր յուրաքանչյուրիս այնքան մոտ խղճմտանքի լավագույն եւ միակ քննության միջոցը: Փիլիսոփան գրում է.

«Անձնական կամ հասարակական կյանքի համար նշանակալից որեւէ արարք վճռելուց առաջ արժե սեփական հոգում կյանքի կոչել Քրիստոսի բարոյական կերպարը, սեւեռվել նրա վրա ու հարց տալ, թե՛ կարո՞ղ էր Նա գործել այդ, կամ այլ խոսքով՝ կտա՞ Իր հավանությունը, կօրհնի՞ կատարել այդ, թե՞ ոչ: Բոլորին առաջարկում եմ քննության այս կերպը. այն չի խաբի: Բոլոր կասկածելի իրավիճակներում, եթե տակավին սթափվելու եւ մտածելու հնարավորություն կա, հիշեցե՛ք Քրիստոսին, պատկերացրեք, որ Նա ողջ է, ինչպիսին եւ կա, ու Նրա՛ն հանձնեք ձեր կասկածների ամբողջ բեռը»:⁶³

Հռչակավոր *լեզվաբանների* շարքում Ս. Գիրքը մեծապես պատվում եւ մեծարում էր անվանի գիտնական Մաքս Մյուլլերը (1823-1901): Նա գրում է.

«Չփակենք մեր աչքերը այն ամենի առջեւ, ինչն ազնիվ է, ճշմարիտ եւ հաճելի Արեւելքի այս սրբազան գրքերում: Սակայն պարզ հասկացնենք հնդիկներին, բուդդայականներին ու մահմեդականներին, որ Արեւելքում միայն մեկ սրբազան գիրք կա, որն ի գորու է սփոփել նրանց այն մեծագույն պահին, երբ նրանք կատարելապես միայնակ պիտի գնան անտեսանելի աշխարհ: Դա այն սուրբ գիրքն է, որ, անտարակույս, բովանդակում է ճշմարիտ եւ ամենայն ընդունելության արժանի լու-

⁶³ Sobran]e soqinen]j Vlad. Serg. Solov6eva. t. III, էջ 382

րը: Եվ այս լուրը միեւնույն նշանակությունն ունի անխտիր բոլոր մարդկանց համար, այն է՝ Հիսուս Քրիստոս եկավ աշխարհ՝ մեղավորներին փրկելու»:⁶⁴

Մանկավարժության աշխարհից նախ եւ առաջ վկայակոչենք նշանավոր մանկավարժ Յ. Ա. Կոմենսկուն (1592-1670): Նա ասում է, որ երեխաների մեջ բարեպաշտություն զարգացնելու համար անհրաժեշտ է նրանց վաղ մանկությունից ծանոթացնել Աստվածաշնչի բովանդակությանը.

«Երեխաները կյանքի հենց առաջին տարիներից պետք է վարժվեն զբաղվել բացառապես նրանով, ինչն անմիջականորեն բերում է Աստծո մոտ, այսինքն՝ Ս. Գրքի ընթերցանությամբ: Ըստ այդմ, Աստվածաշունչը պետք է լինի քրիստոնեական դրպրոցների Ալֆան եւ Օմեգան: Այդ դպրոցներում թող Աստծո գիրքը գլխավոր տեղը զբաղեցնի մյուս բոլոր գրքերի շարքում, այնպես որ Տիմոթեոսի օրինակով մանկուց Ս. Գիրք սովորած բոլոր քրիստոնյա պատանիները խրատվեն բարեպաշտության մեջ (Բ. Տիմ. Գ 15) եւ կրթվեն հավատի խոսքերով (Ա Տիմ. Դ 6)»:

Նորագույն մանկավարժության հիմնադիրը քննադատում է իր ժամանակի դպրոցներում տեղ գտած պատանեկության գրական կրթության եղանակը: Ըստ նրա՝ կա'մ քրիստոնեական դպրոցներից լիովին պետք է դուրս մղվեն հեթանոս հեղինակների գրվածքները, կա'մ էլ, ծայրահեղ դեպքում, կիրառվեն չափազանց զգուշորեն:

«Մեր երեխաները,- գրում է մեծ մանկավարժը,- ծնվել են երկնքի համար, վերածնվել Սուրբ Հոգով. ուստի եւ նրանք պետք է դաստիարակվեն իբրեւ ապագա երկնաքաղաքացիներ եւ ամենից առաջ գիտելիքներ ձեռք բերեն երկնայինի, Աստծո, Քրիստոսի, հրեշտակների, Աբրահամի, Իսահակի, Հակոբի եւ մյուսների մասին: Թեեւ Աստված շատ է հոգացել Իր ընտրյալ ժողովրդի մասին, սակայն չի նշել որեւէ այլ դպ-

⁶⁴ Glauben und Wissen, 1905 M/Arz, էջ 102

րոց, քան այն, ուր Ինքն Իրեն ուսուցիչ է կարգել՝ մեզ դարձնելով աշակերտ, իսկ մարգարեությունների ծայնը՝ Իր վարդապետությունը: Նրա խոսքը մեր ճանաչողության ճառագող լույսն է, մեր արարքների ամենակատարյալ առաջնորդը եւ երկու դեպքում էլ՝ մեր տկարությունների ամենահուսալի նեցուկը...

Մեր քրիստոնեական արժանապատվությունը (քանզի Քրիստոսով դարձել ենք Աստծո որդիներ, ընդունել թագավորական քահանայությունն ու հավիտենության ժառանգությունը) թույլ չի տալիս այնքան ցածրանալ եւ այլասերել մեր անձերն ու մեր երեխաներին, որ սերտ հարաբերությունների մեջ մտնենք հեթանոսների հետ ու գայթակղվենք նրանցով: Չէ՞ որ թագավորական եւ իշխանական ընտանիքների երեխաների դաստիարակ չեն կարգում պորտաբույծներից, խեղկատակներից ու ծաղրածուներից, այլ՝ լուրջ, խելացի ու հավատացյալ մարդկանցից: Իսկ մենք առանց ամաչելու թագավորների Թագավորի որդիներին՝ Քրիստոսի կրտսեր եղբայրներին՝ հավիտենության ժառանգներին դաստիարակելու ենք տալիս խեղկատակ Պլավտոսին, գայթակղիչ Կատուլլոսին, ամբարիշտ Օվիդիոսին, ամբարիշտ աստվածանարգ Լուկիանոսին, անբարոյական Մարցիալիսին եւ ճշմարիտ Աստծուն չճանաչող ու Նրանից չերկյուղող սրանց նմանների ամբոխին: Քանի որ նրանք ապրեցին առանց լավագույն կյանքի որեւէ հույսի՝ ամբողջովին թաղված իրական կյանքի տիղմի մեջ, ապա չեն կարող իրենց հետ չկեղտոտել նաեւ նրանց, ովքեր խիստ սերտ շփման մեջ են մտնում իրենց հետ: Օ~հ, բավական է, շատ է խենթություն եղել, քրիստոնյանե՛ր: Ժամանակն է վերջ տալ այս ամենին: Աստված կանչում է մեզ՝ հետեւելու բարուն. պետք է անսալ այս կոչին: Քրիստոսը՝ Աստծո հավիտենական Իմաստությունը, Աստծո որդիների համար դպրոց է հիմնել Իր տանը, ուր ռեկտորի ու տնօրենի պաշտոնը Ինքը Սուրբ Հոգին է ստանձնել, ուր ուսուցիչներին եւ պրոֆեսորներին փոխարի-

նում են մարգարեներն ու առաքյալները: Բոլորն այստեղ օժտված են ճշմարիտ իմաստությամբ՝ խոսքով ու գործով ցույց տալով ճշմարտության եւ փրկության ճանապարհը, բոլորն էլ սուրբ այրեր են: Այստեղ աշակերտները միմիայն Աստծո ընտրյալներն են՝ մարդկանց անդրանիկները՝ Աստծո եւ Աստծո Գառով քավվածները: Դպրոցի տեսուչներն ու պահակները հրեշտակներն են, հրեշտակապետները, երկնային իշխանություններն ու պետությունները (Եփես. Գ 10): Այստեղ տրվում է մարդկային իմացության բոլոր մտահանգումներից վեր գիտություն՝ ճշմարիտ, ստույգ եւ կատարյալ, որը համահունչ է ինչպես այս, այնպես էլ գալիք կյանքի կարիքների: Քանզի միայն Աստծո շուրթերն են այն աղբյուրը, որից բխում են ճշմարիտ իմաստության բոլոր վտակները. միայն Աստծո երեսն է այն ջահը, որից ճառագում են ճշմարիտ լույսի ճաճանչները. միայն Աստծո խոսքն ունի այն արմատը, որից աճում են ճշմարիտ իմաստության ծիլերը»:

Ի պատասխան այն առարկությունների, թե հեթանոս փիլիսոփաների, հռետորների ու բանաստեղծների գրքերում մեծ իմաստություն է ամփոփված, Կոմենսկին ասում է.

«Նրանք, ովքեր հայացքը շրջում են լույսից, արժանի են խավարի: Ճիշտ է, բուի համար մթնշաղն էլ կեսօր է, սակայն դա այդպես չէ լույսի մեջ ապրելու ծնված կենդանիների համար: Ու՛վ սին մարդ, դու, որ լույս ես փնտրում մարդկային հասկացողության խավարում, բարձրացրո՛ւ աչքերդ: Երկնքից՝ լույսի Աստծուց է բխում ճշմարիտ լույսը: Իսկ եթե մարդկայինի մեջ ինչ-որ բաներ էլ առկայծում են կամ փայլում, ապա ընդամենը փոքրիկ կայծեր են, որ թեւ լուսավոր ու նշանակալից են թվում խավարում նստածների համար, բայց բոլորովին անպիտան են մեզ համար, ում ձեռքն են հանձնված վառվող ջահերը՝ վառ լույսով ճառագող Աստծո խոսքը: Բնության մասին խորհելիս նրանք այս ու այն կողմ են ընկնում՝ ամենեւին չթափանցելով հարցի էության մեջ: Իսկ Ս. Գրքում Ինքը՝ բնության

Տերն է բացահայտում Իր գործերի մեծ գաղտնիքները՝ բացատրելով տեսանելի եւ անտեսանելի արարչության բոլոր պատճառները: Երբ փիլիսոփաները խոսում են բարոյականության մասին, նմանվում են սոսնձած թելերով թռչնակների, որոնք շարժվում են մեծ դժվարությամբ, սակայն ի գորու չեն թռչելու: Իսկ Ս. Գրիքը պարունակում է առաքինությունների ճշմարիտ նկարագրություններ՝ համոզիչ, մինչեւ ողնաձուծը թափանցող հորդորներով, եւ այդ ամենի կենդանի օրինակներ: Այնուհետեւ նրանք ասում են. «Եթե հեթանոսների գրքերը ճշմարիտ աստվածաբանություն չեն ուսուցանում, փոխարենը սովորեցնում են փիլիսոփայություն, որը չես քաղի փրկության համար շնորհված Ս. Գրքից»: Ես պատասխանում եմ. «Իմաստության աղբյուրը բարձրյալ Աստծո խոսքն է» (Սիր. Ա 5): Ճշմարիտ փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, քան Աստծո եւ Նրա արարածների ճշմարիտ ճանաչողությունը. անհնար է որեւէ այլ տեղից սովորել այն առավել ճշմարիտ ձեւով, քան Աստծո շուրթերից: Թվարկելով Ս. Գրքի առավելությունները՝ Օգոստինոս Երանելին ասում է. «Այստեղ է փիլիսոփայությունը, քանզի ամենայն կեցության պատճառները Արարիչ Աստծո մեջ են: Այստեղ է բարոյագիտությունը, որովհետեւ լավ ու ազնիվ կյանքն ամբողջանում է այն ժամանակ, երբ սիրում են այն, ինչ հարկ է սիրել, այսինքն՝ Աստծուն ու մերձավորին, եւ այնպես, ինչպես հարկ է սիրել: Այստեղ է տրամաբանությունը, քանզի բանական հոգու ճշմարտությունն ու լույսը Աստվածն է: Այստեղ է նաեւ առավել գովելի պետական բարօրությունը, քանզի պետությունը լավագույնս պահպանվում է հավատի եւ կայուն համաձայնության հիմքով ու միությամբ, ընդ որում սիրո նպատակը համընդհանուր բարիքն է, իսկ վսեմագույն եւ ճշմարտագույն բարիքը Աստվածն է: Եվ արդեն այս դարում ոմանք ապացուցել են, որ բոլոր փիլիսոփայական գիտությունների եւ արվեստների հիմքը ավելի շատ Ս. Գրքում է, քան որեւէ այլ տեղ: Սուրբ Հոգու տեսչությունը պարզապես զար-

մանք է հարուցում. Ճիշտ է, Նա ամենից առաջ ձգտում է լուսավորել անտեսանելի ու հավիտենականը, բայց եւ միաժամանակ տեղ-տեղ բացահայտում է բնականի եւ արհեստականի հիմքերը՝ առաջնորդելով յուրաքանչյուր խոհեմ խորհուրդ եւ արարք: <Եթանոս փիլիսոփաների մոտ հազիվ թե հանդիպի այս ամենի ստվերը>:

Հերքելով այն առարկությունները, թե պատանիները գոնե հանուն ոճագեղության պետք է կարդան եւ ուսումնասիրեն հեթանոս հեղինակներին, Կոմենսկին ի դեպ նկատում է.

«Մի՞թե միայն հեթանոսներն են ընդունակ հասկանալ խոսքի նրբագեղությունը: Խոսքի ամենակատարյալ նկարիչը Նա է, Ով ցանել է այն, այսինքն՝ Սուրբ Հոգին, Ում խոսքերը՝ մեղրից քաղցր, երկսայրի սրից սուր, մետաղ հալեցնող հրից գորեղ, ժայռեր փշրող մուրձից ծանր, ընկալում եւ ավետում են Աստծո սրբերը: Մի՞թե միայն հեթանոսներն են հիշարժան պատմություններ պատմում: Մեր Գիրքը լեցուն է անհամեմատ ավելի ճշմարիտ ու զարմանահրաշ պատմություններով: Մի՞թե միայն նրանք կարող են հորինել փոխաբերություններ, դարձվածքներ, ակնարկներ, այլաբանություններ, առակներ ու ասույթներ: Այս ամենից լիովի մենք էլ ունենք: Միայն բորոտը կարող է երեւակայել, թե Դամասկոսի Նաբանա եւ Փարփարա գետերը Հորդանանից ու Իսրայելի բոլոր ջրերից լավն են (Դ Թագ. Ե 12), կարճատեսը՝ թե Օլիմպոսը, Հելիկոնը, Պառնասը ավելի բարետես են, քան Սինայը, Սիոնը, Հերմոնը, Փավորան եւ Չիթենյաց լեռը, միայն խուլը՝ թե Օրփեոսի, Հոմերոսի, Վիրգիլիոսի քնարն ավելի քաղցրահունչ է, քան Դավթի տավիղը: Միայն փչացած քիմքին կարող են առավել համեղ թվալ նեկտարը, ամբրոսիան* ու կաստալյան աղբյուրները, քան երկնային իսկական մանանան եւ իսրայելական աղբյուրները: Միայն այլասերված սրտին կարող են ավելի մեծ հաճույք պատճառել չաստվածների, չաստվածուհիների, մուսանների ու քարիսնե-

* Ամբրոսիա – ըստ հունական դիցաբանության՝ չաստվածների կե-րակուրը:

րի** անունները, քան Ձորությունների Տիրոջ, Հիսուս Փրկչի երկրպագելի անունը եւ Սուրբ Հոգու բազմապիսի պարգեւները: Միայն կույր հույսն է ավելի սիրահոժար ճախրում էլիսիոնի դաշտերում, քան դրախտի այգիներում: Քանզի այնտեղ ամեն ինչ հեքիաթ է, ճշմարտության ստվեր, իսկ այստեղ՝ ճշմարտություն եւ իրականություն...

Առարկում են, թե Աստվածաշնչի գրքերը չափազանց խրթին են պատանհների համար, ուստի եւ, քանի դեռ չի ձեւավորվել նրանց բանականությունը, այլ գրքեր են առաջարկում նրանց: Թյուր է պնդումը, թե իբր Ս. Գիրքը խիստ վսեմ է ու վեր մանկական ըմբռնումից, կամ էլ՝ թե Աստված չի կարողացել հարմարեցնել Իր խոսքը մեր ընկալմանը (Բ Օր. ԼԱ 11-13): Չէ՞ որ Դավիթն ասում է. «Տիրոջ վկայությունը ստույգ է եւ իմաստուն է դարձնում տհասներին» (Սաղմ. Ժ 6-8), իսկ Պետրոս առաքյալը Աստծո խոսքն անվանում է «նորածին երեխաների կաթ»՝ շնորհված «նրա միջոցով փրկության համար աճելու» (տե՛ս Ա Պետ. Բ 2) եւ զորանալու: Տե՛ս ուրեմն, որ Աստծո խոսքը Աստծո կաթն է՝ շատ նուրբ, շատ քաղցր ու շատ օգտակար սնունդը Աստծո նորածին մանուկների համար: Ինչո՞ւ հակառակվել Աստծուն: Մանավանդ որ հեթանոսական կերակուրը կոշտ է ու պահանջում է ամուր ատամներ, որոնք, սակայն, փշրում է կամաց-կամաց: Այդ իսկ պատճառով Սուրբ Հոգին Դավթի շուրթերով երեխաներին կանչում է Իր դպրոցը. «Եկե՛ք, Ի՛մ որդիներ, եւ լսեցե՛ք Ինձ. Ես կսովորեցնեմ ձեզ Տիրոջ երկյուղը» (Սաղմ. ԼԳ 12): Վերջապես, խոստովանում ենք, որ Ս. Գրքում, անշուշտ, խորություններ կան, բայց՝ այնպիսիք, որոնց մեջ փղերը ընկղմվում են, իսկ գառնուկները՝ լողում, ինչպես դիպուկ ասել է Օգոստինոս Երանելին՝ կամենալով զուգահեռ անցկացնել Ս. Գրքի վրա մեծագույն

** Քարիս – նրբագեղություն եւ գրավչություն մարմնավորող ուրախության եւ զվարճության չաստվածուհիներ հունական դիցաբանության մեջ:

ամբարտավանությամբ հարձակվող այս աշխարհի իմաստունների եւ Քրիստոսի որդիների միջեւ, որոնք խոնարհ եւ ուսանելու պատրաստ հոգով են ձեռնամուխ լինում Աստվածաշնչին: Կարիք չկա անմիջապես լողալ բաց ծովում. այդ կարելի է անել աստիճանաբար: Սկզբում պետք է գնալ կատեխիզիսի վարդապետության ավիով, այնուհետեւ՝ ծանծաղուտով՝ ուսումնասիրելով այն սրբազան պատմությունները, բարոյական ասույթները եւ այլն, որոնք մատչելի են եւ նախապատրաստում են առավել վսեմ հաջորդ բնագրերի ըմբռնմանը: Ի վերջո երեխաներն ի վիճակի կլինեն լողալ նաեւ հավատի խորհուրդների միջով: Այսպիսով, մանկուց անմնացորդ նվիրվելով Ս. Գրքի սերտմանը, նրանք առավել ոյուրությամբ խոյս կտան աշխարհի այլասերման որոգայթից եւ իմաստուն կդառնան «փրկության համար՝ այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսի մեջ է» (Բ Տիմ. Գ 15): Քանզի նրա վրա, ով իրեն հանձնում է Աստծուն եւ, Քրիստոսի ոտքերի մոտ նստած, խոնարհեցնում լսելիքը՝ ունկնդրելու ի վերուստ իջնող իմաստությունը, անպատճառ կիջնի Սուրբ Հոգու շնորհը՝ լուսավորելու ճշմարիտ ճանաչողությամբ եւ հստակ լույսի մեջ ցույց տալու փրկության ուղիները: Չեն խոսում այն մասին, որ այն հեղինակները, որոնց պարտադրում են քրիստոնյա պատանեկությանը (Տերենտիոս, Կիկերոն, Վիրգիլիոս եւ այլք), հենց այնպիսին են, ինչպիսին կամենում են ներկայացնել Ս. Գիրքը, այսինքն՝ պատանու համար խրթին ու դժվարըմբռնելի: Չէ՞ որ դրանք երեխաների համար չեն գրված, այլ՝ հասուն դատողության տեր մարդկանց, ովքեր շրջում են բեմերում եւ հրապարակներում: Ուստի ինքնին հասկանալի է, որ դրանք այլոց համար բնավ էլ օգտակար չեն: Անկասկած, մեծ տարիքում մեկ անգամ Կիկերոն ընթերցելն ավելի օգտակար է, քան, ասենք, պատանի հասակում այն ծայրից ծայր անգիր անելը: Ինչո՞ւ այս հեղինակների ուսումնասիրությունը չի ետածգել մինչեւ մի հարմար ժամանակ նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն,

եթե ընդհանրապես կա դրա կարիքը: Ամենակարելիորը, սակայն, ինչպես արդեն ասել ենք, քրիստոնեական դպրոցներում երկնքի, այլ ոչ թե երկրի քաղաքացիներ պատրաստելն է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այնպիսի ուսուցիչներ կարգել, որոնք երկրայինից առավել երկնայինը, աշխարհիկից առավել սրբազանը կուսուցանեն»:⁶⁵

Ս. Գիրքը չափազանց բարձր էր գնահատում նաեւ «ժամանակակից մանկավարժության հայրը»՝ Պետալոցցին (1746-1827): Իր ուսումնական հաստատության 1807 թ.-ին վերաբերող հաշվետվություններից մեկում նա այսպիսի խոսքեր է ասում աստվածաշունչ գրքերի դաստիարակչական նշանակության մասին.

«Բոլոր բարձր դասարանների սաները շաբաթական երկու անգամ էին կրոն ուսանում: Որպես ձեռնարկ էին ծառայում Մովսեսի սրբազան գրքերը, որոնցում շարադրված է մարդկության կրոնական զարգացման ընթացքը, եւ նրանց վրա հիմնված Հիսուս Քրիստոսի սուրբ վարդապետությունը, ինչպես որ այն Իր կողմից հաղորդված է Ավետարանում: Պարտականությունների վերաբերյալ վարդապետության հիմքում մենք դրել ենք Հիսուսի Լեռան քարոզը, իսկ հավատի վարդապետության հիմքում՝ գլխավորապես Հովհաննեսի Ավետարանը: Այս ամենն ընթերցվում էր մեկը մյուսի հետ կապելով. եւ Քրիստոսի հավիտենական ճշմարտություններն Աստծո մասին, Իր մասին՝ իբրեւ մարմնացյալ Աստծո, առ Աստված մարդկության հարաբերության եւ Աստծո մեջ կյանքի մասին. այս բոլոր ճշմարտությունները, հասկանալի է, որ բացատրվում էին: Մենք ձգտում ենք Քրիստոսի օրինակով, ինչպես նաեւ իրերը, մարդկանց ու նրանց հարաբերությունները հայելու Նրա եղանակով երեխաների մեջ ակնառու կերպով կենդանացնել կրոնի աներկբա էության վրա հիմնված հավատի, հույսի եւ սիրո

⁶⁵ Velika[didaktika. Perv. s9 lat. A. Adol6fa i S. Ll1bomudrova. M. 1893, էջ 216-244

զգացմունքները, դրանք վերածել սովորության եւ զարգացնելով վսեմացնել նրանց մտքերն ու գործերը այնքան, որ նրանց մեջ ի հայտ գա Ինքը Աստվածությունը»:⁶⁶

Ըստ ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու (1824-1870)՝ միայն Ավետարանում է բացահայտված մարդու կյանքի ճշմարիտ նպատակը.

«Մարդու կյանքի ճշմարիտ նպատակ պետք է ճանաչվի միայն այն, ինչ առավելագույնս համապատասխանում է մարդու հոգուն... Մենք ոչ մի տեղ չենք հանդիպում մարդու հոգու եւ նրա բնատուր հատկությունների այնպիսի խորունկ ըմբռնման, ինչպես քրիստոնեության մեջ է: Աշխարհի ո՞ր գիրքն է պարունակում այդքան խոր հոգեբանություն, մարդկանց այդքան խոր ճանաչողություն, որքան Ավետարանը»:⁶⁷

Ուշինսկին գտնում էր, որ Ավետարանն օժտված է հոգեւոր ընկալման զարմանահրաշ մատչելիությամբ ոչ միայն մեծերի, այլեւ փոքրերի համար. «Ավետարանը ներգործում է տասնամյա երեխայի վրա. դա եւ անձամբ եմ զգացել իմ ու երեխաների վրա»:⁶⁸

Ողջ Ռուսաստանում հռչակ վայելող քրիստոնյա մանկավարժ եւ ժողովրդական կրթության բնագավառի ականավոր գործիչ, բուսաբանության դոկտոր Ս. Ա. Ռաչինսկին (1833-1902) երիտասարդ տարիներից սիրել է Ս. Գիրքը: Ահա Սաղմոսարանի մասին անկեղծ զգացմունքով տողորված նրա կարծիքը՝ հրապարակված մամուլում.

«Սաղմոսարանը բոլոր դարերի եւ ժողովուրդների քնարեզության գլուխգործոցն է: Նրա բովանդակությունն ամբողջական է ու հավիտենական: Դա Աստծո մեծության ու ողորմա-

⁶⁶ L. Modzalevskij, Oqerk9 istor]i vospitan][i obuqen][. գ. II, SPb. 1877, էջ 33-34

⁶⁷ Qelovek9, kak9 predmet9 vospitan][. տ. VI, SPb. 1869, էջ 466, 495, 497

⁶⁸ Sobran]e neizdannyx9 soqinenen]j K. D. Uwinskago. Mater]aly dl[pedagogiq. antropolog]i. տ. III, էջ 190

ծության հարատև հայեցողությունն է, սրտի խոյանքը դեպի բարոյական վեցնություն ու մաքրություն, խորին մորմոքը մարդկային կամքի անկատարության համար, անսասան հավատը Աստծո օգնությամբ չարը հաղթելու հնարավորության նկատմամբ: Բոլոր այս թեմաները մշտապես հնչում են միաժամանակ՝ սքանչելի բազմազանության զուգորդումներով, անսպառ գեղեցկության, ուժի եւ նրբության դարձվածքներով... Մարդու ձեռքով գրված ոչ մի գիրք, այդ թվում եւ Ավետարանը, քրիստոնեական զգացմունքի եւ գիտակցության վրա չի թողել այնքան անջնջելի, այնքան մեծ, այնքան տիրական հետք, որքան Սաղմոսարանը: Մարգարեական գրքերից ամենամարգարեական այս գիրքը դարձել է քրիստոնեության այբուբենը: Ընդսմին, այն մնում է իբրեւ աղոթական երգեցողության պսակ, անհասանելի օրինակ, անսպառ մի աղբյուր, որը սնում է բանաստեղծական արվեստը երկու հազարամյակ շարունակ: Եվ ի՞նչ է իրենից ներկայացնում այս գիրքը: Սաղմոսարանը հոգեւոր երգերի ժողովածու է (որոնց վաղեմությունը հաշվվում է տասնյակ դարերով)՝ գրված մեռած ու աղքատիկ լեզվով՝ ընթերցողների մեծամասնությանը մատչելի միայն արձակ, այն էլ հնացած ու անհասկանալի թարգմանությամբ:՝ Փորձեք ընթերցել Պինդարոսի ու Հորացիոսի ամենա-սքանչելի բանաստեղծական տները, Պետրարկայի ամենակատարյալ սոնետները, Բայրոնի ամենահուզումնալից քնարական գեղումները, Գյոթեի եւ Պուշկինի ամենաքաղցրաբույր երգերը ոչ թե չափածո բնագրով, այլ արձակ թարգմանությամբ: Դուք կհամոզվեք, որ դրանք բացարձակապես դժվարընթեռնելի բաներ են, մանավանդ գլխացավանք են օտար լեզու չիմացող գրականության դժբախտ ուսուցիչների համար: Իսկ Սաղմոսարանն իր անկատար արձակ թարգմանությամբ շարունա-

* Բովանդակ Աստվածաշնչի, այդ թվում եւ Սաղմոսարանի գրաբար թարգմանությունը հիրավի անբասիր է եւ այլոց կողմից կնքված է «թագուհի թարգմանութեանց» անվամբ:

կում է ապրել եւ ապրեցնել, լինել հանապազօրյա հացը թե՛ գիտության շեմին դեռ նոր ուտք դրած անուս զանգվածների, թե՛ ընտրյալների համար, որ կանգնած են այդ գիտության, մտքի եւ գեղարվեստական ստեղծագործության զագաթին: Մի՞թե համաշխարհային գրականության ողջ պատմության մեծագույն հրաշքը չէ սա»:⁶⁹

Հռչակավոր մանկավարժ եւ գրող Վ. Պ. Օստրոգորսկին (1840-1902) ցանկանում էր տեսնել Ավետարանը ի գլուխ բոլոր գրքերի, որ նախատեսված են պատանեկության ընթերցանության համար:

«Իմ ընթերցած բոլոր գրքերի մեջ,- գրում է նա,- ես ամենավերելում կգետեղեի Ավետարանը, որը մեզանում, անկեղծ ասած, հազվադեպ են ինքնուրույն ընթերցում հոժարությամբ եւ էլ ավելի քիչ՝ խորհրդածում նրա շուրջ: Ավետարանը միայն հեզության, սիրո եւ մարդասիրության մասին իր վարդապետության անձեռնմխելի անաղարտությամբ արդեն իսկ կարող է ընկալունակ հոգում ճիշտ վերաբերմունք հաստատել ամ Աստված եւ Նրա՝ ըստ հավատի կյանքի մեծ պատգամների հանդեպ՝ բարի գործերով հանդերձ»:⁷⁰

Աստվածաշնչի ահռելի դաստիարակչական նշանակությունը խոստովանում է նաեւ մեր օրերում մանկավարժի եւ փորձառական հոգեբանության առաջնակարգ գիտակի մեծ համբավ վայելող Ստենլի Հոլլը (ծն. 1846)՝ Մասաչուսեթս նահանգի Ուորչեստերի Կլերկյան համալսարանի նախագահը:

«Աստվածաշունչը,- գրում է ամերիկացի գիտնականը,- պետք է ընդունել ոչ միայն որպես մարդու հոգեբանության մեծ ձեռնարկ, այլեւ գրադարան, որի արժանիքներն արդարացնում են նրա վսեմ անունը: Այն զարմանալիորեն հարմարեցված է

⁶⁹ Sel6ska[wkola. Sbornik9 statej S. A. Raqinskago. Izd. Ô-oe, էջ 231-232, 302-303

⁷⁰ Mnenj[russkix9 lldej o luqwix9 knigax9 dl[qten][. izd. Lederle. SPb. 1895, էջ 97

մարդու բոլոր տարիքներին. Հին Կտակարանի առաջին մասերը երեխաների համար են, մարգարեություններն ու Նոր Կտակարանը իր սիրո մեծ ավետումով՝ պատանեկության համար: Ս. Գրքին անտեղյակների բանակի օրավուր համալրումը պարզապես ապշեցուցիչ է, մանավանդ եթե նկատի ունենանք այն փաստը, որ նրա ե՛լ գրական ձեւը, ե՛լ բովանդակությունը ավելի քան որեւէ այլ բան համապատասխանում են պատանեկության խառնվածքին ու պահանջներին»:⁷¹

Մեզ հետաքրքրող խնդրի մասին հարուստ նյութեր են տրամադրում նաեւ համաշխարհային եւ ռուս գրականության մշակները: Հիշատակենք նրանցից մի քանիսին:

Նշանավոր էրազմ Ռոտերդամցին (1467-1536)՝ առավել ականավոր հումանիստներից մեկը եւ հունական գրականության գիտակը, Ս. Գրքի եւ մասնավորապես Նոր Կտակարանի մշանակության մասին գրում է.

«Աստվածաշունչը պիտանի է անխտիր բոլորին. այն մատչելի է փոքրերին եւ հասու նրանց հասկացողությանը, սնում է նրանց մայրական կաթով, ջերմացնում ու սատարում նրանց ուժերը եւ ամեն ինչ անում մինչեւ Քրիստոսի հասակին հասնելը: Բայց եթե մատչելի է փոքրերին, մյուս կողմից էլ՝ մեծերի զարմանքի առարկան է. փոքրերի համար փոքր է, մեծերի համար՝ անչափ մեծ: Գիրքը չի մերժում ոչ մի տարիք, ոչ մի սեռ, ոչ մի հասարակական դիրք եւ խավ: Արեգակն այնքան ընդհանուր եւ բաց չէ բոլորի համար, որքան Քրիստոսի վարդապետությունը: Այն ամենեւին ոչ մեկին չի վանում իրենից՝ բացառությամբ նրանց, ովքեր իրենք են հեռանում եւ հրաժարվում այս երջանկությունից: Այսպիսով, բոլոր նրանք, որ մկրտության ժամանակ երդվում են Քրիստոսի խոսքերով, թող իսկույն եւեթ, ծնողների գրկում եւ իրենց դայակների գորովանքով շրջա-

⁷¹ Soc]al6nye instinkty u detej i uqrehden][dl[ix9 razvit][. SPb. 1913, էջ 85

պատված, հաղորդակցվեն Քրիստոսի վարդապետությանը: Բանն այն է, որ առավել խոր է ներթափանցում եւ մտապահվում այն, ինչ ամենից առաջ է ընդունում հոգու տակավին մատաղ անոթը: Քրիստոսը թող լինի նրա առաջին թոթովանքը, Նրա Ավետարաններով թող անցնի վաղ մանկությունը»:⁷²

Իր առակներով համաշխարհային հռչակ ստացած Լաֆոնտենը (1621-1695) առաջին անգամ Բարուք ընթերցելիս ապշում է այս գրքի հիասքանչ զորությամբ եւ լեզվի արտահայտչությամբ: Առակագիրը խանդավառությամբ է խոսում այդ մասին՝ ի լուր իր բոլոր ծանոթների ասելով. «Կարդացե՞լ եք արդյոք Բարուքի գիրքը: Նա մեծ հանճար է»:⁷³

Հանճարեղ ֆրանսիացի ժան-ժակ Ռուսոն (1712-1778)՝ ամենապերճախոս ու առինքնող գրողներից մեկը, իր լավագույն եւ նշանավոր «Էմիլ, կամ Դաստիարակության մասին» ստեղծագործության մեջ Ավետարանի եւ Քրիստոսի մասին գրում է.

«Խոստովանում եմ, որ Աստվածաշնչի մեծությունը ապշեցնում է ինձ, իսկ Ավետարանի սրբությունը ազդում է սրտիս: Ս. Գրքի համեմատ որքա՞ն չնչին են փիլիսոփայական երկերն իրենց ողջ փայլով հանդերձ: Հնարավո՞ր է արդյոք, որ մեկ այլ ստեղծագործություն, այն էլ՝ սովորական մարդու ձեռքով գրված, այսքան կարճ ժամկետում փառավորվեր այսպես: Կարո՞ղ էր Նա, Ում մասին պատմում են սրբազան գրքերը, հասարակ մարդ լինել: Մի՞թե գրքերում երագողի կամ սնապարծ աղանդավորի ծայնն ենք լսում: Ի՞նչ հիասքանչ, ի՞նչ մաքուր է Նրա էությունը: Ի՞նչ առինքնող բարությամբ է համակված Նրա վարդապետությունը: Ի՞նչ վսեմ են Նրա օրենքները: Ի՞նչ խորին է Նրա խոսքերի իմաստությունը: Ի՞նչ սառնա-

⁷² Մեջբերումը՝ ըստ (. A. Komenskijj, 5Velika[didaktika% v9 perevode A. Adol6fa i S. Llbomudrova, էջ 217-218

⁷³ Prav. Bogosl. &ncikloped][pod9 red. prof. A. P. Lopuxina, t. III, էջ 169

սիրտ, ինչ խորաթափանց, ինչ դիպուկ են Նրա պատասխանները: Սեփական կրքերի ինչպիսի՜ տիրապետում: Որտե՞ղ կարելի է գտնել մի մարդու, իմաստունի, որն ընդունակ է այսպես գործել, տառապել ու մահանալ առանց թուլասրտություն եւ սնափառություն դրսեւորելու: Այո, եթե Սոկրատն ապրեց ու մահացավ իբրեւ փիլիսոփա, ապա Հիսուս Քրիստոսն ապրեց եւ մահացավ իբրեւ Աստված:

Արդոք կարո՞ղ ենք ասել, թե ավետարանական պատմությունը մտացածին է: Նման բաներ, իմ սիրելի՛ բարեկամ, չեն հորինվում: Ընդ որում, Սոկրատի պատմությունը (որի իսկությունը ոչ ոք չի կասկածում) նվազ արժանահավատ է, քան Հիսուս Քրիստոսի պատմությունը: Իսկ հակառակը պնդելը ոչ այլ ինչ է, քան խուսանավում, այլ ոչ թե հարցի լուծում: Մեր բանականությունն ավելի շուտ պատրաստ է ընդունել, թե մի անձ-նավորություն իր կյանքով իսկապես բովանդակություն տվեց ավետարանական պատմությանը, քան ենթադրել, իբրեւ թե մի քանի անձինք միաբանվելով՝ հորինել են այդպիսի պատմություն: Հրեա գրողներն ի վիճակի չէին հորինել ո՛չ այդպիսի տոն՝ արտահայտության երանգ, ո՛չ էլ նման բարոյականություն: Ավետարանն իր մեջ կրում է այնքան վեհ, զարմանալի ու միանգամայն անզուգական իմաստության հետքեր, որ հորինողն ավելի մեծ դրվատանքի կարժանանար, քան հերոսը: Ի լրումն ողջ ասվածի պետք է ավելացնել, որ Ավետարանը միանգամայն անհասանելի գիրք է, որի առջեւ կարկամում է բանականությունը, բայց եւ միաժամանակ՝ ոչ այնպիսին, որը չհասկանար մտածող մարդը եւ որի հետ չկարողանար համաձայնել»:⁷⁴

Գերմանացի նշանավոր քննադատ եւ թատերագիր Լեփինգը (1729-1781), որն ի դեմս մարդկության բովանդակ պատմու-

⁷⁴ Emile ou de l'Education, IV t. Sobran][soqinenij, Parih9 1839, գ. Ծ-[, էջ 365 եւ այլն. տե՛ս Filipp Waff, 5}isus9 Xristos9-Qudo istorii%. SPb. 1896, էջ 182-184

թյան՝ աստվածային տիեզերական ծրագիր էր տեսնում, նորկտակարանյան գրվածքներն ընդունում էր իբրև «մարդկային ցեղի լավագույն գիրք» եւ ձաղկում իր ժամանակի այն ազատամիտներին, ովքեր ավետարանական ճշմարտությունները համարում էին հնացած ու անօգտակար: Ավետարանի բժախնդիր քննադատների դեմ նա գրում է.

«Եթե մենք այնքան բարեհաճ ու մեծահոգի ենք Լիբիոսի, Դիոնիսիոսի, Պոլիբիոսի եւ Տակիտոսի նկատմամբ, որ նրանց կտտանքի չենք ենթարկում ամեն մի բառի համար, ապա ինչո՞ւ նույն վերաբերմունքը չունենանք Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի եւ Հովհաննեսի հանդեպ»:⁷⁵

XVIII դ. վերջում Փարիզում մի ընկերություն ստեղծվեց, որին անդամակցեցին ժամանակի ամենահայտնի անհավատները: Շաբաթը մեկ նրանք հավաքվում էին, ինչպես իրենք էին ասում, «Ս. Գրքի անհեթեթությունները բացահայտելու» նպատակով, որպեսզի հետո ծաղրածանակի ենթարկեին դրանք: Մի երեկո, երբ այս անձինք, սկսելով իրենց արգահատելի զբաղմունքը, ի հաճույս սատանայի բարձրածայն մի քանի հատված կարդացին Ավետարանից, հանկարծ ոտքի ելավ գրույցին բոլորովին չմասնակցած մեծահամբավ էնցիկլոպեդիստ եւ ամենաազդեցիկ գրողներից մեկը՝ Դիդրոն (1713-1784): Մինչ այդ պահը XVIII դ. կատաղի աստվածանարգի համբավ ունեցողը հայտարարեց իրեն ոչ հատուկ լրջությամբ.

«Պարոնա՛յք, այս գրքի առնչությամբ ես բացահայտ ու ամենայն անկեղծությամբ պետք է խոստովանեմ, որ ո՛չ Ֆրանսիայում, ո՛չ էլ աշխարհի որեւէ այլ անկյունում չեմ ճանաչում մի մարդու, որն ընդունակ է գրել եւ խոսել առավել հմտորեն ու տաղանդով, քան Ավետարանը գրած ձկնորսներն ու մաքսավորները: Ես համարձակվում եմ պնդել, որ մեզանից ոչ մեկը ի վիճակի չէ գրել Ավետարանին գոնե նման մի պատմություն,

⁷⁵ Lessings s/amtliche Schriften, herausgegeben von Lachmann, X, 52

որը լիներ այնքան պարզ, բայց եւ միաժամանակ՝ վսեմ, այնքան թարմ, այնքան սրտառուչ, օժտված հոգու վրա այնպիսի հզոր ներգործությամբ եւ դարերի ընթացքում չխամրող ազդեցությամբ, ինչպիսին մեզ համար յուրաքանչյուր առանձին վերցրած, նույնիսկ աննշան, ավետարանական տեղեկությունն է «Իսուս Քրիստոսի տառապանքների ու մահվան մասին»:⁷⁶

Երբ Դիդրոն ավարտեց իր խոսքը, ծիծաղի փոխարեն, որը քիչ առաջ հնչում էր դահլիճում, իսկույն քար լռություն տիրեց: Բոլորն էլ զգացին Դիդրոյի խոսքերի իրավացիությունը: Նրանք զգացին դրանից առավել մեծ մի բան եւս: Ներկաները լռեցյալն ցրվեցին, եւ ժողովը վերջացավ: Այս դեպքից հետո ընկերությունը իր ողջ կազմով լուծարվեց:

Գերմանիայի առավել հռչակավոր ու ազդեցիկ գրողներից եւ մտածողներից մեկը՝ Հերդերը (1744-1803), պատանեկան տարիքից էր հրապուրվել Ս. Գրքով: Եռանդագին եւ հմտորեն հերքելով ազատախոհների տափակ ու կոպիտ հարձակումները Մովսեսի Հնգամատյանի վրա՝ նա նշեց այն հիմունքները, ըստ որոնց հարկ է ականածալից վերաբերմունք ունենալ նրա՝ իբրեւ նախապատմական շրջանի կրոնական ամենատեսարժան կոթողի եւ մարդկային ցեղի պատմությանը վերաբերող մեզ հասած հնագույն փաստաթղթերի ժողովածուի նկատմամբ: Առհասարակ այս խոշոր մտածողը նախանձախնդիր կերպով պայքարում էր ժամանակի փիլիսոփայական խմբակներում Ս. Գրքի հանդեպ տիրող բացասական վերաբերմունքի դեմ եւ ապացուցում նրա վսեմ արժեքը: Մի առիթով նա ասել է. «Ինչպես երեխան վերաբերվում է հոր, փեսան՝ իր հարսնացուի ծայնին, այնպես էլ մենք պետք է լսենք Աստծո ծայնը Ս. Գրքում եւ ընկալենք նրանում հնչող հավիտենության հնչյունները»:⁷⁷

⁷⁶ Krummacher, Passionspredigten, էջ 623

⁷⁷ Arndt, Werth der Bibel. 1862, էջ 76

Անգլիացի մեծահամբավ վիպասան Վալտեր Սկոտի (1771-1832) մասին պատմում են, թե մահվան մահձում նա խնդրում է իր փեսային հատվածներ ընթերցել գրքից: Երբ վերջինս հարցնում է՝ ո՞ր գրքից, մեծ գրողը, որն ինքը այնքան հրաշալի գրքերի հեղինակ էր եւ իր կյանքում ամբողջ գրադարաններ էր կարդացել, պատասխանում է.

«Այժմ ինձ համար միայն մի գիրք գոյություն ունի. դա թանկագին Աստվածաշունչն է: Ինչ ասես որ չի առաջարկում, ինչ ասես որ չի տալիս այն մարդուն, ով զգալով իր աղքատությունը՝ գրքի անսպառ գանձերն է որոնում: Նա մարդուն շնորհում է երբեք չհնացող ճշմարտություն, հավիտենական հարստություն, անհագ ուրախություն, երբեք չթռչնող պսակ, վշտի ու վախի փարատում եւ հավիտենական կյանքի երանելի հույս: Սա Աստծո պարգեւն է Իր խոսքը սիրող եւ պատվող մարդկանց համար»:⁷⁸

Անգլիացի նշանավոր բանաստեղծ եւ փիլիսոփա Քլորիջը (1772-1834) իր «Աշխարհիկ մարդու քարոզներում» նշում է այն պատմական փաստը, որ մեր ճանաչողության եւ քաղաքակրթության զգալի մասը սկիզբ է առնում Ս. Գրքից: Այս հզոր լծակին է պատկանում Եվրոպան իր մտավոր եւ բարոյական արդի մակարդակին բարձրացնելու երախտիքը: «Նրա (Աստվածաշնչի) խոսքերը,- գրում է բանաստեղծն ու փիլիսոփան,- հնչում են ականջին իբրեւ անմոռաց երաժշտություն, ինչպես նորարարձի ունկերում՝ եկեղեցական քաղցրալուր դողանջը»:⁷⁹

XIX դ. մեծագույն բանաստեղծ լորդ Բայրոնը (1788-1824) քաջածանոթ էր Ս. Գրքին եւ սիրում էր այն: Այս սրբազան գիրքը հաճախ է եղել նրա բանաստեղծական ներշնչանքների աղբյուրը: Բայրոնի առաջին ծանոթությունը Ս. Գրքին սկսվել է վաղ մանկությունից: Բանաստեղծի դայակը նրան քնեցնելիս

⁷⁸ “Glauben u. Wissen”. 1905 Jan., էջ 25

⁷⁹ S. Smajls9, Xarakter9. Per. s9. angl. S. Majkovej. SPb. 1889, էջ 291

երգում էր, տարբեր հեքիաթներ ու լեգենդներ պատմում, ինչպես նաև ստիպում իր հետ կրկնել սաղմոսները: Ա եւ ԻԳ սաղմոսները նրա առաջին անգիր արած տողերից էին: 1821-ին Իտալիայից իր ընկեր Մուրրեյին գրած նամակում Բայրոնը խնդրում է իրեն Աստածաշունչ ուղարկել: «Չմոռանաք այդ անել,- գրում է նա,- քանզի ես այդ գրքի փութեռանդ ընթերցողն ու մեծարողն եմ: Ես այն կարդացել եմ ծայրից ծայր, երբ դեռ 8 տարեկան չկայի»: Ժամանակակիցների վկայությամբ՝ միայն քչերն էին գերազանցում նրան Ս. Գրքին իրենց քաջատեղյակությամբ: Օր չէր անցնում, որ բանաստեղծը չընթերցեր իրեն ուղեկցող գրպանի փոքրիկ Աստվածաշնչի այս կամ այն գլուխը: Բայրոնի կյանքի վերջին շրջանում Մեսսոլոնգում Աստվածաշունչը միշտ դրված էր նրա սեղանին:⁸⁰

Հանձարեղ ու խորագգաց բանաստեղծի մահից հետո նրա Աստվածաշնչում հայտնաբերվեցին իր իսկ ծեռքով գրված հետևյալ տողերը.

«Այս սրբազնագույն գրքում է ամփոփված բոլոր գաղտնիքների գաղտնիքը: Որքա~ն երջանիկ են մահկանացուներից նրանք, ում Աստված շնորհել է Ս. Գիրքը լսելու, ընթերցելու, նրա խոսքերն աղոթքով արտասանելու եւ երկյուղածությամբ ընկալելու ողորմությունը: Երջանիկ են նրանք, ովքեր ի վիճակի են բացել Ս. Գրքի դռները եւ համարձակ ընթանալ նրա շավիղներով: Բայց ավելի լավ կլիներ, որ երբեք ծնված չլինեին այն մարդիկ, որոնք կարդում են լոկ այն նպատակով, որ կասկածեն ու արհամարհեն այն»:⁸¹

Որքա~ն հոգեւոր զորություն եւ շնորհալից մխիթարություն է պարգևել Ս. Գիրքը իտալացի հռչակավոր բանաստեղծ Սիլվիո Պելլիկոյին (1789-1854)՝ անցյալ դարի ամենահամակրելի անձանցից մեկին, իր տասնամյա բանտարկության անարդա-

⁸⁰ Bibljoteka velikix9 pistatelej, pod9 redakc. S. A. Vengerova, Bajron9, t. I, էջ 385-386

⁸¹ L. Pestalozzi, Die christliche Lehre in Beispielen, էջ 31

րացի ծանր տառապանքների մեջ: Այս ամենի մասին նա պատմում է իր «Իմ բանտերը» ստեղծագործության մեջ, որտեղ իր խորին երախտագիտությունն է հայտնում Աստծուն՝ այս սրբազան գիրքը մարդկությանը Շնորհողին:

«Այս աստվածային գիրքը,- գրում է բանաստեղծը,- որը ես միշտ զորեղ սիրով եմ սիրել անգամ այն ժամանակ, երբ, թվում է, անհավատ եմ եղել, այժմ ուսումնասիրում եմ ավելի ուշադիր, քան երբեւէ... Աստվածաշնչի ընթերցանությունը դույզնինչ առիթ չտվեց ինձ տոգորվել կեղծ բարեպաշտությամբ, այսինքն՝ այն սխալ հասկացվող երկյուղածությամբ, որը բնորոշ է վախկոտին ու մոլեռանդին: Ես սովորեցի սիրել Աստծուն եւ մարդկանց, միշտ ամեն բանից առավել փափագել արդարության արքայությունը, խույս տալ ստից եւ ներել անիրավներին»:

Այնուհետեւ Պելլիկոն նկարագրում է, թե մի անգամ ինչպիսի հոգեկան հեղաշրջում է իր մեջ գործել Աստծո խոսքը, երբ մի քանի օր բանտում չաղոթելուց եւ չընթերցելուց հետո (դրանք դժոխային օրեր էին, որ բոլորովին զրկել էին նրան հոգու հանգստությունից եւ հասցրել կատարյալ հուսահատության), կրկին ձեռքն առնելով Ս. Գիրքը, անհավատությամբ ու հոգեկան տագնապով սասանված, խորասուզվել է ընթերցանության մեջ:

«Իմ Աստվածաշունչը փոշով էր պատվել,- հիշում է դժբախտ բանտարկյալը այդ անմխիթար օրերի մասին,- եւ ձեռքս վերցնելով Ս. Գիրքը՝ թաշկինակով մաքրեցի փոշին ու պատահական կերպով բացեցի... Ես ինչ-որ ուրախություն էի զգում, որ վերստին վերցրել եմ Ս. Գիրքը: Ինձ թվաց, թե արժանացա իմ մեծահոգի բարեկամի բարեհաճությանը, որին վիրավորել էի, ու հաշտվեցի նրա հետ: «Ես լքե՞լ էի Քեզ, Աստվա՛ծ իմ,- բացականչեցի ես,- ե՞ս էլ գայթակղվեցի: Ինչպե՞ս կարող էի մտածել, թե իմ այս անմխիթար վիճակին համապատասխան է ցինիզմի ամոթալի ծիծաղը»: Այս խոսքերն արտա-

սանեցի անասելի հուզմունքով եւ, Աստվածաշունչը դնելով աթոռի վրա, ծնկի իջա ընթերցելու համար: Եվ ես, ում համար դժվար էր արտասպել, աղիողորմ լաց եղա: Ես նորից ճանաչեցի Աստծուն, ես սիրեցի Նրան, ես զղջացի, որ վիրավորել եմ Նրան, որ ինձ թույլ եմ տվել այս աստիճան բարոյական անկում ապրել: Խոստացա այլեւս երբեք չհեռանալ Նրանից, երբե՛ք: Այսպես ավելի քան մեկ ժամ ընթերցելով ու լալով՝ համակվեցի այն խորին հավատով, որ Աստված ինձ հետ է, որ Նա ներել է իմ բոլոր մոլորությունները: Այդժամ իմ դժբախտությունները, դատավարության տառապանքները, մինչեւ իսկ հավանական կախաղանը չնչին թվացին աչքիս: Տառապանքն ինձ ուրախություն էր պատճառում, քանի որ այն ինձ առիթ էր տալիս մարել որոշ պարտքերս, որովհետեւ անտրտունջ տառապելով ու անմռունչ հնազանդվելով նախախնամությանը՝ ես հնազանդվում էի Տիրոջ կամքին:

Գոհությո՛ւն երկնքին, Աստվածաշունչ կարդալ գիտեի: Այլեւս նրա մասին կարծիք չէի կազմում Վոլտերի թշվառ քննադատությամբ՝ ծիծաղելով այն արտահայտությունների վրա, որոնք զավեշտական կամ սխալ են սոսկ այն դեպքում, երբ տգիտաբար կամ չարասրտորեն չեն ըմբռնում դրանց իմաստը: Ինձ համար ակնհայտ էր, թե սրբության, ուստի եւ ճշմարտության ինչպիսի~ ժողովածու է Աստվածաշունչը: Ես հստակ տեսնում էի, թե ինչպես է այս ոչ փիլիսոփայական գրվածքը հարձակումների թիրախ դառնում իր որոշ ոչ կատարյալ գրելառճերի պատճառով: Սա հիշեցնում է այն ամբարտավանությունը, որն արհամարհում է այն ամենը, ինչը նրբագեղ չէ: Ես պարզ տեսնում էի, թե որքան անհեթեթ է մտածել, թե այս կրոնական գրքերի ժողովածուն արժանահավատ չէ: Ինձ համար ակնհայտ էր այս Գրքի աներկբա գերազանցությունը Ղուրանի եւ հնդիկների աստվածաբանության նկատմամբ: Շատերը ի չարն էին գործադրում Ս. Գիրքը, շատերն էին ցանկանում այն դարձնել անարդարության օրենսգիրք, վավերացնել իրենց

մեղսալից կրքերը: Դա այդպես է, բայց մեզանում ամեն ինչ է այդպես. ամեն բան կարող են չարաշահել: Եվ մի՞թե կարելի է ի չարը գործադրած գեղեցիկի մասին ասել, թե այն չար է ինքնին: Հիսուս Քրիստոսն ասաց, որ ամբողջ Օրենքն ու Մարգարեները՝ այս սրբազան գրքերի բովանդակ ժողովածուն, ամփոփվում է Աստծուն եւ մարդկանց սիրելու պատվիրանի մեջ: Եվ մի՞թե այս գիրքը ճշմարտությունը չէ՝ կիրառելի բոլոր ժամանակների համար. մի՞թե այն Սուրբ Հոգու հավերժ կենդանի խոսքը չէ»: ⁸²

XIX դ. ամենից նշանավոր, սրամտության մեջ իրեն հավասարը չունեցող եւ ամենահամարձակ անհավատը Հայնրիխ Հայնեն (1797-1856) էր՝ գերմանացի մեծ բանաստեղծը: Հիվանդության մահձում, որը նա «դագաղի անկողին» էր կոչում, իր հետ կատարված խոր փոփոխության մասին գրում է այսպես.

«Ո՛չ տեսիլքով, ո՛չ երկնային հափշտակությամբ, ո՛չ երկնային ձայնով, ո՛չ էլ որեւէ հրաշալի երագով կամ այլ հրաշքով բերվեցի ես փրկության ճանապարհ. իմ լուսավորության համար ես պարզապես պարտական եմ այս գրքին ծանոթությամբ: Գրքի՞: Այո՛, եւ այն հնամենի, հասարակ գիրք է՝ բնության պես համեստ ու բնական: Այս գիրքը այնքան անհավակնոտ է ու սովորական, որքան մեզ ջերմացնող արեգակը եւ մեզ հագեցնող հացը: Այն մեզ է նայում այնպես սիրալիք ու օրհնաբեր բարությամբ, ինչպես ծեր տատիկը, որն ամեն օր դողդոջ շուրթերով եւ ակնոցն աչքերին ընթերցում է այս գիրքը: Այս գիրքը շատ հասարակ անուն ունի՝ գիրք՝ Բիբլիա՝: Այն իրավամբ անվանում են նաեւ Սուրբ Գիրք: Ով կորցրել է Աստծուն, վերստին կգտնի Նրան այս գրքում, իսկ ով երբեք չի ճանաչել Տի-

⁸² *Moi temnicy, vospominan*[Sil6v]o Pelliko. Perv. s9 ital6[nsk. SPb. 1886, էջ 11, 40-41

* *Biblia* բառը լատինական ծեւն է հունական *τα βιβλια* բառի, որը թեւ գործածված է հոգնակի ծեւով, սակայն հավաքական՝ մեկ գրքի իմաստ ունի:

րոջը, նրա վրա գրքի միջից կփչի աստվածային խոսքի շունչը: Թանկարժեք քարերից հասկացող հրեաները շատ լավ գիտե-
ին, թե ինչ են անում, երբ երկրորդ Տաճարի հրկիզման ժամա-
նակ, հրին զոհաբերելով զոհաբերության արծաթե ու ոսկե
անոթները, աշտանակներն ու կանթեղները, նույնիսկ խոշոր
թանկարժեք քարերով ընդելուզված քահանայապետի զգես-
տը, փրկեցին միայն Ս. Գրքը: Այն Տաճարի ճշմարիտ գանձն
էր, եւ փառք Աստծո, որ չոչնչացավ՝ հրո ճարակ դառնա-
լով»:⁸³

«Խոստովանություններ» խորագիրը կրող իր մյուս երկուն
մեծ բանաստեղծը, խոսելով իր հոգու ուշ էվոյուցիայի վրա
ազդած Ս. Գրքի ընթերցանության մասին, նկատում է.

«Իմ մեջ կրոնական զգացմունքի վերազարթոնքի համար
ես պարտական եմ այս սրբազան գրքին, որն ինձ համար որ-
քան փրկության աղբյուր էր, նույնքան էլ՝ երկյուղալից զար-
մանքի առարկա: Տարօրինակ է... Ամբողջ կյանքում անգործ
շրջել եմ փիլիսոփայության բոլոր պարի դասարաններով, ան-
ձնատուր եղել մտքի գինարբուքներին, սիրահետել բազմապի-
սի ուսմունքների հետ եւ, բավարարություն չգտնելով, անսպա-
սելիորեն այժմ ընդունում եմ քեռի Թոմի տեսակետը՝ Ս. Գրքի
տեսակետը: Եվ այս սեւամորթ աստվածապաշտի կողքին
նույնպիսի աստվածահաճ երկյուղածությամբ ծնկի եմ իջնում:
Ինչպիսի՞ նվաստացում... Իմ ողջ գիտելիքներով հանդերձ ես
ավելի հեռու չգնացի, քան հազիվ վանկերով կարդացող այս
աղքատ ու անուս սեւամորթը»:⁸⁴

Հայնեն կեղծ բարեպաշտ չէր. նա միշտ անկեղծ ասում էր
այն, ինչ ճիշտ էր համարում եւ զգում անկեղծորեն:

⁸³ Poln. sobr. soqin. G. Gejne pod9 red. P. Vejnberga, izd. Marksa, t. III, էջ 7-8

⁸⁴ Poln. sobr. soqin. G. Gejne; izd. A. F. Marksa, SPb. Á»»0, t. II. էջ 354-355

Հայտնի է, որ Ս. Գիրքը գերմանացի ականավոր բանաստեղծ Կլոպշտոկի (1724-1803)՝ իրեն մեծ հռչակ բերած «Մեսիական» պոեմի հեղինակի ամենասիրելի գիրքն էր: Գյոթեն ասում է, թե Կլոպշտոկը «դաստիարակվել է Աստվածաշնչով եւ, իր բովանդակ գորությունը քաղելով այդ աղբյուրից, ապրել նախահայրերի եւ մարգարեների՝ ինչպես իր հարազատների հետ»:⁸⁵

Եվրոպացի մեծահռչակ բանաստեղծ եւ մեծ մտածող Գյոթեն (1749-1832) պետք է դասել Գիրք գրողի մեծագույն պատվողների շարքը: Նա ի խորոց սրտի «մեծարում էր Աստածաշունչը եւ հավատում նրա աստվածաշնչականությանը»:⁸⁶ Ղեռնելս մանուկ հասակում նրա մեջ ծնվում է Ս. Գրքին հիմնովին ծանոթանալու բուռն ցանկությունը, ինչը եւ հաջողվում է իրագործել հետագայում՝ բնագրով այն ուսումնասիրելու միջոցով:⁸⁷ Իր «Ճշմարտություն եւ բանաստեղծություն» ստեղծագործության մեջ Գյոթեն ասում է.

«Ես ուսումնասիրել եմ Աստվածաշունչը ըստ բողոքական կրոնական դաստիարակության սովորության, ինչպես ասում են՝ երկարությամբ ու լայնությամբ, մաս առ մաս եւ ամբողջությամբ: Ինձ հատկապես առիներում էր Հին Կտակարանի խիստ բնականությունը եւ Նորի գորովալից անկեղծությունը: Առհասարակ Ս. Գիրքն իմ մեջ կասկածի եւ ոչ մի տեղիք չի տվել... Ես հոգով այնքան էի հարազատացել այս գրքին, որ չէի կարող երբեւիցե կրկին երես թեքել նրանից: Ես հեռու էի Ս. Գիրքը որեւէ ծաղրի ենթարկելուց, քանզի հստակ տեսնում էի դրա անազնվությունը: Նման հարձակումներն ինձ համար ոչ միայն արգահատելի էին, այլեւ կարող էին հասցնել կատաղության... Անչափ սիրել եւ գնահատել եմ Աստվածաշունչը, որով-

⁸⁵ Sobran[e soqinen]j Gete v9 perez. russk. pisatelej pod9 red. N. V. Gerbel[; t. X. 5Po7z][i pravda%, 1880, էջ 345

⁸⁶ Նույն տեղում, 287

⁸⁷ Նույն տեղում, էջ 99-102, 199, 287

հետեւ իմ բարոյական դաստիարակւոյթյան գրեթէ ողջ երախտիքը միայն նրան է պատկանում: Իսկ գրքում շարադրված փաստերը, վարդապետւոյթունները, առակներն ու խորհրդանիշերը անջնջելի տպավորւոյթուն էին թողնում եւ այս կամ այն կերպ ներգործում ինձ վրա: Ուստի անարդարացի, ծաղրական ու սուրբգրային իմաստները խեղաթյուրող հարծակումները իմ զգականքն էին հարուցում»:⁸⁸

Հանձարեղ գրողի մեկ այլ երկում հանդիպում ենք Ս. Գրքի արժանիքին վերաբերող հետեւյալ հիասքանչ կարծիքին.

«Աստվածաշունչը երկրագնդի բազում ժողովուրդների եւ սերունդների կողմից իրեն մատուցվող մեծ հարգանքի համար պարտական է իր իսկ ներքին արժանիքին: Այն ոչ թէ պարզապէս ժողովրդական գիրք է, այլ՝ ժողովուրդների գիրք, որովհետեւ մեկ ժողովրդի ճակատագիրը դարձնում է նյութ բոլորի խորհրդանիշը, այդ ժողովրդի պատմւոյթյան շարադրանքը սկսում աշխարհի ծագումից եւ նյութական ու հոգեւոր զարգացման մի շարք աստիճաններով, անհրաժեշտ ու պատահական իրադարձւոյթունների միջով հասցնում մինչեւ հավիտենւոյթյան ամենահեռավոր ոլորտները... Այս ստեղծագործւոյթունն արժանի է, որ լինի ոչ միայն որպէս համընդհանուր գիրք, այլեւ ժողովուրդների համապարփակ գրադարան: Եվ անկասկած է, որ դարեդար կրթւոյթյան մակարդակի բարձրացմանը զուգընթաց, իհարկէ՝ ոչ մակերեսահայաց, այլ իրոք իմաստուն մարդիկ առավել կկարողանան օգտագործել այն մերթ իբրեւ դաստիարակւոյթյան հիմք, մերթ իբրեւ միջոց»:⁸⁹

«Ես համոզված եմ,- գրում է Գյոթեն իր "Spruche in Prosa"-ում,- որքան խոր ես հասկանում Ս. Գիրքը, այնքան հիասքանչ է դառնում այն»:⁹⁰ Անվանի բանաստեղծը ջերմ սիրով ու հար-

⁸⁸ Goethe, Aus meinem Leben. Wahrheit und Dichtung. Berlin, 1873, Th. II, էջ 275; Th. III-IV, էջ 62-63

⁸⁹ Materialien zur Geschichte der Farbenlehre. Goethes s¹/₄mtliche Werke. Stuttgart, Cotta-Klärner. B. XXXV, էջ 42

⁹⁰ Sprüche in Prosa VI. Ebenda, V, B. IV, էջ 162

գանքով էր տոգորված Նոր Կտակարանի հանդեպ՝ այն դարձնելով իր փութեռանդ ուսումնասիրության առարկան:⁹¹ Նա գրում է.

«Բոլոր չորս Ավետարաններն էլ, ըստ իս, լիովին արժանահավատ են, քանզի նրանցում երեւում է Քրիստոսի երեսից ճառագած մեծության ցոլքը, որն այնքան աստվածային էր, որքան առհասարակ աստվածայինը երբեւէ հայտնվել է երկրի վրա... Թող հոգեւոր մշակույթը շարունակ առաջ ընթանա, թող բնական գիտությունները բարգավաճեն թե՛ լայնությամբ, թե՛ խորությամբ, եւ թող մարդկային հոգին կատարելագործվի հնարավորին չափ, այնուամենայնիվ դա չի գերազանցի Ավետարաններում փայլող եւ ճառագող քրիստոնեության բարձրությունն ու բարոյական մշակույթը»:⁹²

Ահա այսպէս Գյոթեն՝ համաշխարհային գրականության այս հասկը, ամփոփում է իր բարոյական եւ պատմագիտական հայացքների էությունը իր վրա երկարատեւ ու անխոնջ աշխատելուց հետո:

Ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Լամարտինը (1790-1869) մեծ հարգանք ուներ Ս. Գրքի հանդեպ: Սքանչելի է նրա գեղեցիկ, խանդավառ կարծիքը Սաղմոսարանի վերաբերյալ.

«Այս աստվածային երգիչը (Դավիթը) հաճախ էր շարժում իմ սիրտը եւ գնայլեցնում միտքս: Երբեք մարդու սրտի լարերը չեն արձակել այսքան մտերմիկ, այսքան սրտառուչ, այսքան զորեղ ակորդներ: Երբեք բանաստեղծի միտքը այսքան բարձր չի խոյացել ու հռչակվել այսքան արժանաբար: Երբեք մարդու հոգին մարդու եւ Աստծո առջեւ չի զեղվել այսքան քնքուշ, այսքան համակրելի եւ այսքան սրտաշարժ արտահայտություններով ու զգացմունքներով: Մարդկային սրտի ամենամկրակական հառաչանքներն իրենց արձագանքն ու ձայնանիշերը գտան

⁹¹ *Sobr. soqin. Gete v9 perez. russk. pisatelej, t. X, էջ 446*

⁹² *Eckermann, Gesprache mit Goethe. Reclam, էջ 263-264*

այս մարդու շուրթերի եւ տավղի վրա: Իսկ եթե տեղափոխվենք այն հեռավոր ժամանակները, երբ այսպիսի երգեր էին հնչում աշխարհում, եթե հասկանանք, որ այդ ժամանակ ամենակիրթ ազգերի քնարերգությունը գովերգում էր սոսկ գինին, սերը, արյունը, մուսանների եւ էլիդայի խաղերում ըմբիշների հաղթանակները, ապա անհնար է խորին զարմանքից չզվարել թագավոր-մարգարեի հընչյունների առջեւ: Նա խոսում է Արարիչ Աստծո հետ, ինչպես ընկերն ընկերոջ հետ, հասկանում եւ բարեբանում է Նրա հրաշքները, կարկանդակում Նրա ճշմարտության առաջ, աղերսում Նրա ողորմությունները, եւ թվում է՝ ավետարանական պոեզիայի նախակարապետող արծազանքն է, որ կրկնում է Քրիստոսի հեզ խոսքերը ավելի վաղ, քան լավեցին դրանք... Այս հռչակավոր սաղմոսից հետո ընթերցեք Հորացիոս կամ Պինդարոս. ըստ իս՝ անհնար է այդ»:⁹³

Անվանի գրականագետ եւ քննադատ Մենցելը (1798-1873) Աստծո խոսքի շնորհալից զորության մասին այսպիսի խոսքեր ունի.

«Աստվածաշունչը գրքերի գիրքն է, նրա մեջ է հավիտենական կյանքի աղբյուրը, բոլոր դժբախտների մխիթարությունը եւ ուժը, անմեղության վահանն ու զենքը եւ զարթոնքը հոգեւոր թմբիրից: Այն ուղեցույց է, որ փրկում է դեպի մեղքի ճանապարհի խոտորվելուց, եւ արդար ու անաչառ դատավոր մեղքի մեջ հարատեւողների համար: Աշխարհում չկա նման մեկ այլ գիրք, որի բովանդակությունը Աստծո հայացքի նման թափանցելի մարդու հոգու խորքերը, որն ամեն ինչում, ընդհուպ մինչեւ մեկ բառը, ճշմարտություն պարունակեր, լիներ ավելի իմաստուն, քան օրենքների բոլոր ժողովածուները, հարուստ լիներ բոլոր խրատների ժողովածուներից ու գեղեցիկ՝ ողջ աշխարհի պոեզիայից, եւ շարժեր սիրտը, ինչպես մոր գորովալից ձայնը: Այս գիրքը արեզակի լույսից ավելի վառ, զմայլելի ոչ երկրային լույսն է, հավիտենության շունչը, որ բոլոր երկրային հաճույք-

⁹³ Lamartine, Voyage en Orient (մեջբերումը՝ ըստ Glaire, La Sainte Bible, t. II, էջ 337)

ների մեջ մարդու հոգում կարոտ է հարուցում երկնային հայրենիքի հանդեպ եւ տառապայալի հոգին համակում անասելի երանությամբ: Այս գիրքը այլ՝ անդրաշխարհի խոսքն է, որի առջեւ դողում էր Բաղդասարը, որից պապանձվեց ու կուրացավ Սողոսը, որը կապում է եւ արծակում, մահվան դատապարտում եւ շնորհում կյանք»:⁹⁴

Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Լակոդերը (1802-1861) գրում է.

«Աստվածաշունչն իր առաջին համարից մինչեւ վերջինը, «Թող լույս լինի» խոսքից մինչեւ Հայտնության գիրքը, հառնում է իբրեւ մի վեհասքանչ շղթա կամ, ավելի ճիշտ, դանդաղ ու մըշտական շարժում, ուր յուրաքանչյուր ալիք, նախորդին հրելով, հասնում է հաջորդին: Դարերը, իրադարձություններն ու վարդապետությունները այստեղ միախլուսվում են կենտրոնից դեպի շրջագիծ եւ շարունակական շաղկապման ընթացքում ո՛չ դատարկ տեղ են թողնում, ո՛չ էլ խճողվում իրար հետ: Այստեղ հնությունն ու իրականությունը միատեսակ անուշահոտություն են բուրում: Սա մի գիրք է, որն ամեն օր բացահայտում է իրեն, որն աճում է բնականորեն, ինչպես մայրին՝ վկան այն ամենի, ինչի մասին ասված է գրքում, եւ որը միշտ խոսում է միայն համընդհանուր տեսակետից ու հավիտենության լեզվով»:⁹⁵

Ս. Գրքում ամփոփված գրական գեղեցկությունները գտան իրենց հիացած մեծարողին ի դեմս ֆրանսիացի ակադեմիկոսի, որը գրում է.

«Փոքր, մութ եւ այլ ազգերից արհամարհված ժողովուրդը մի գիրք ուներ, որը կդառնար մարդկային մտքի մեծագույն կոթողը, եթե Աստծո ստեղծագործությունը չլիներ, եւ որի աստվածային ծագումը ստիպված ընդունում էին նույնիսկ նրա թշնամիները: Հոմերոսը չունի Ծննդոց գրքի նահապետների

⁹⁴ 5Radost6 xrist]anina%, 1892, kn. IX

⁹⁵ Lacordaire, Conférences de Notre-Dame, X Conf., De l'Écriture, Oeuvres, Âd. 1877, t. II, էջ 168

կյանքը նկարագրող պատումներին հավասար մի բան, Պինդարոսը գիշում է մարգարեների վսեմ խոսքին, Թակիդեսը եւ Տակիտոսը չեն համեմատվի Մովսեսի՝ իբրեւ պատմիչի հետ, Ելից եւ Ղեւտացոց գրքերի օրենքները անհամեմատ բարձր են, քան Լիկուրգոսի եւ Նումա Պոմպիլիոսի օրենսդրությունները, Սոկրատին ու Պլատոնին նախքան Ավետարանը արդեն գերազանցել էր Սողոմոնը, որը մարդ արարածի շուրթերին դրված Երգ երգոցով մեզ ավանդեց աստվածային սիրո զարմանահրաշ երգը, իսկ Ժողովողի միջոցով՝ ընկած մարդու մելամաղձոտ հիմնը. վերջապես՝ Ավետարանը, եզրափակելով այս եզակի գրքի (Աստվածաշնչի) դերը, այն կնքեց մինչ այդ մարդկանց անհայտ գեղեցկության դրոշմով, որը մնալով անզուգական՝ երկրի վրա համեմատության որեւէ եզր չունի, ինչպես եւ ողջ քրիստոնեությունը»:⁹⁶

Ս. Գրքի վերաբերյալ նման կարծիք է հայտնել նաեւ ֆրանսիացի քաղաքական գործիչ եւ գրող Գիզոն (1787-1874).

«Ես ընթերցում եւ վերընթերցում էի սրբազան գրքերը: Ես կարդում էի տարբեր հոգեկան վիճակներում, մերթ ուսումնասիրում դրանք իբրեւ մեծ պատմական հուշարձաններ, մերթ զարմանում, թե ինչ վեհ բանաստեղծական ստեղծագործություններ են դրանք: Համենայն դեպս, այս գրքերից ստացած տպավորությունս միանգամայն տարբեր էր նրանից, ինչ ունեցել եմ մարդկային խոսքից տարեգրությունների եւ բանաստեղծության մեջ: Իհարկե, չի կարելի չասել, թե մարդը մեծ տեղ չի գրավում այս սրբազան գրքերում. ընդհակառակը, նա այստեղ ներկայացված է իր կրքերով, արատներով, տկարություններով, տգիտությամբ ու մոլորությամբ հանդերձ: Հրեա ժողովուրդն այստեղ նկարագրվում է կոպիտ, փոփոխական, սնահավատ եւ մյուս ժողովուրդների պես անկատարության ու մոլորությունների հակված: Սակայն հրեա ժողովուրդը իր

⁹⁶ Lacordaire, Considérations sur le système philosophique de M. de Lamennais, ch. III, Oeuvres, t. VI, էջ 67

պատմության միակ կերտողը չէ. կա մեկ ուրիշ Գործիչ՝ Պաշտպան եւ Տիրակալ, Ով շարունակաբար միջամտում է, հրամայում, քաջալերում, առաջնորդում, հարվածում եւ փրկում: Աստված միշտ այստեղ է եւ միշտ գործում է: Նա Մի, Բարձրյալ, Ամենակարող, Արարիչ, Մշտնջենական Աստվածն է: Իսկ հրեա ժողովուրդը, երբ նույնիսկ մոռանում է Աստծուն եւ զանցառում Նրա օրենքները, միշտ հավատում է, երկյուղում եւ ապավինում Նրան: Աստվածաշունչը պոեմ չէ, ուր մարդը պատմում ու գովերգում է իր չաստվածների արկածները սեփական արկածներով հանդերձ. այն ճշմարիտ պատմություն է, հարատեւ գրույց Աստծո եւ մարդու միջեւ՝ ի դեմս հրեա ժողովրդի: Սա, մի կողմից, Աստծո կամքն ու գործողությունն է, մյուս կողմից՝ մարդու ազատությունը եւ հավատը՝ մերթ բարեպաշտ ներդաշնակությամբ, մերթ գուժկան անհամաձայնությամբ: Որքան շատ էինք մենք ընթերցում սրբազան գրքերը, այնքան ավելի էինք զարմանում, որ լուրջ ընթերցողներից ոչ բոլորն են միեւնույն տպավորությունը ստանում, եւ որ շատերը չէին ընդունում դրանց աստվածաշնչականությունը՝ Աստծո շնչով գրված լինելը, ինչը այնքան ակնհայտ է նրանց մեջ եւ այնքան օտար՝ որեւէ այլ գրքի»:⁹⁷

Մահկանացուն կնքելուց առաջ կազմած իր կտակի առաջին էջում Գիզոն գրել է. «Ես տեսնում եմ Աստծո ներկայությունն ու ներգործությունը ոչ միայն տիեզերական ներդաշնակության մեջ եւ [մարդկային] հոգու ներքին կյանքում, այլեւ հասարակությունների պատմության եւ առավելապես՝ Հին եւ Նոր Կտակարանների մեջ: Ես խոնարհվում եմ Ս. Գրքի եւ Ավետարանի խորհուրդների առջեւ»:

Ֆրանսիացի անվանի եւ շատ շնորհալի վաղամեռիկ բանաստեղծ Ալֆրեդ դե Մյուսեի (1810-1857) մասին պատմում են, թե նա հաճախ էր արտասպելով, սուրբ Աետարանը ձեռքին

⁹⁷ Gizo, Razmywlen][o su\nosti xrist]ansk. very, M. 1865, էջ 91-92

չըրջում իր սենյակում. ընդ որում, սովորաբար բացականչում էր. «Ո՛հ, մարդը չի կարող այսպիսի գիրք գրել. դա Աստծո ստեղծագործությունն է»:⁹⁸

Իր մանկության մի իրադարձության մասին ուրախ սրտով հիշելիս աշխարհահռչակ Վիկտոր Հյուգոն (1802-1885) վկայում է, որ Ս. Գրքի ընթերցանությունը ոչ միայն մեծերի, այլև փոքրերի վրա բարերար ազդեցություն ունի՝ նրանց մեծ հոգեւոր բերկրանք պատճառելով.

Երեք եղբայր էինք մենք. ես կրտսերն էի:

Մի օր խաղալ մենք կամեցանք. մայրիկը թույլատրեց:

Միայն, ասաց, չարություն չանե՛ք,

Ծաղիկներն այգու չտրորե՛ք, սանդուղքներով չմազլցե՛ք:

Իսկ մենք իսկույն սանդուղքով ձեղնահարկ սողոսկեցինք.

Դժվար էր մազլցելը, բայց ինչ-որ կերպ մտանք:

Բազում իրերի մեջ վիթխարի մի պահարան տեսանք...

Վրան էլ՝ սեւաթույր կազմով մի գիրք:

Դժվար էր իջեցնելն այդ ծանր ու մեծ գրքի,

Բացեցինք այն եւ խունկի հոտ առանք՝ Աստծո տան հոտ:

Անհուն էր ցնծությունը մեր,

Նկարներին էլ վերջ չկար:

Անկյուն մտանք. էլ ի՞նչ խաղալ...

Եկեք զննենք ու մի կերպ ընթերցենք:

Իսկ գիրքն այդ արդեն վեց սյուների վրա էր

Մեր երեքիս զույգ ծնկների:

Երկար մենք կարդացինք այդժամ.

Այդպես ամեն օր այնտեղ էինք ծվարում:

Աստվածաշունչն էր գիրքն այդ մեծ:

Երբեմն այն անհաս էր մեզ, բայց միշտ՝ անուշաբույր:

⁹⁸ Տե՛ս “Semaine religieuse”, 1895

Սովորություն դարձավ բոլորիս համար մանկական հոգով
Սրբազան պատումների խորքերը թափանցել,
Միայն թե կարդալիս այն զգացումն էր մեզ տիրում,
Ասես ձեռքով Աստծո թռչնակի փետուրներն էինք քնքշորեն
շո-

յում:⁹⁹

Անգլիացի անվանի արձակագիր Չարլզ Դիկենսի (1812-1880) նամակներից մեկում, որը նա իր մահկանացուն կնքելուց երկու տարի առաջ ուղարկել էր Ավստրալիա մեկնող իր որդուն, այսպիսի հիասքանչ տողեր կան.

«Քեզ համար ընտրած գրքերի շարքում ես գետեղել եմ Ավետարանը: Ընդ որում, առաջնորդվել եմ այն նույն ոգով, որն ինձ ստիպեց կրճատել այն քեզ համար, երբ դու տակավին փոքր երեխա էիր: Իմացի՛ր, բարեկա՛մս, որ այն երբեւէ հրատարակված եւ հրատարակվելիք գրքերից ամենակատարյալն է: Նա քեզ լավագույն խրատները կտա, որոնցով կարող է առաջնորդվել այն մարդը, ով ցանկանում է փորձել անկեղծ եւ հավատարիմ լինել իր պարտականությունների կատարման մեջ: Ամեն անգամ, երբ եղբայրներիցդ մեկը գնում էր մեծ կյանք մտնելու, ես նրան բարեմաղթում էի նույն խոսքերով: Ես աղաչում էի նրան առաջնորդվել այդ գրքով՝ ուշադրություն չդարձնելով մարդկանց մեկնություններին ու հերյուրանքներին: Դու կհիշես, որ հայրական տանը ձեզ ոչ ոք երբեք չէր հարկադրում հետեւել կրոնական արարողությունների եւ հասարակ ձեւականությունների: Ես միշտ հոգացել եմ չժանրաբեռնել իմ երեխաների միտքը այնպիսի բաներով, որոնց նշանակությունը նրանք դեռեւս ընդունակ չեն ըմբռնել: Ուստի կհասկանաս, թե ինչու հենց այս պահին եմ ցանկանում, որ դու կիսես իմ համոզմունքները քրիստոնեական կրոնի ճշմարտու-

⁹⁹ *Sobranje stixotvorenj V. Glgo v perevodax9 russk. pisatelej pod9 red. I. F. Txorhevskago, Tiflis6 1896, էջ 287-288*

թյան եւ գեղեցկության խնդրում: Այն ուղղակի Քրիստոսից է բխում, եւ եթե դու հետեւես այդ ճշմարտությանը սրտի միամտությամբ, անկեղծորեն ու հնազանդաբար, միշտ խույս կտաս չար շավիղներից: Եվս մի բան այս առնչությամբ: Մի՛ հրաժարվիր զօր ու գիշեր աղոթքի մեջ հարատեւելու քո սովորությունից. ես ինքս երբեք չեմ հրաժարվել դրանից եւ գիտեմ, թե ինչ մխիթարություն էի գտնում դրանում»:¹⁰⁰

Աստվածաշնչի առաջին իսկ ծանոթությունը արտասովոր հզոր տպավորություն գործեց անվանի գիտնական, գրականագետ եւ քննադատ Ֆրանչեսկո Դե-Սանկտիսի (1818-1883) վրա: Իր կյանքից մի դեպք հիշելով, որ պատահել էր ուսանողների հետ գրականության պարապմունքի ընթացքում, նա ասում է.

«Ես, ինչպես նաեւ իմ ուսանողները երբեք Աստվածաշունչ չէինք կարդացել: Այն ժամանակ, ամենայն կրոնականի հանդեպ ընդունված արհամարհալից անտարբերության պայմաններում, Աստծո խոսք համարվող Աստվածաշունչը սարկագմից բացի ոչինչ չէր հարուցում: Մի տեղ, չգիտեմ որտեղ, ես կարդացի այս գրքի հրաշալիքների մասին՝ իբրեւ վսեմ պերճախոսության կոթողի, եւ ընթերցեցի Հոբի գիրքը որպես դասախոսություններիս մեջ ընդգրկված առարկա: Ես ապշեցի: Իմ ուսումնասիրած դասականների մեջ ոչինչ չէի գտնում, որը կարող էր համեմատվել այս գրքի մեծության հետ: Տպավորություններս անմիջապես հայտնեցի ուսանողներին: Մինչ այդ ես արդեն դասախոսություններ էի կարդացել չարի ծագման եւ Ս. Գրքի բովանդակության վերաբերյալ: Սակայն երբ կարդացի բովանդակ գիրքը, իմ զարմանքին սահման չկար: Շուտով գլխովին անձնատուր եղանք Ս. Գրքի ուսումնասիրությանը. այն հիշեցնում էր հեռավոր ու անհայտ երկիր կատարվող մի ճամփորդություն: Նորադարձների խանդավառությամբ մենք մոռացանք մեր դասականներին, եւ ամիսներ շարունակ Աստվա-

¹⁰⁰ Otdyx9 xrist]anina, 1906 no[br6, էջ 58-59

ժաշունչն էր այն միակ գիրքը, որի առիթով եւ որի շուրջ խորհում էինք: Ի շարս այլոց, մեր այս նոր հայտնագործության մեջ ինչ-որ անասելի հանդիսավոր եւ հոգին վսեմացնող բան կար: Չարմանում եմ, թե ինչու մեր դպրոցներում, ուր այնքան շատ ժամանակ է հատկացվում իրականում անօգուտ առարկաների սերտմանը, երբեք ուշադրություն չի դարձվել Աստվածաշնչի անթուրգիային՝ վեհագույն բարոյական զգացմունք առաջացնելու նպատակով: Մարդուն շեղել ինքն իրենից, նրան տրամադրել, որ իր անձը զոհի հանուն բոլոր մարդկային իդեալների՝ ահա այսպիսին է բարոյականությունը, այսպիսին է Քրիստոսի կրոնը, այս է Քրիստոսին նմանվելը»:¹⁰¹

Մի երիտասարդ անգլիացի ուսանող, ցանկանալով արձակուրդն անցկացնել իր ընտանիքի հետ, Օքսֆորդից տուն էր վերադառնում: Երկաթգծի մոտ նա զրույցի է բռնվում մի ճամփորդի հետ: Խոսակցության թեման գրականությունն էր եւ պոեզիան: Երբ նրանք հասան այն կայանին, ուր երիտասարդը պիտի իջներ, անծանոթ ուղեկիցը, մի պահ կանգնեցնելով նրան, ասաց. «Երիտասարդ, եւս մեկ խորհուրդ. ամեն օր կարդացեք գոնե մեկ համար Աստվածաշնչից եւ Շեքսպիրից: Ս. Գիրքը ձեզ կուսուցանի, թե ինչպես զրուցել Աստծո, իսկ Շեքսպիրը՝ մարդկանց հետ»: Ուսանողը միայն հետագայում իմացավ, որ իր հետ խոսողը ոչ այլ ոք էր, քան հռչակավոր բանաստեղծ Թենիսոնը (1809-1892):¹⁰²

Անգլիացի նշանավոր գրող, անվանի բարոյախոս, գեղագետ եւ հասարակական բարեփոխիչ Ջոն Ռյոսկինի (1819-1900) համար Աստվածաշունչը իր կյանքի սեղանի գիրքն էր, որի աներկբա ճշմարտությունները հանձին նրա միշտ գտել էին ամենաջերմեռանդ ու ամենանախանձախնդիր քարոզչին:¹⁰³ Կարելի է ասել, որ նա դաստիարակվել էր Շննդոց գր-

¹⁰¹ Pribavlen][k Cerkovnym9 Vedomost[m9, 1903, էջ 1765-1766

¹⁰² Pestalozzi, Die christliche Lehre in Beispilen. Neue Folge, էջ 23

¹⁰³ Տե՛ս G. Brİnges9, R2skin9 i Bibl][, perez. s9 franc. L. P. Nikiforova, M. 1902. տարբեր տեղերում

քով, որը փոխարինում էր հեքիաթներին, եւ վաղ մանկությունից իր միտքը սնել էր մարգարեների եւ առաքյալների խոսքերով: Իր ինքնակենսագրության մեջ 70-ամյա Ռյոսկինը գրում է.

«Հազիվ էի տիրապետել վարժ ընթերցելու արվեստին, երբ մայրս սկսեց ինձ հետ Աստվածաշունչ ընթերցել, ինչը երբեք չընդհատվեց ընդհուպ մինչեւ Օքսֆորդի համալսարան ընդունվելը... Այժմ բացել եմ իմ ամենահին Աստվածաշունչը՝ հնամաշության առումով հինը, 1816 թ. էդինբուրգում շատ սեղմ տպագրությամբ հրատարակված այս փոքրիկ գիրքը: Այս տարիների ընթացքում այն դեղնել է ու ճմռթվել, բայց գործածվելուց չի կեղտոտվել, բացի միայն Թագավորաց գրքի Ը գլխի եւ Երկրորդ Օրենքի ԼԲ գլխի էջերի ստորին մասերից, որոնք մաշվել են ու սեւացել, որովհետեւ այդ գլուխների ուսումնասիրությունը ինձ հաջողվել է մեծ ջանքերի գնով: Եվ հենց այստեղից դուրս սահեց մայրիկիս ձեռքով կազմված գլուխների ցանկը, որոնք նա պարտադրում էր ինձ սերտել, եւ որոնք ծառայեցին իմ հոգու զարգացմանը... Եվ իսկապես, թեեւ հետագայում ես զգալի գիտելիքներ ձեռք բերեցի մաթեմատիկայի, օդերելութաբանութեան եւ այլ գիտությունների մեջ, աշակերտեցի բազում ուսուցիչների, սակայն համարձակ խոստովանում եմ, որ այս գլուխների յուրացումը (որի համար պարտական եմ մայրիկիս) իմ բովանդակ կրթության ամենաարժեքավոր, ուստի եւ միակ էական մասն է եղել»:¹⁰⁴

«Ո՛չ վախը, ո՛չ կասկածը, ո՛չ էլ սխալները երբեք չեն խանգարել ինձ հավատարիմ մնալ Ս. Գրքի այս գլուխներին: Եվ երբեք չեմ դավաճանել այն հորդորին, որը պետք է ամենից հաճախ կրկնեի. «Թող ողորմությունն ու հավատարմությունը չպակասեն քեզանից» (Առակ. Գ 3)»:¹⁰⁵

¹⁰⁴ Praeterita, I, էջ 53, 58

¹⁰⁵ Fors Clavigera, II, pis6mo 05

Սուրբգրային այն խոսքերը, որոնք Ոյոսկինը սերտել էր մանուկ հասակում, երբեք չխամրեցին ու չմատնվեցին մոռացության, այլ առավել իմաստավորվեցին գրողի մտքի աճին եւ զարգացմանը զուգընթաց: Ս. Գրքի քաջատեղակությանը հետագայում հավելված գիտելիքները, հատկապես անգլիական, համաշխարհային եւ դասական գրականությունից ու բնագիտությունից, բնավ չէին հակասում միմյանց: Ս. Գիրքը Ոյոսկինի համար դարձավ նրանց կապող օղակը կամ, ավելի ճիշտ, նրանց հենարանը:

Ամենազանազան երեւոյթներն ուղղվում էին այդ միասնական կենտրոնին, եւ բովանդակ չքնադագեղ արարչությունը Ոյոսկինին թվում էր ոչ թե մեկուսի ու անկախ փաստերի ամբողջություն, այլ մի բան, որը եթե ոչ իր տեղը, ապա գոնե իր նմանությունն ունի սուրբգրային աշխարհում եւ ենթակա է Աստծո խոսքին: Ոյոսկինի գաղափարներում եւ ձգտումներում, հակումների ու զգացմունքների մեջ մշտապես զգացվում է նրա վաղ եւ սերտ հոգեւոր շփումը Աստծո Գրքի հետ: Խոր ծերության մեջ նա գրում է.

«Աստվածաշունչը ինձ հնարավորություն ընձեռեց գնահատել Հոմերոսի խորհրդանշաններն ու Հորացիոսի հավատը: Մանկուց ինձ պարտադրում էին երկյուղածորեն կարդալ Աստվածաշնչի եւ մարգարեությունների յուրաքանչյուր խոսքը, որն էլ հարգալից ուշադրություն սովորեցրեց ինձ, ինչը հետագայում իմ աչքին մեծապես կարեւորեց աշխարհիկ գրողների շատ ստեղծագործություններ, որոնք թեթեամիտ են թվում ոչ կրոնասեր ընթերցողի համար»:¹⁰⁶

Պատանեկան տարիքից մինչեւ մահ անգլիական գրականության այս փայլուն ներկայացուցչի համար Ս. Գիրքը եղել է նրա խռովահույզ կյանքի անբաժան ուղեկիցն ու մտերիմ ընկերը: Ոյոսկինն իր հիշողության եւ հոգու մեջ էր պահում Աստվածաշունչը, քանզի տեսնում եւ զգում էր, որ մարգարեների

¹⁰⁶ 5Am]enska [Bibl] [% , gl . III , – 52

Եւ Քրիստոսի վարդապետության մեջ է ամփոփված հավերժ կենդանի, արգասաբեր եւ գործուն բարոյական ուժը: Նա հավատում էր Ս. Գրքին եւ երբեք չէր տարակուսում նրա իսկությանը, այդ իսկ պատճառով իր կյանքի բոլոր պարագաներում միշտ առաջնորդվում էր նրանով: Ս. Գրքի կրոնական գաղափարները ահռելի ազդեցություն են ունեցել այդ խորաթափանց մտածողի գիտական եւ գեղարվեստական աշխարհայացքի վրա: Հին եւ Նոր Կտակարանների լույսով են ողողված ոչ միայն Ռյոսկինի երկերի ու մտքերի «գլխավոր գազաթները», այլեւ նրա ողջ գործունեությունը: Պատահականորեն բացեք նրա որեւէ հատորը եւ, եթե քաջածանոթ եք սուրբգրային բնագրերին, ապա առաջին հերթին ձեզ կցնցի աստվածաշնչական փոխառությունների առատությունը: Սուրբգրային շունչը զգացվում է նրա յուրաքանչյուր էջում՝ մերթ մեջբերման, մերթ պատկերի, մերթ սաղմոսի կամ առաքելական թղթի մեկնաբանվող ու զարգացվող որեւէ մտքի ձեւով: Նրա ստեղծագործությունների նույնիսկ ամենահպանցիկ քննությունը բավական է անմիջապես տեսնելու, որ մարգարեների եւ ավետարանիչների լեզուն Ռյոսկինը յուրացրել է այն աստիճան, որ որոշ էջերում օգտագործում է սուրբգրային խոսքեր եւ ամբողջական դարձվածքներ: Իր «Գրքային գանձեր»-ի հիմնական գաղափարները Ռյոսկինն առատորեն քաղել է Ս. Գրքից, որոնք նրա այս երկին հաղորդում են արտասովոր ինքնատիպություն, հատկապես վեհ բարոյական եւ ընկերային հնչեղություն: Նրա համար Աստվածաշնչի «Աստծո օրենքը անփոփոխ հավիտյանների համար է կարգված, ինչպես արեգակը»,¹⁰⁷ բոլոր դարերի եւ ժողովուրդների համար է գրված: Անգլիացի բարոյագետի կարծիքով Ս. Գիրքը անցյալի հիշատակարանը, անցած-գնացածի պատմական վկան չէ, ո՛չ. այն պետք է ներթափանցի մեր կյանք, առաջնորդի ժամանակակից հասարակարգը, լուծի արդիական խնդիրներ: Նրա մեջ անթելված բա-

¹⁰⁷ 5Sovrem. Hivopiscy% , V, part 7, chap. IV, – 32

րոյական եւ ընկերային գաղափարները պետք է ճանապարհ հարթելով մտնեն կյանք, ազդու կերպով ներգործեն առանձին անհատների եւ ողջ հասարակության վրա: Ըստ Ռյոսկինի՝ Հին Կտակարանի (իր արդարության օրենքով) եւ Նոր Կտակարանի (իր սիրո օրենքով) սերտողությունը պետք է դառնա յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունը:

Անգլիացի հայտնի գրող-բարոյախոս Ս. Սմայլսը (1816-1904) ասում է.

«Ի գլուխ բոլոր կենսագրությունների կանգնած է մեծագույն կենսագրությունը՝ Գիրք գրոցը: Իրոք, ի՞նչ է պարունակում Աստվածաշունչը՝ բոլոր գրքերից սրբագնագույնը եւ վեհագույնը, երիտասարդության այս դաստիարակը, հասունության ուղեցույցն ու ծերության մխիթարիչը: Ոչ այլ ինչ, քան սուրբ այրերի՝ նահապետների, մարգարեների, թագավորների եւ դատավորների վարքեր, որոնք եզրափակվում են մեծագույններից մեծագույնով՝ Նոր Կտակարանում նկարագրված Կյանքով: Որքա՞ն օգուտ են մարդուն տվել այդ գրքում ներկայացված վեհ կերպարները: Որքա՞ն շատերն են նրանից քաղել իրենց լավագույն ուժերը, իրենց բարձրագույն իմաստությունը. որքա՞ն մարդու համար է ծառայել այն որպես հոգեւոր լավագույն սնունդ եւ խրատանի»:¹⁰⁸

Ֆրանսիական ակադեմիայի անդամ, տաղանդավոր բանաստեղծ Ֆրանսուա Կոպեն (1842-1908) հրաշալի եւ անզուգական խոսքեր է ասել Ս. Գրքի մասին: Իր կյանքում կատարված մի դեպքի առիթով նա գրում է.

«Մի անգամ մահվան հոտն առա. հանկարծ հոգումս ծագեց հանդերձյալ դատաստանի վախը եւ հավիտենական կյանքի ծարավը: Անմիջապես ձեռքս առա Աստվածաշունչը: Սկսեցի կարդալ ինչպես հարկն է՝ պարզ հավատավոր սրտով: Հանկարծ այս մեծ գրքի յուրաքանչյուր էջի, գրեթե յուրաքանչյուր

¹⁰⁸ S. Smajls9, Xarakter9 Perev. s9 angl. S. Majkovojs, SPb. 1889, էջ 260-291

բառի մեջ տեսա հավիտենական ճշմարտությունն իր փայլով: Այժմ ես խորապես հավատում եմ այս գրքում տեղ գտած բոլոր հրաշագործություններին, որոնք ավետարանիչները նկարագրում են այնպես մանրամասն ու վստահաբար, որ ամենայն հստակությամբ ի հայտ են գալիս դրանց կատարյալ անկեղծությունը եւ արժանահավատությունը: Այո՛, արդարեւ, Հիսուսը խուլին վերադարձրել է լսողությունը, կույրին՝ տեսողությունը, անդամալուծին՝ շարժունակությունը, մեռածներին՝ կյանքը... Ես կրկին հավատացի Քրիստոսին եւ ցանկանում եմ պահել այդ հավատը իմ սրտում: Ո՛վ խեղճ մարդ, մի՛ անսա նրանց, ովքեր ասում են, թե հավատը մեռած է: Բա՛ց արա Գիրքը եւ գնա՛ խաչի մոտ՝ Հիսուսի մոտ. այդժամ կգտնես քո հոգու հանգիստը»:¹⁰⁹

Օտար հեղինակներից այժմ դառնանք ռուս գրողներին:

Ռուս նշանավոր քրիստոնյա բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկին (1783-1852), որի բարի անունը ռուս գրականության մեջ շողում է հեզ լուսաճաճանչով, մանկուց եղել է կրոնասեր, եւ կենդանի հավատը աստվածային Հայտնության ու նախախնամության հանդեպ երբեք չի լքել նրան: Իր ժամանակակից Ի. Ա. Պլետնեւի վկայությամբ՝ նա աչքի էր ընկնում Տիրոջ խոսքի հանդեպ իր զարմանահրաշ եւ զորավոր սիրով:¹¹⁰ «Աստվածաշունչը» խորագրով բանաստեղծության մեջ Ժուկովսկին ձայնում է.

Ո՞վ սեր չի տածել, ո՞վ չի զմայլվել

ի վերուստ հրեաներին շնորհված այս գրքով:

Ռոմանտիկ բանաստեղծը Նոր Կտակարանի ընթերցանությունը եւ սերտողությունը «կյանքի գլխավոր գործ»¹¹¹ էր համարում: Մարդու հոգեւոր կյանքում Ավետարանի նշանակության մասին նրա մտքերը շարադրված են «Կապիտան Բոպ-

¹⁰⁹ Voskresnyj Blagovest9, 1907, ÷ 7, էջ 32

¹¹⁰ Soqinenje i perepiska P. A. Pletneva, t. III, էջ 658

¹¹¹ Ժուկովսկու խոսքերը, նույն տեղում, էջ 649

այր» վիպակում, որտեղ կրտսեր նավաստին բարոյական կործանումից փրկում է կոպիտ ու դաժան կապիտանին՝ նրա համար Ավետարան կարդալով եւ աղոթքով դիմելով Քրիստոսին: Ժուկովսկու՝ ավետարանական խոսքի հանդեպ սիրո հուշարձանը դարձավ Նոր Կտակարանի սլավոններենից ռուսերեն նրա թարգմանությունը, որը բանաստեղծը նախատեսել էր իր փոքրահասակ երեխաների համար:¹¹²

Որպիսի~ խորին երկյուղով ու հազվագյուտ հետաքրքրությամբ էր Աստվածաշնչին վերաբերվում ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը (1799-1836): Սուրբ Գիրքը նա սիրում էր ամբողջ հոգով, կլանվում նրանով եւ խորապես խորհրդածում նրա բովանդակության շուրջ՝ տոգորված զուտ մանկական դյուրահավատությամբ:

«Աստվածաշունչը սկզբից մինչեւ վերջ ընթերցել եմ,- ասում է Պուշկինը,- Միխայլովսկում՝ աքսորում, բայց մինչ այդ էլ բազմիցս կարդացել եմ Ավետարանը»: Ապա նա պատմում է, որ «Մարգարեն» բանաստեղծությունը ներշնչվել է իրեն Եզեկիել մարգարեի գրքի մի հատվածի ընթերցանությունից: Ժամանելով Սվյատոգորյան վանք՝ հոգեհանգիստ պատվիրելու, բանաստեղծը մոնթի՝ վանականի աշակերտի կողմից հրավիրվում է խուց՝ սպասելու: «Սեղանի վրա,- շարունակում է նա,- բացված Աստվածաշունչ կար. նայեցի էջին՝ Եզեկիելի գիրքն էր: Կարդացի մի հատված, որն այլ խոսքերով արտահայտեցի «Մարգարեն» բանաստեղծության մեջ: Այն անսպասելիորեն ապշեցրեց ինձ, այն մի քանի օր ինձ հետապնդեց, եւ մի գիշեր ես գրեցի իմ բանաստեղծությունը... Եզեկիելի գիրքը ես առաջ էլ կարդացել էի, սակայն այս անգամ այն ինձ զարմանահրաշ թվաց. կարծում եմ, որ ավելի լավ հասկացա այն: Ս. Գրքին շատ հատուկ է՝ որքան վերընթերցես, որքան խորամուխ լինես նրա մեջ, այնքան ավելի կլուսավորվի ամեն ինչ եւ կընդլայն-

¹¹² Հարկ է նշել, որ Նոր Կտակարանի սինոդալ թարգմանությունը հրատարակվել է ավելի ուշ՝ 1860-1861 թթ.:

վի: Բայց ես երբեք հերթականությամբ չեմ կարդում. պատահականորեն բացում եմ Գիրքը եւ ընթերցում, քանի դեռ այն ինձ հաճույք է պատճառում, ինչպես որ ցանկացած այլ գիրք»:¹¹³

Իր բարեկան իշխան Վյազեմսկու որդուն հորդորելով ուշադիր եւ մշտապես ընթերցել սրբազան գրքերը՝ Պուշկինը դրանք անվանում է «կենդանի ջրի աղբյուր»:¹¹⁴

«Կարծում եմ,- խորհրդածում է նա,- որ մենք երբեք ժողովրդին Աստվածաշնչից ավելի լավ բան չենք տա... Ս. Գրքի ոճը հասկանալի է դառնում միայն, երբ սկսում ես ընթերցել այն, քանզի այդտեղ ես գտնում ողջ մարդկային կյանքը: Կրոնն է ստեղծել արվեստն ու գրականությունը եւ յուրաքանչյուր մեծարժեք բան վաղնջական ժամանակներից ի վեր: Եվ այս ամենը կախված է այդ կրոնական զգացմունքից, որը մարդուն հատուկ է այնպես, ինչպես գեղեցկության գաղափարը բարու գաղափարով հանդերձ: Սա նկատելի է նույնիսկ ժողովրդական հեքիաթներում, ուր միշտ չարագործներն այնքան զազրելի են: Ամեն մի վայրենի պատկերացում ունի գեղեցիկի մասին, թեպետ եւ՝ շատ կոպիտ ու անճոռնի. նա էլ ունի զարդեր, ցանկանում է դուր գալ, ինչն արդեն սիրո նախնադարյան ձեւն է: Առանց դրա չէին լինի ո՛չ փիլիսոփայությունը, ո՛չ պոեզիան, ո՛չ բարոյականությունը: Ճիշտ եմ վարվում անգլիացիները, որ երեխաներին Աստվածաշունչ են տալիս»:

Ապա բանաստեղծը, ի պատասխան այն սովորական հակաճառության, թե Ս. Գրքում երեխաների համար անպատշաճ ու անօգտակար բաներ կան, բացականչում է. «Ինչպիսի~ մոլորություն: Ամեն ինչ մաքուր է մաքուրների համար. երեխայի անմեղ երեւակայությունը երբեք չի պղծվի, որովհետեւ մաքուր է այն: «Հազար ու մի գիշերը» երբեք չի այլասերել եւ ոչ մի

¹¹³ Zapiski A. O. Smirnovoj, SPb, 1895, q. I, էջ 266-267

¹¹⁴ Տե՛ս A. F. Koni, Oqerki i vospominan][, req6 5Nravstv. oblik9 Puvkina%. SPb. Ա»՜Օ

երեխայի, իսկ նրա մեջ անվայել շատ բան կա: Ս. Գրքի պոեզիան հատկապես մատչելի է անաղարտ երեւակայության համար: Երեխաներս ինձ հետ միասին բնագրով կկարդան Ս. Գիրքը: Այն համաշխարհային գիրք է: Հոբի գրքում ամփոփված է ողջ մարդկային կյանքը»:¹¹⁵

Մեծ բանաստեղծը հատկապես շատ էր խորհրդածում Ավետարանի շուրջ. նա նշում էր Ավետարանի հավետ նոր գրավչությունը աշխարհից հագեցածների ու վիատվածների համար: Գլինկան պատմում է, որ մի անգամ տեսել է Պուշկինին Ավետարանը ձեռքին, ընդ որում հանձարեղ գրողն ասել է նրան. «Ահա՛ աշխարհի միակ գիրքը. նրանում ամեն ինչ կա»:¹¹⁶

Այս մեծագույն բանաստեղծը խոնարհվում էր Ավետարանի պոեզիայի առջեւ: Այս գրքով հիացած՝ նա ասում էր. «Ղուկասի Ավետարանը, որ ընթերցվում է մարտի 25-ին*, լավագույն պոեմն է. ես երբեք չեմ կարողանա գեթ փոքր-ինչ դրա նման մի բան գրել»:¹¹⁷

Բարոյական կատարելության մասին մտքերի մեջ խորասուզված ռուս ականավոր քննադատ Վ. Գ. Բելինսկին (1810-1848) համակ ուշադրությամբ էր քննում Ավետարանը, ուր նրան ապշեցնում էր Քրիստոսի մեծ եւ ինքնանվաստացման աստիճանի խոնարհ Անձը, Նրա համապարփակ սերը մարդկանց հանդեպ: Բելինսկին խոնարհվում էր խոնարհության մեծագույն իդեալի՝ Քրիստոսի առջեւ: Նրա եզրակացությամբ՝ միայն Քրիստոսն է մարդկային կատարելության իդեալը:¹¹⁸ Ուստի լավագույն գիրքը, ուր ասված է այն ամենը, ինչ հար-

¹¹⁵ Zapiski A. O. Smirnovoj, էջ 162-163

¹¹⁶ Նույն տեղում, էջ 91

* Նկատի ունի Եկեղեցում ընթերցվող սուրբգրային համապատասխան հատվածը՝ ընթերցվածը:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 266

¹¹⁸ Soqinen][V. G. Belinskogo, izd. Pavlenkova, t. I, SPb. 1896, էջ 183

կավոր է իմանալ մարդուն, ըստ Բելինսկու՝ Ավետարանն է՝ սիրո հիմնական գիրքը:

«Մի գիրք կա,- ասում է նա,- որի մեջ ասված եւ լուծված է ամեն ինչ, որից հետո իր դերեւ են ելնում բոլոր կասկածները. այդ անմահ, սուրբ, հավիտենական ճշմարտության գիրքը Ավետարանն է: Մարդկության բովանդակ առաջընթացը, գիտության, փիլիսոփայության բոլոր նվաճումները պայմանավորված են միմիայն այդ երկնային գրքի խորհրդավոր խորքերի մեջ առավելագույն ներթափանցմամբ, նրա կենդանի, հավերժ անանց խոսքերի գիտակցումով... Ավետարանի հիմքը ճշմարտության հայտնությունն է սիրո եւ շնորհի միջոցով»:¹¹⁹

«Ավետարանը տարբերվում է նրանով, որ հավասարապես համոզիչ, հավասարապես հստակ ու հասկանալի է խոսում բոլորի սրտերի, բոլորի հոգիների, բոլորի մտքերի հետ, ովքեր անկեղծորեն տենչում են իրենց ծարավը հագեցնել նրա ճշմարտություններով: Գիրքը հավասարապես հասկանում է ե՛ւ արքան, ե՛ւ աղքատը, ե՛ւ իմաստունը, ե՛ւ տգետը: Այո՛, նրանցից յուրաքանչյուրն էլ կհասկանա. քանզի մեկը կհասկանա ավելի շատ ու ավելի խոր, քան մյուսը, բայց բոլորն էլ հավասարապես կընկալեն ճշմարտությունը: Ընդ որում, իր իմաստությամբ հպարտ իմաստունը ավելի քիչ կհասկանա Ավետարանը, քան հասարակ մարդը, որը ծարավ է ճշմարտության իր սրտի պարզությամբ եւ խոնարհությամբ, ուստի եւ անմիջականորեն արձագանքում է նրան»:¹²⁰

Ռուս քննադատի կարծիքով՝ Ավետարանը նորոգեց հին, զառամյալ աշխարհը՝ նրան շնորհելով այնպիսի հարուստ բովանդակությամբ կյանք, որը նա անգոր է սպառել հավիտյան: «Ինչ որ կա հիմա, ինչով հպարտանում ու հրճվում է ժամանակակից մարդկությունը, այդ ամենը աճել է աստվածային Նոր Կտակարանի անանց խոսքերի բեղմնավոր սերմից: Սոսկ նրա

¹¹⁹ Soqin. V. Belinskogo, izd. Ô-oe, q. II, M. 1875, էջ 313

¹²⁰ Soqinen] [, q. III, M. 1876, էջ 52

մեջ կարելի է ու հարկավոր է փնտրել քրիստոնեական Եվրոպայի՝ աշխարհի այս փոքրագույն մասի հաղթանակի խորհրդավոր պատճառները իր տարածքով հսկայական, սակայն թույլ ու թշվառ, մնացյալ ոչ քրիստոնեական աշխարհի նկատմամբ»:¹²¹

Հռչակավոր գրող Ա. Ս. Խոմյակովը (1804-1860) իր «Աստղեր» բանաստեղծության մեջ պատկերավոր կերպով նկարագրել է Ավետարանում մարդու առջեւ բացվող մտքերի խորությունն ու հարստությունը: Ավետարանի բովանդակության մեջ ներթափանցելը նա համեմատում է աստղերով ընդելուզված երկնականարի ուշադիր զննումի հետ.

Կեսգիշերին ջրերի հոսքի ափին
հայա՛ցք նետիր դեպ երկինք.
այնտեղ հեռվում, վեհ աշխարհում
հրաշքներ են կատարվում:

Գիշերվա կանթեղները հավերժ
չեն նշմարվում լույսի մեջ.
անշեջ հրի կույտերը մեծ
ներդաշն, սահուն քայլում են այնտեղ:

Բայց ակնդետ փարվի՛ր դրանց
ու կտեսնես, որ հեռվում,
առաջին շարքերի ետեւում,
բյուր աստղեր են գիշերելու ընթանում:

Կրկին նայիր. լուսատուներն այդ բյուրավոր
կիողնեցնեն աչքերը քո վեհերոտ,
կապուտակ անդունդներն այնտեղ
հրե փաղանգի մեջ են կայծկլտում:

Կեսգիշերային լռության մեջ,

¹²¹ Տոգ. V. G. Belinskogo, v9 izd. Pavlenkova, t. I, էջ 412-413

փարատելով նինջն աչքերից,
հոգիդ հառիր դեպ գրքերը
գալիլեյան ձկնորսների:

Ամփոփ գրքերի մեջ ահա
կծավալվի քո առաջ
անհուն կամարը երկնքի՝
լուսաճաճանչ ու գեղանի:

Ու կտեսնես՝ մտքերի բույլերը գաղտնի
շուրջպար են բռնել երկրագնդի ծիրով մեկ.
կրկի՛ն նայիր. այլ աստղեր են ծագելու,
կրկի՛ն նայիր. այնտեղ հեռվում

բյուր-բյուրավոր մտքերի աստղերը այդ
ծագում են անվերջ, ծագում անհամար,
ու նրանց հրե շլացնող լույսով
սրտի խավարն է փարատվում:

Մարդու կարծրացած սիրտը մեղմելու եւ կյանքի ծանր պահերին հոգու տվայտանքները փարատելու Նոր Կտակարանի կարողության մասին է գրել Ֆ. Ի. Տյուտչենը (1803-1873)՝ փայլուն եւ շնորհալի ռուս բանաստեղծներից մեկը: Նոր Կտակարանը հղելով մարդուն, ում վիճակված է կյանքի ոչ դյուրին ուղի, նա հորդորում է.

Սուղ են երկրային ուժերը բոլոր,
երբ մոլեգնում է չարը կեցության.
Եւ մենք, ինչպես գերեզմանի շեմին,
հանկարծ դառնակսկիծ կանձկանանք:
Ահա հենց այդ պահին սիրով
մտաբերի՛ր Գիրքն այս վսեմ
եւ ողջ հոգով, ինչպես սնարին,
փարվի՛ր նրան ու խաղաղվի՛ր:

Աստվածաշնչի մասին հրաշալի տողեր ենք գտնում ռուս մեծատաղանդ կին գրող Ն. Ս. Կոխանովսկայայի (1825-1884) «Ինքնակենսագրության» մեջ, ուր նա պատմում է իր ներաշխարհի համար բախտորոշ մի դեպքի մասին:

«Ես սկսեցի կարդալ Ս. Գիրքը ոչ թե կարդալու համար, ո՛չ: Ես սկսեցի կարդալ այն, որպեսզի չքնեմ: Եկավ Ավագ շաբաթի երեկոն: Նստած էի իմ շքասրահում: Սուրբ գիշերը պատուհանում իրեն էր նայում աստղերի մեղմիկ փայլով. որոշ պատկերների առջեւ կանթեղ էր վառվում, մյուսների առջեւ՝ մոմ: Դեռեւս ինստիտուտից ձեռքս չէի վերցրել Ավետարանը՝ մտածելով, թե կարդալու կարիք չկա: Ես այն գրեթե ամբողջությամբ անգիր գիտեմ. քանիցս ընթերցել ու վերընթերցել եմ: Մի՞թե այն ուրիշ է հիմա: Ա՛խ, երբ էլ կարդաս, միշտ նույնն է այն, բայց հոգու վրա տարբեր կերպ է ներգործում: Երկու ձեռքով հենվեցի սեղանին ու սկսեցի հերթականությամբ՝ առաջին թերթից կարդալ: Անկարող եմ ձեզ հաղորդել ինձ համակած զարմանալի նորությունն ու թարմությունը: Ամեն ինչ հին է, ամեն ինչ՝ վաղուց ծանոթ, եւ սակայն անասելի շարժում է սիրտս: Ես երկար չկարդացի, արագ ծնկի եկա: Արցունքներն ընկնում էին հատիկների պես: Ես դրանք չէի սրբում: Ոչ մի բառ չարտասանեցի, չխաչակնքեցի. միայն ծնկել էի: Եվ Փրկչի երեսի լույսը հեղվում ու հեղվում էր Իրեն հառած իմ դեմքի վրա... Հարության այդ տոնը դարձավ նաեւ իմ հարությունը: Միմիայն Աստված կարող է այդպիսի խավարից տանել դեպի Իր լույսը, այն էլ՝ այդքան անսպասելի: Եթե կարելի է պատկերացնել, թե հոգին թեւեր ունի, ապա իմն այժմ կարապի թեւերով էր: Հոգիս ուրախ թափահարում էր իր թեւերը եւ լողում խնդության այնպիսի խաղաղ ու զուլալ ջրում, որ լուսավոր կաթիլները ցայտում էին դեպ երկինք եւ քնքուշ արցունքների նման թափվում գետնին: Ո՞ւր անհետացավ այն ծանրությունը, թախիծը, տարակուսանքը: Իմ մեջ մնաց լոկ հեզ, լուսավոր մի տխրություն, որից ամենեւին ծիծաղել չէի ուզում, այլ քաղցր ու

խնդագին լալիս էի: Շուրջս ոչինչ էապես չէր փոխվել. բայց ես արդեն ուրիշ էի, ամեն ինչ արդեն ուրիշ էր: Ինքս ինձ հետ հաշտվելով՝ ես հաշտվեցի ամեն ինչի՝ իմ կյանքի, իմ վիճակի հետ»:¹²²

Կոխանովսկայան իր մեկ այլ՝ «Հինավուրց հանդիպում» ստեղծագործության մեջ գրում է. «Ավետարանն իմ ծնկների վրա էր, եւ մոտ մեկ րոպե ես չէի կարողանում հպվել նրան, բաց անել... Երբ շրջեցի Ավետարանի ծանր կազմը, եւ իմ առջեւ հառնեցին տողերը, չգիտեմ, թե ինչ կատարվեց ինձ հետ: Ամբողջովին հափշտակված խանդավառության պոռթկումով՝ ես կարդում էի ու կարդում: Գրեթե ոչինչ չէի հասկանում, այլ միայն զգում էի կարդալու երանությունը: Հանկարծ սթափվելով՝ լսեցի. «Ով որ լսում է Իմ այս խոսքերը եւ կատարում դրանք, կնմանվի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա. անձրեւները թափվեցին, եւ գետերը հորդեցին, հողմերը փչեցին եւ զարկեցին այդ տանը, բայց չկործանվեց, որովհետեւ ժայռի վրա էր հաստատված: Իսկ ով որ լսում է Իմ այս խոսքերը եւ դրանք չի կատարում, կնմանվի մի հիմար մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա. անձրեւները թափվեցին, գետերը բարձրացան, հողմերը փչեցին եւ զարկեցին տանը, եւ այն ընկավ. եւ նրա կործանումը շատ մեծ եղավ» (Մատթ. Է 24-27): ...Որտե՞ղ եմ ես, այս ի՞նչ խոսքեր են, այս ի՞նչ զորություն կա դրանց մեջ, որ ուղղակի տանում է հոգիդ: Ես նետվեցի էջի վերին մասի վրա, բայց այդ էլ քիչ էր. շրջեցի էջը, ապա թերթելով մի քանիսը՝ հայտնվեցի Փրկչի Լեռան քարոզի ստորոտում: Ես շոգում էի. հետո սկսեցի մրսել սրթսրթալու չափ: Երանիները ցնցեցին ինձ: Ցուրտը կամաց-կամաց անցավ: Ջգում էի, որ սիրտս ասես հալչում է, ես եւս հալչում էի ամբողջովին: Ինձ համակում էր ինչ-որ դուրեկան անհայտ ջերմություն, որը միաժամանակ ներգործում էր թե՛ հոգուս, թե՛ մարմնիս վրա, այնպես որ ճակատս թեթեւակի քրտնեց, իսկ

¹²² Russkoe Obozrenje, Á»»ö avgust9, էջ 472-474

աչքերս կամաց ու աննկատ լցվեցին արտասուքով: Շարունակ կարդում էի, ու մի տեսակ սկսեցի հասկանալ (ո՛չ թե այս սրբագան գիրքը. այն կընկալի յուրաքանչյուր բարի երեխա). իբրև հասուն մարդ, իբրև կին՝ սկսեցի զարմանալիորեն հասկանալ կարդացածս անթիվ գրքերի ոչնչությունն ու կեղծիքը: Դրանց վառ, անմաքուր խայտաբղետությունը գոլորշու պես դուրս էր ելնում ինձանից եւ մառախուղի նման հեռանում երիտասարդ իմ հոգուց: Եվ մատաղ զգացմունքի միանգամայն նոր մի բան տրոփեց ու նոր կյանք պահանջեց իմ մեջ... Ամբողջ կյանքս հառնեց աչքերիս առջև իր ողջ անհեթեթություններով հանդերձ: Ես անասելի ամաչեցի. ամաչեցի ինքս ինձնից եւ այս բարի ու մեծ գրքից: Ամբողջ ուժով փարվեցի գրքին ու շնչակտուր վազեցի... Աշխարհում երկու մեծ գրքեր կան, որոնցից մյուս բոլոր գրքերը լիաձեռն օգտվում են, սակայն չեն սպառում, ինչպես եթե բռով ծովը դատարկես: Այդ գրքերն են Բնությունը եւ Ավետարանը: Այստեղ ամբողջական է այն ամենը, ինչ միլիոնավոր նիստերի է տրոհվում եւ իբրև կայծեր արտացոլվում մյուս գրքերում. այստեղ է հավերժ նոր ու հավերժ նորոգվող աշխարհի եւ մարդու բարոյական կյանքի երբեք չխամրող գեղեցկությունը»:¹²³

Ռուս նշանավոր գրող եւ հռչակավոր հրապարակախոս Ա. Ի. Գերցենի (1812-1870) «Եղելություններ եւ խոհեր» հուշավեպում (մաս I, գլ. II) ուշագրավ մի հատված կա.

«Ես բազմիցս եւ սիրով ընթերցել եմ Ավետարանը... Ընթերցել եմ առանց որեւէ ձեռնարկի եւ ամեն ինչ չէ, որ հասկացել եմ, սակայն կարդացածիս հանդեպ ունեցել եմ անկեղծ ու խորին հարգանք: Վաղ երիտասարդության տարիներին հաճախ եմ տարվել վոլտերականությամբ, սիրել հեգնանքն ու ծաղրը, բայց չեմ մտաբերում, որ անտարբեր սրտով ձեռքս առնելի Ավետարանը: Բոլոր հասակներում էլ տարբեր առիթներով վերադարձել եմ Ավետարանի ընթերցանությանը եւ ամեն անգամ

¹²³ Повести Кoxановской, т. II, М. 1863, էջ 315-318

նրա բովանդակությունը հեզություն ու խաղաղություն է հոգուս պարզել»:

Ավետարանը ձեռքին մահացած շնորհալի բանաստեղծ Ի. Ս. Նիկիտինի (1824-1861) գրչին է պատկանում «Նոր Կտակարան» բանաստեղծությունը, ուր դժվարին կյանքով ապրած բանաստեղծը խոստովանում է, թե անձկության թուլանքին իր վրա բազմիցս զգացել է հավիտենական Բանի խոսքերի բուժիչ զորությունը.

Ղժնդակ կյանքից ուժասպառ եղած՝
հավիտենական Բանի խոսքերում
բազմիցս եմ գտել անդորրի ու
զորության անսպառ աղբյուր:
Ինչպես եմ շնչում նրանց հնչյունները սուրբ
աստվածային սիրո զգացմունքով
եւ ինչ փութով եմ փարատում նրանք

սրտի դառնահեծ կսկծանքները...
Այստեղ ամեն ինչ Սուրբ Հոգով է գրվել՝
ասես զարմանահրաշ մի մանրանկարում՝
թե՛ արդի այս աշխարհը,
թե՛ այն իշխող Աստծուն,
թե՛ ամենայն գոյի իմաստը,
պատճառը, նպատակն ու կատարածը,
թե՛ հավիտենական Որդու ծնունդը
եւ թե՛ խաչն ու փշերից պսակը:
Ինչպես եւ՝ կարդալիս մեղմիկ աղոթելը
եւ մտքի ու հոգու համար
խրատներ քաղելն ու արտասվելը:

Ուսս հռչակավոր գրող Ֆ. Ս. Ղոստենսկին (1821-1881), որն իր մեծ հանճարի ուժով ներթափանցել էր մարդկային տառապանքի էության խորքերը, Ս. Գիրքը համարում էր մարդկա-

յին կյանքի անբաժան ուղեկիցը: Աստվածաշունչը նրա սիրելիքի անբաժան ուղեկիցը դարձավ: Տոբոլսկի բանտում արքայականների կանայք այցելելով նրան՝ մի Ավետարան նվիրեցին, որից էլ Դոստոևսկին արքայական գործություն քաղեց՝ տոկալու իր անձուկ գոյությունը: Մեծ գրողը ցմահ չբաժանվեց այդ Ավետարանից՝ այն պահպանելով իբրև սրբություն եւ միշտ ընթերցելով մեծ երկյուղածությամբ:¹²⁴ Ավետարանի ընթերցանության ազդեցությամբ վերջնականորեն ձեւավորվեց ու ամրապնդվեց Դոստոևսկու աշխարհայացքը: Ավետարանական իդեալներում նա իր սասանված եւ տառապալ հոգու համար երջանկություն ու հանգիստ գտավ եւ դրանց մեջ տեսավ բովանդակ ռուս ժողովրդի բարձրագույն հոգեւոր երջանկության գրավականը: «Կարամազով եղբայրները» ստեղծագործության մեջ նա ասում է.

«Տե՛ր, այս ի՜նչ գիրք է Աստվածաշունչը, ի՜նչ հրաշք, ի՜նչ գործություն կա նրանում, որ շնորհված է մարդուն: Աշխարհի, մարդու եւ մարդկային բնավորության բնութագիրը ստույգ է, ոչինչ բաց չի թողնված եւ գրված է բոլոր ժամանակների համար: Որքա՜ն լուծված եւ բացահայտված գաղտնիքներ կան նրա մեջ: Սիրում եմ սույն գիրքը: Առանց Աստծո խոսքի կկործանվի ժողովուրդը, քանզի նրա հոգին ծարավ է Նրա խոսքի եւ ամենայն գեղեցիկի ընկալմանը»:¹²⁵

Պատմում են, թե Դոստոևսկին իր կյանքի բոլոր երկմտելի պահերին սովորություն ուներ պատահականորեն բացել իր արքայական օրերի անբաժան Ավետարանը եւ կարդալ բացված էջի վերին տողերը: Նա այդպես վարվեց նաեւ իր վախճանի օրը՝ 1881 թ. հունվարի 28-ին, երբ վիճակն արդեն օրհասական էր: Բացվեց Մատթեոսի Ավետարանի հետևյալ հատվածը. «Ի՛նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, եւ Դու ինձ մո՞տ ես գալիս»: Հիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Թո՛ւյլ

¹²⁴ Polnoe sobran]e soqinen]j F. M. Dostoevskago, SPb. Á»»ô, izd. A. F. Marksa, t. III, էջ 20, 85, 109

¹²⁵ Polnoe sobran]e soqinen]j, t. XII, էջ 347-350

տուր հիմա, որովհետեւ այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծո ամեն արդարություն»» (Մատթ. Գ 14-15): Երբ կինը կարդաց նրա համար այս տողերը, Դոստոեւսկին ասաց. «Լսո՞ւմ ես՝ «թույլ տուր հիմա». ուրեմն՝ ես մեռնելու եմ»: Նույն երեկոյան, օրհնելով երեխաներին ու կնոջը, նա վախճանվեց: Մահից երկու ժամ առաջ նա խնդրել էր, որ աքսորում իրեն այդքան հոգեւոր մխիթարություն պարգեւած Ավետարանը, որպես հայրական օրհնություն, հանձնվի իր որդուն:

Ռուս նշանավոր երգիծաբան Մ. Ե. Սալտիկովը (1826-1889), որին բախտ է վիճակվել մանուկ հասակում իր գրքերի մեջ մի Ավետարան գտնել, տարվում է նրա ընթերցանությամբ:

«Հիշում եմ,- գրում է նա իր «Պոշեխոնյան անցյալ»-ում, երբ առաջին անգամ ընթերցեցի Ավետարանը, այն ցնցող տպավորություն թողեց ինձ վրա... Այդ ընթերցանությունը իմ մեջ հարուցեց տագնապալի զգացում: Ես շփոթվեցի: Ամենից առաջ ինձ ապշեցրին ոչ այնքան նոր մտքերը, որքան նոր խոսքերը, որոնք ոչ ոքից երբեք չէի լսել: Միայն կրկնական եւ առավել ջերմեռանդ ընթերցանությունը բացատրեց ինձ այդ խոսքերի իրական իմաստը եւ հանեց անթափանց քողը այն աշխարհի վրայից, որը թաքնված էր դրանց ետեւում»: Սալտիկովի խոսքերով՝ Ավետարանն իր կյանքը «արմատապես հեղաշրջեց»:

«Չեմ խոսում,- շարունակում է նա,- այն խանդավառության մասին, որով համակվեց սիրտս, ոչ էլ միանգամայն նոր այն պատկերների մասին, որ շարվեշարան անցնում էին մտավոր հայացքիս առջեւով. դրանք սովորական բաներ էին, որոնք, սակայն, այդ ժամանակ երկրորդական նշանակություն ունեին: Իսկ Ավետարանի ընթերցանությունից ստացած գլխավոր պարգեւն այն է, որ այն սրտումս ցանեց համամարդկային խղճի սաղմեր եւ իմ էության խորքից կյանքի կոչեց հաստատուն, արդեն իմ սեփականը դարձած մի բան, որի շնորհիվ էլ տիրող աշխարհիկ բարքերը այլեւս այնքան դյուրությամբ չէին ստրկացնում ինձ: Այդ նոր տարրերի օգնությամբ ես ձեռք բերեցի

քիչ թե շատ ամուր մի հենարան՝ գնահատելու համար ինչպես սեփական արարքներս, այնպես էլ ինձ շրջապատող միջավայրում կատարվող գործերն ու երեւոյթները: Մի խոսքով՝ այլեւս ձերբազատվեցի իմ անբովանդակ ապրելակերպից եւ սկսեցի ինձ մարդ գիտակցել: Ավելին, գիտակցելու այդ իրավունքը ես վերապահեցի նաեւ մյուսներին: Մինչ այդ ոչինչ չգիտեի ո՛չ քաղցածների, ո՛չ էլ ծարավների ու բեռնավորվածների մասին. ես ընդամենը տեսնում էի տիրող անխորտակելի կարգերի ազդեցությամբ ձեւավորված մարդկանց: Հիմա այդ թշվառներն ու անարգվածները հստակ լույսի ներքո կանգնեցին իմ առջեւ ու բարձրածայն աղաղակեցին այն անարդարությունների դեմ, որոնք բացի շղթաներից ոչինչ չէին տվել իրենց: Այն «իմ»-ը, որն անսպասելիորեն խոսեց իմ մեջ, հիշեցրեց ինձ, որ ուրիշները եւս ունեն նույնպիսի՝ դրան հավասարազոր «իմ»-եր: Սրանով չեմ ուզում ասել, թե սիրոսս վերածվեց մարդկության հանդեպ սիրո օջախի, սակայն անկասկած, այդ պահից սկսած, իմ վերաբերմունքը տան ծառաների նկատմամբ էպպես փոխվեց, եւ ստոր ճորտական անվանակարգությունը՝ նոմենկլատուրան, որ մինչ այդ պղծում էր լեզուս, ընդմիջտ վերացավ: Ես անգամ կարող եմ վստահորեն պնդել, որ այդ պահը աներկբա ազդեցություն է ունեցել իմ ձախարհայացքի հետագա ձեւավորման ողջ ընթացքի վրա»:¹²⁶

Ռուս անվանի բանաստեղծ Ա. Ն. Մայկովի (1821-1897) մոտ կարդում ենք.

Երանի~ նրան, ով պահպանել է տակավին
վկայությունները հայրավանդ ու հնամենի
եւ արցունք թափել սաղմոսերգելիս,
ով կամովին, փարատելով կասկածները մտքի,

¹²⁶ Polnoe sobran]e soqinen]j M. P. Saltykova, Spb. 1906, izd. A. F. Marksa, t. XII, էջ 40, 78-79

խանդադատվում է Աստվածաշունչը կարդալիս:¹²⁷

Գրող Դ. Ա. Կորոպչենսկին, որն ի դեպ հայտնի է մարդաբանական իր աշխատություններով, անձնական փորձառության հիման վրա վկայում է.

«Հոգին վեհացնող, սիրտը փափկացնող եւ մեզ ավելի մաքուր ու բարի դարձնող գրքերի մեջ առաջին տեղում պետք է դրվեն սրբազան գրքերը՝ Հին եւ Նոր Կտակարանները: Նրանց միջոցով տրվում է ճշմարտության, բարու եւ գեղեցկության ճանաչողությունը ամենավեհ ու հավիտենական տեսանկյունով»:¹²⁸

Ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյը այսպես է արտահայտվում Աստվածաշնչի մասին.

«Ինձ թվում է, որ մարդկային ցեղի մանկության գիրքը միշտ կլինի լավագույնը յուրաքանչյուր մարդու մանկության համար: Փոխարինել այդ գիրքը մեկ ուրիշով, ըստ իս, անհնար է: Նրա մեջ ամեն ինչ, յուրաքանչյուր բառ ճշմարիտ է, ինչպես հայտնությունը, եւ ճշմարիտ՝ ինչպես արվեստը: Աստվածաշնչի բովանդակությունը ծավալվում է երեխայի առջեւ՝ իբրեւ կենդանի ու վեհասքանչ կտավ, որը նա երբեք չի մոռանա: Ամեն բան որքան հասկանալի ու պարզ է մանավանդ երեխայի համար, միեւնույն ժամանակ որքան խիստ է ու լուրջ... Չեմ կարող պատկերացնել, թե ինչպիսին կլիներ կրթությունը առանց այդ գրքի: Աշակերտին նոր աշխարհ բացահայտելու եւ անուսին գիտելիք սիրել տալու ամենահարմար գիրքը Աստվածաշունչն է: Խոսքս վերաբերում է նույնիսկ նրանց, ովքեր այն չեն ընդունում իբրեւ հայտնություն: Չկա, համենայն դեպս, ես չգիտեմ, մեկ այլ ստեղծագործություն, որն այդքան սեղմ պոետիկ ձեւի մեջ ներառեր մարդկային մտքի բոլոր կողմերը, ինչպես որ Ա.

¹²⁷ Polnoe sobran]e soqinen]j, A. N. Majkova, izd. 0-oe. SPb.Á»»Á, t. I, էջ 85

¹²⁸ Mnen][russkix9 lldej o luqwx knigax dl[qten][, izd. Lederle, էջ 97-98

Գիրքն է: Բնության երեւոյթներին առնչվող բոլոր հարցերը բացատրված են այս գրքով, մարդկանց միջեւ, ընտանիքի, պետության, կրոնի բոլոր տարրական հարաբերությունները առաջին անգամ գիտակցվում են ըստ այս գրքի: Մտքերի ընդհանրացումը եւ մանկական պարզ ձեւով ընկալված իմատությունը առաջին անգամ այս գրքի հմայքով են հափշտակում աշակերտի միտքը: Դավթի սաղմոսների քնարականությունը ոչ միայն ներգործում է մեծահասակ աշակերտների մտքի վրա, այլեւ ավելին՝ յուրաքանչյուրն առաջին անգամ այդ գրքից է ճանաչում էպոսի ողջ թովչանքը իր անգուգական պարզության եւ գորության մեջ: Ո՞վ չի արտասվել Հովսեփի պատմությունից ու եղբայրների հետ նրա հանդիպումից, սրտի թալկացումով ո՞վ չի պատմել կապված ու վարսերը կտրած Սամփսոնի պատմությունը, որը թշնամիներից վրեժ լուծելով՝ ինքն էլ նրանց հետ զոհվում է ավերված պալատի փլատակների տակ: Եվ սրա նման հարյուրավոր այլ տպավորություններ, որոնցով մենք դաստիարակվել ենք, ինչպես մայրական կաթով... Նրանք, ովքեր ժխտում են Ս. Գրքի դաստիարակչական նշանակությունը՝ ասելով, թե Աստվածաշունչը սպառել է իրեն, թող հորինեն այնպիսի գիրք, այնպիսի պատմություններ, որոնք կբացատրեն բնության երեւոյթները, կամ էլ՝ ընդհանուր պատմությունից կամ երեւակայությունից ինչ-ինչ բաներ, որոնք կընկալվեն այնպես, ինչպես սուրբգրային պատումները: Այնժամ մենք կհամաձայնենք, որ Ս. Գիրքը սպառել է իրեն:

Ես կրկնում եմ իմ՝ թերեւս անձնական փորձի վրա հիմնված համոզումները. առանց Աստվածաշնչի անհնար է երեխայի եւ մարդու զարգացումը մեր հասարակության մեջ, ինչպես որ այդ անհնար կլիներ հունական հասարակության մեջ առանց Հոմերոսի: Աստվածաշունչը տարրական եւ մանկական ընթերցանության միակ գիրքն է: Աստվածաշունչը թե՛ ձեւով, թե՛ բովան-

դակությամբ իբրեւ նմուշ պետք է ծառայի բոլոր մանկական ձեռնարկների եւ ընթերցանության գրքերի համար»:¹²⁹

Ռուս ժամանակակից շնորհալի գրողներից մեկը՝ Ա. Վ. Կրուզլովը, չափազանց բարձր էր գնահատում Ս. Գիրքը՝ նրա արժանիքների մասին արտահայտվելով այսպես.

Հեռու ունայնության մեջ ընկղմված ոստանից,
ուր ամենուր շուկայական աղմուկ-աղաղակն է թելածում,
թերթում եմ էջերն այս սրբազան գրքի
եւ ըմբռնում իմաստը այս մեծ մատյանի:
Ինչ պարզություն, ինչ ճշտություն կա ամեն տողում.
այսպես միայն սրբությունն է բարբառում:
Օ~, եթե մեկը հոգու ծարավից է տոչորվում,
թող գա'. Աղբյուրն այս կհագեցնի նրան:¹³⁰

Նա ցանկանում է, որ աշխարհի Փրկչի Ավետարանը հույժ մվիրական լինի յուրաքանչյուր սովորողի սրտին: «Պատանեկությանը հնարավորություն տվեք,- գրում է նա,- հանգստանալ Հին եւ Նոր Կտակարանների հրաշալի պատմություններով, սեւեռե՛ք նրա միտքն ու երեւակայությունը Փրկչի կյանքին, ստիպե՛ք, որ Գիրք գրոցը հարազատանա նրա սրտին»:¹³¹

Ավետարանում շարադրված Փրկչի վարդապետության կենսական նշանակության մասին Կրուզլովը նկատում է.

Ուսմունքը Նրա՝ լուսո խոսքն է,
Նրա պատգամից դուրս՝ ամեն ինչ սուտ է,
եւ ճիշտ է այն ամենը, ինչ ի Քրիստոս է:¹³²

«Նվիրական գիրքը» բանաստեղծության մեջ գրողը խոստովանում է, որ իր կյանքի դժնդակ պահերին մխիթարություն է գտել սրբազան Սաղմոսարանում.

¹²⁹ Soqinen] [, գ. IV, izd. Á»»Ā, էջ 272, 274-275

¹³⁰ Ilbov6 i istina @Duxovnye motivy±, M. 1899, էջ 17-18

¹³¹ Zaproxy duxa, SPb. 1903, էջ 35

¹³² Ilbov6 i istina, էջ 19

Ամեն անգամ, երբ համակում է ինձ հանկարծ
վիշտ թե մեղսալից հուզմունք,
կամ միտքն է հպարտ ականա ալեկոծում իմ սիրտը,
կամ էլ երբ այնտեղ կասկածներ են սողոսկում,

փնտրում եմ փութով գրքում այս փրկություն՝
այս հնամենի դեղին կազմով գրքում,
որ երկյուղածաբար իմ մայրն է պահպանել
սրբապատկերներով հանդերձ՝ պապիս տապանակում:

Այս գրքից պապս երբեք չի հեռացել,
այն մայրս է միշտ թերթել
ու նրանում սփոփանք փնտրել
եւ միշտ կյանքի դասեր քաղել:

Հաճախ էր մայրս բարձրաձայն կարդում.
լսում էի ես՝ ցնծության մեջ քարացած...
Եվ իբրեւ նվիրական ժառանգություն
կտակեց այն ինձ մայրս մահանալիս:
Հիմա, երբ համակում է ինձ հանկարծ
վիշտ թե մեղսալից հուզմունք,
կամ միտքն է հպարտ ականա ալեկոծում իմ սիրտը,
կամ էլ երբ այնտեղ կասկածներ են սողոսկում,

գիրքն այս դեղին կազմի մեջ
փութով հանում եմ պատյանից
ու, բանալով ճարմանդները պղնձյա,
սուրբ գրերին եմ ինձ հանձնում:

Եվ հնամենի էջերը կարդալիս
ելնում, հառնում են ստվերները հարազատ...
Արտասուքով ու հոգով ցնցված՝
Խաչալի առջեւ եմ հեզորեն ծնկում:

Ես աղոթում եմ ու արտասվում,
ու հանդարտվում է հուզմունքը մեղսալից,

Եւ ինչպէս ծյունն է աննկատ հալչում արեգակից,
այնպէս էլ սրտունս՝ դառնահեծ կասկածը:

Ու այսպէս ծնկի իջած,
ոչ երկրային խոհով առլեցուն՝
զգում եմ, որ հենց այս պահին ինչ-որ մէկը
այստեղ աղոթում է ինձ հետ միասին:¹³³

Աստվածաշնչի ընթերցանությունից ստացած տպավորու-
թյունները ամենավառ գույներով են նկարագրված ժամանա-
կակից աչքի ընկնող հրապարակախոսներից ու քննադատնե-
րից մէկի՝ Վ. Վ. Ռոզանովի կողմից: Ահա նրա խոսքերը.

«Առաջին անգամ Աստծո խոսքը ճաշակեցի համալսարանի
երկրորդ կուրսից երրորդ փոխադրվելիս: Լավ հիշում եմ այդ
երեկոն: Եկա՝ վերջին դասական գրականության քննությունից
ուժասպառ եղած: Այդ տարի, առանց որեւէ պայմանավորվա-
ծության, բայց ասես դիտմամբ, մեզ համար դասախոսություն-
ներ էին կարդում անտիկ գրականության ամենաընտիր եւ
ամենակոթողային ստեղծագործություններից՝ «Իլիականի»
վեցերորդ երգը, Կիկերոնի "De Republica", Դեմոսթենեսի
«Խոսք պսակի մասին»... Եկա տուն, սենյակի անկյուն շարտե-
ցի գրքերս, նետվեցի բազմոցի վրա, սակայն քնել չկարողա-
ցա: Եվ որովհետեւ ուսանողը, եթե չի խոսում, ապա մեխանի-
կորեն կարդում է, ես էլ գրադարակից վերցրի ցայժմ երկյուղա-
ծորեն պահվող երկու հնամենի հատորները, որ վերցրել էի մի
ընկերոջից: Այդ Աստվածաշունչը հրատարակվել էր դեռեւս
Ալեքսանդր Բլազոսլովեննիի օրոք՝ հուլունքի պէս մանրա-
տառ սլավոնական գրով: Այն դնելով բազմոցի բարձին՝ ես
բացեցի, իհարկէ պատահաբար, Եսայի մարգարեի գրքի սկիզ-
բը եւ սկսեցի գրեթէ հեգել վանկ առ վանկ, բայց հետո արագ
ու սահուն կարդացի: Հանկարծ հենց այդ պահին այն հունա-
կան տպավորությունների փոփոխությունից հետո զգացի, թէ
սա որքա՜ն հզոր, պարզ, պիտանի եւ սուրբ է ամեն ինչից ու

¹³³ Duwepol. Qten]e, 1901, dek., էջ 707-708

ամեն բանից... Առաջին անգամ հասկացա, թե ինչու է գիրքը «Աստվածաշունչ», թե ինչու են մարդիկ այդպես անվանել այն եւ ոչ թե մյուս գրքերը: Այն թափանցում էր մինչեւ հոգուս անհուն խորքերը... Դա բոլորովին այլ էր, քան Դեմոսթենեսը: Ու վստահեցի Ասորիք՝ քո գաղտնիքներով հանդերձ: Մենք ոչինչ չենք հասկանում Արեւելքից: Այստեղ մերթ Աստված է խոսում, մերթ մարդը: Կարելորն այն չէ, որ այստեղ (Եսայու մոտ) գրված է «Աստված»: Մենք էլ ամենուր այդ բառն ենք գրում: Բայց եթե Եսայու մոտ «Աստված» գրված էլ չլիներ, միեւնույն է, ես թե մեկ ուրիշը կզգայինք, որ սա Աստծո խոսքն է, որ այն բնավ էլ մարդկային խոսք չէ: Եվ որքան~ն պիտանի է այն: Որքան~ն նվիրական: Այն փրկարար է ոչ միայն բարոյախոսական, այլեւ ինչ-որ ուրիշ, անհամեմատ ավելի խոր իմաստով, ահա՛ թե ինչ:

Այդ ժամանակից ի վեր սիրում եւ կարդում եմ Աստծո խոսքը: Մինչ այդ 1880 թ.-ը ես երբեք չէի կարդացել այն: Գիմնագիտություն ուսանելու ութ տարիներին մենք՝ աշակերտներս, անցանք կատեխիզիս, ծիսագիտություն, Ռուս Եկեղեցու պատմություն, Ռուդակովի Հին եւ Նոր Կտակարանների սրբազան պատմությունը: Սակայն Ավետարան եւ Աստվածաշունչ երբեք չէի կարդացել ու նրանց միջեւ տարբերություն էի տեսնում սոսկ նրանում, որ Ավետարանը փոքրածավալ է, իսկ Աստվածաշունչը՝ ստվար եւ ծանր: Հետագայում կարդացի Տոբիթի հրաշալի գիրքը, Հոբի խոսքերը, Թագավորացի էջերը եւ խորհրդավոր Ծննդոցը: Ամեն ինչ այնքան լավ է, որ անհնար է արտահայտել:

Մեր գիմնագիական ուսումնառության մեջ ամենացավալին կրոնական կրթության պակասը չէ, այլ որ այն մատուցվում է մի տեսակ խեղաթյուրված կամ էլ խիստ տկար տեսքով... Աստծո խոսքը բնագրով՝ ահա՛ փրկության միջոցներից մեկը. Աստծո խոսքը՝ ոչ միայն լսելով, այլեւ ընթերցելով: Ս. Գրքում կան այնպիսի տեսարաններ, էջեր, առանձին գրքեր, որոնք լիովին մատչելի են ամենամատաղ հասակին: Դրանցից են Տո-

բիթը, դատավորների, քահանայապետների մասին պատմությունը եւ Թագավորաց առաջին երկու գրքերը: Այստեղ ամեն ինչ պատկերավոր է, վառ ու անմեղ, միեւնույն ժամանակ՝ դյուրահասկանալի»:¹³⁴

Խոսելով Աստվածաշնչի պոեզիայի մասին՝ ռուս տաղանդավոր հրապարակախոսը նկատում է.

«Այնքան էլ ճիշտ չէ «Սուրբ Գրքի պոեզիա» արտահայտությունը: Ս. Գրքին միանգամայն խորթ է պոեզիայի գլխավոր եւ բնորոշ մշտական բնույթը՝ հորինվածքը, երեւակայությունն ու պաճուճագարդությունը, նույնիսկ պարզունակն ու հասարակը: Առհասարակ Աստվածաշնչի եւ սուրբգրային պատումի անմիջական նպատակը ոչ այլ ինչ է, քան փաստի, իրադարձության շարադրանքը: Անհնար է հանդիպել այնտեղ որեւէ «սեթեւեթ արտահայտության», թեկուզ եւ՝ դյուցազներգական երանգի. Ս. Գրքում նման բան եւս ամենեւին չկա: Աստվածաշունչը «եղելությունների գիրք» է... Աստվածաշնչի ընթերցանությունը երբեք չի ջղագրգռում, չի հարուցում զայրույթ ու սրտնեղություն: Այն մաքրագործում է հոգին՝ ոչ մի փուշ չթողնելով նրա մեջ: Նույնիսկ մեկ էջ ընթերցողը երբեք դժգոհ չի մնում: Հոգին ընթերցանությունից չի ճնշվում, չի պղծվում, չի նեղվում: «Կարդացի եւ ավելի լավ զգացի ինձ»: Ուրիշ ոչինչ: Աստվածաշնչից միշտ «ավելի լավ» ես զգում: Եվ բնականաբար, մարդկությունն ասում է. «Դա ավելի լավ է, [քան որեւէ այլ ընթերցանություն]. դա Աստվածաշունչն է», այսինքն՝ «իսկական գիրքը», «գիրք գրոցը»: Նրանում է ասես ամփոփված բոլոր գրքերի կանոնը՝ չափանիշը. «Ահա թե ինչպե՛ս պետք է գրել, ահա թե ի՛նչ է պետք գրել»... Ս. Գրքի ընթերցանությունը վեհացնում է, ազնվացնում եւ ընթերցողի հոգուն հաղորդում իրեն հատուկ սրբազան երանգը, այսինքն՝ ընդհուպ մինչեւ հանդիսավորության ու ողբերգականության հասնող չափա-

¹³⁴ Okolo cerkovnyx9 sten9, t. I, SPb. 1906, էջ 134-143

զանց լուրջ տրամադրությունը: Բոլոր մյուս գրքերի համեմատ այն լեռնային աղբյուրի զուլալ ջուր է... այն հոգու համար թարմություն է եւ հարություն»:¹³⁵

Ռոզանովի «Քրիստոնեության տեղը պատմության մեջ» գրքույկում կարդում ենք.

«Ինչպիսին էլ լինեն մեր գիտելիքները, Փրկչի Լեռան քարոզը կմնա իբրեւ հավիտենական ճշմարտություն, որին չենք դադարի դիմել, քանի դեռ դժբախտ ենք ու նվաստացած, քանի դեռ մարդ ենք... Ավետարանում ամփոփված է լուսավոր խնդրության հոգին, ներողամտության եւ հաշտության հոգին, սերը մարդկանց հանդեպ: Փրկչի ամեն խոսքում եւ գործում խորապես նվիրական մի բան է ճառագում յուրաքանչյուր սրտի համար, առինքնում ինչ-որ բանով, որը թույլ չի տալիս ինքնամփոփվել, այլ ընդհակառակը՝ ստիպում է բաց անել հոգին: Նա արդեն Ջորությունների Տերը չէ, որ սպառնում ու զայրանում է Իր ժողովրդի՝ Իր «անդրանիկի եւ ընտրյալի» վրա, այլ Աստվածամարդն է, Ով իջավ ու հայտնվեց մարդկանց, ապրեց նրանց մեջ, սիրեց եւ հասկացավ ամեն ինչ, որ նրանց մեջ տկար է ու չնչին: Հիշենք գալիլեյան Կանայի հարսանիքը. ինչպիսի~ հոգատար ուշադրություն փոքր մարդկանց փոքրիկ ուրախությունների հանդեպ. հիշենք նաեւ Անառակ որդու առակը»:¹³⁶

Ռուս շնորհալի բանաստեղծ Ա. Մ. Ժենյուժնիկովը (1821-1908) իր անձնական փորձով վկայում է Ավետարանի ընթերցանության այն մեծ նշանակության մասին, որը ձեւավորում է մարդու՝ իր նմանների հանդեպ սիրով տոգորվելու աշխարհայացքը: Նորկտակարանյան խոսքի այս խորին մեծարողը իր «Վաղ գարունը» բանաստեղծության մեջ ասում է.

Հոգեւոր կյանքի արշալույսին
սիրեցի ուսմունքը Քրիստոսի,

¹³⁵ V. V. Rozanov, Biblejska [Po7z] [. SPb. 1912, էջ 22-26

¹³⁶ Mesto xrist]anstva v istor]i, SPb. 1904, էջ 26-27, 46-47

սիրեցի մտքով ու սրտով գորովալից:
Այդ բիրտ ու անօրեն օրերին
միայն այն էր մարդկանց սրտերը մեղմուն:
Ինձ՝ պատանուս, ուսուցանում էր սիրել
բոլոր բեռնավորվածներին ու հոգնածներին...
Ինչպիսի՞ն կլինեի ծեր հասակում, ո՞վ գիտե,
եթե Ավետարանի խոսքով լի այդ օրերին
սրտումս ի վերուստ շնորհի չհանգրվաներ:¹³⁷

Ռուս գրող եւ նշանավոր հասարակական գործիչ Ն. Ն. Նեպյուեւը (1851-1908)՝ Կենաց գրքի ի վերուստ խանդավառված մեծարողը, գրում է.

«Մանկուց սփոփանք եմ գտել Ս. Գրքի ընթերցանության մեջ: Մանկուց եմ սովորել ամեն օր այն կարդալ: Ամեն ինչ չէ, որ հասկանալի էր մանկական մտքի համար, բայց սիրտս զգում էր սուրբ խոսքերի կենարար հոգու ճշմարտությունը, սիրում էր այդ սուրբ ճշմարտությունը եւ սովորում դրանով ստուգել առօրյա կյանքի երեւոյթները»:¹³⁸

Իր «Ինչ է ճշմարտությունը» ստեղծագործության մեջ նա շատ է խոսում Աստվածաշնչի մասին, ընդ որում՝ խանդավառության հրաշալի ուժով եւ խորապես համոզված մարդու տոնով: Ահա այդ գրքից մի քանի առավել հետաքրքիր հատվածներ:

Նեպյուեւի կարծիքով՝ Աստվածաշնչին քաջատեղյակությունը պարտադիր է յուրաքանչյուր մարդու համար, ով կամենում է խելամտորեն ապրել քրիստոնեական պետության մեջ: Այն «անհրաժեշտ է անխտիր յուրաքանչյուրի համար՝ ինչպես հավատացյալի, այնպես էլ անհավատի»:

«Հավատացյալը չի կարող չգիտակցել, որ Աստծո կամքը կատարելը իր համար հավիտենական կյանքի եւ հավիտենա-

¹³⁷ Stixotvor. A. N. Hemquhnikova, t. I, izd. II, էջ 213-214

¹³⁸ Տե՛ս 5Vozdvihenska[wkola-kolybel6 Trudovogo bratstva® (մախաբան), ՏԲԲ. 1895

կան օրհնության խնդիր է. որ անհնար է կատարել Աստծո կամքը առանց իմանալու այն. որ կյանքի խոսքերն ամփոփված են Ս. Գրքում:

Քրիստոնեությունը կործանարար սնահավատություն կամ քաղաքական շահեկան կեղծիք համարող անհավատը պետք է հիմնավորապես ծանոթանա Աստվածաշնչին, որպեսզի գիտակցի այն, ինչի դեմ ցանկանում է պայքարել կամ ինչից կամենում է օգտվել: Քրիստոնեության մերժումը առանց գիտակցված դիրքորոշման անվայել է բանական էակի համար, մանավանդ ամոթ՝ նրանց համար, ովքեր այն մերժում են բանականության անունից:

Կենդանի հավատ ունեցողը նախ եւ առաջ գիտակցում է իր ոչնչությունը, ապա այն, որ միայն Աստծո խոսքն է ի գորու փրկել իր միտքը, սիրտը եւ կյանքը ճակատագրական սխալներից: Հավատացյալը գիտակցում է, որ Աստծո արդարության հավիտենական ճշմարտության ճանաչողությունը իր գիտակցության ամենակենսական պահանջմունքն է, եւ որ սրանում ինքը չի կարող հույս դնել ոչ մեկի վրա, այլ պետք է անպայման ինքնուրույնաբար սերտի Աստծո խոսքը, առանց որի անկարելի է գիտակից քրիստոնյա լինել, առանց որի կյանքը եւս չի կարող լինել գիտակցաբար քրիստոնեական: Ամենահասարակ մարդիկ կենդանի հավատով լուսավորվելուն պես հոգով զգում են, որ դա այդպես է: Ես գիտեի ժողովրդի լայն խավերին պատկանող Աստծո անուս մարդկանց, որոնք Հայտնության խոսքերը որսում էին այնպես ազահորեն եւ այնպիսի սիրով ամբարում իրենց սրտերում, որ կարդալ չիմանալով հանդերձ՝ Սուրբ Գրքից շատ հատվածներ գիտեին անգիր:

Սուրբ Եկեղեցին կարող է միայն ստանձնել Աստծո արդարության կարելիոր ճշմարտությունը ճանաչել տալու եւ կյանքը հավատի հետ համաձայնեցնելու հովվությունը: Իսկ ինչ վերաբերում է Աստծո խոսքի քաջ իմացությանը, ինչպես նաեւ երկնային Հոր կամքը կատարելուն, ապա դրանք յուրաքանչյուր

հավատացյալի պարտականությունն են: Կարծել, թե Ս. Գրքի սերտողությունը հոգեւորականության իրավասությունն է, իսկ շարքային քրիստոնյան կարող է ամենեւին չիմանալ նրա բովանդակությունը, նույնքան անհեթեթ է, որքան ասել, թե կարդալ կարողանալը եւ դասավանդվող առարկան իմանալը ուսուցչի գործն է: Ընդ որում, աշակերտը կարող է ոչինչ չիմանալ՝ բավարարվելով ուսուցչին ուսուցիչ, գիտությանը գիտություն կոչելով եւ ուսուցչին ու աշակերտներին հարգանքի արտաքին նշաններ ցուցաբերելով: Նման մոտեցման անհեթեթությունն ակնհայտ է. այնուհանդերձ, իրենց եւ սեփական մտավոր կարողությունների վրա չափազանց վստահ մարդիկ, իրենց հավատավոր քրիստոնյա երեւակայելով, հենց այդպիսի վերաբերմունք էլ որդեգրում են Եկեղեցու եւ Աստծո խոսքի նկատմամբ:

Հավատացյալ մարդու համար Կենաց գրքին քաջատեղյակ չլինելը ամոթալի տգիտություն է: Այն առավել ամոթալի է, եթե մարդը ավելի կրթված է, ավելի կարդացած, ավելի շատ ժամանակ է տրամադրել գիտությանը՝ չհասկանալով, որ Կենաց գիրքը առավել կարեւոր ու հետաքրքիր է, քան մյուս բոլոր գրքերը, իսկ Աստծո արդարության հավիտենական ճշմարտության ճանաչողությունը՝ մյուս բոլոր գիտելիքներից բարձր:

Արմատացած նախապաշարումներից է այն կարծիքը, թե Աստվածաշունչը ծայրեծայր կարդալը ե՛ւ ձանձրալի է, ե՛ւ անօգուտ: Այդ նախապաշարման ազդեցության ներքո մինչեւ 35 տարեկան դառնալս ես չէի համարձակվում ձեռնամուխ լինել Կենաց գրքի ուսումնասիրությանը, թեպետ այդ ընթացքում ընթերցել էի բազում գրքեր, որոնք, իսկապես, եւ] ձանձրալի էին, եւ] անօգտակար: Այժմ, երբ կարդացել եմ արդեն, համոզված ասում եմ, որ Ս. Գիրքն ընթերցելը ձանձրալի չէ եւ ծայրաստիճան օգտակար է, որ Կենաց գրքի բովանդակության չիմացությունը ամոթալի տգիտություն է քրիստոնեական ժողովուրդների մտավորականության համար, եւ որ հենց այստեղ է ամ-

փոփոխված մարդկային բանականությանը մատչելի ամենակուռ աշխարհայացքը, ամենավսեմ տեսլականը եւ ամենակատարյալ բարոյականությունը: Բովանդակ Աստվածաշունչը ինձ համար մի կուռ ամբողջություն է. եւ Կենաց գրքի կենարար հոգու այդ աստվածային ներդաշնակությունը հրաշքների հրաշքն է, որը ես շոշափեցի, ինչպես երբեմնի Թովմասը, ինչը եւ գիտակցում եմ սիրով, բանականությամբ եւ զգացողության ուժով:

Աստվածաշնչի ընդհանուր աշխարհայացքը մեզ ըմբռնել է տալիս աշխարհի կեցության իմաստը, ինչպես եւ դրա բաղկացուցիչ մասը կազմող մարդկության՝ որպես համապարփակ ամբողջի մասի երկրային կյանքի իմաստը: Ս. Գիրքը խիստ որոշակի պատասխանում է հետեւյալ հարցին՝ ի՞նչ է ճշմարտությունը:

Աստվածաշնչի տեսլականը մեզ որոշակի հասկացողություն է տալիս այս աշխարհի կյանքի վերջնական նպատակի վերաբերյալ եւ խիստ որոշակիորեն պատասխանում մարդկության երկրային կյանքի ողջամիտ նպատակին վերաբերող հարցին:

Աստվածաշնչի բարոյագիտությունը մեզ պարզեւում է կյանքի կուռ ծրագիր՝ համահունչ Աստծո արդարության հավերժական ճշմարտությանը, եւ միանգամայն որոշակի պատասխան այն հարցին, թե ինչպես ապրել խելամիտ եւ սրբորեն՝ այնպես,

որ ամեն օր, ժամ ու ակնթարթ

իր մեջ հավերժ իմաստ պարունակեր,

որ ապրելու իրավունք է պարզեւում:

Մնում է մի քանի խոսքով պատմել, թե ինչպես էի կարդում Ս. Գիրքը: Ինձ համար պարզ դարձավ, որ չեմ կարողանա ըմբռնել Հայտնության կենարար հոգին իր ողջ կուռ միասնության մեջ, եթե ծայրից ծայր չկարդամ Աստվածաշունչը՝ խորապես հավատալով, որ «սպանող գրի» քողի տակ կգտնեմ կենդա-

նացնող հոգին:՝ Ս. Գիրքը առաջին անգամ կարդալով՝ տակա-
վին ամբողջական պատկերացում չունեի Աստծո արդարու-
թյան հավիտենական ճշմարտության մասին իր ողջ ներդաշ-
նակության մեջ: Ջերմորեն կարդում էի Ս. Գիրքը՝ այն ընդունե-
լով այնպես, ինչպես որ կա՝ իբրև կենարար հոգու ներդաշնակ
միասնություն՝ չընկրկելով սպանող գրի խայտաբղետության եւ
թվացող հակասությունների առջեւ: Կարդում էի՝ չասեմ համբե-
րությամբ, այլ բերկրալից, սրտատրոփ ուշադրությամբ այն
մարդու, ով խավարչտին ու գարշահոտ ստորերկրյա քարայ-
րում թարմ օդի հոսանք է գգում, ապա նշմարում է հեռավոր
լուսի նշույլը եւ, նրա կողմը գնալով, ի վերջո գտնում այդ
ատելի բավիղից դուրս գալու ելքը: Այդպես ընթերցելը դժվար
չէր ինձ համար. ա՛յլ կերպ կարդալն էր ինձ համար անհնար:
Կենաց գրքի յուրաքանչյուր բառ ինձ համար նվիրական էր
այնպես, ինչպես հեռավոր հայրենիքի կարոտը: Եթե նույնիսկ
հոգեւոր ծարավից չտոչորվեի, միեւնույն է, ինձ չէի զրկի այդ
հոգեւոր հաճույքից:

Մինչ ես կարդում էի սիրով, հավատով ու երկյուղածու-
թյամբ եւ գոհանալով սիրտս ցնծությամբ համակող լուսի ու
ջերմության համար՝ գրի արտաքին քողի տակից հստակորեն
ընկալում էի կենարար հոգին, որն էլ իմ մեջ շնչում էր հավի-
տենական կյանքի շնչառությամբ: Երբ կյանքով ու գիտությամբ
պարտադրված հնամուլ մտայնությունը ստիպում էր ինձ
իմաստակել դպիրների սովորության համաձայն, ես բժախնդ-
րորեն քննում էի սպանող գիրը եւ հերժում այն: Արդյունքում իմ
առջեւ պառկած էր վերացական մտքի սառը դիակը, իսկ հո-
գիս պատվում էր գերեզմանային սառնությամբ: Հուզմունքն ու
սարսափը հուշում էին ինձ, որ շեղվել եմ ուղիղ ճանապարհից,
եւ կրկին լույս ու ուրախություն էի փնտրում եւ դարձյալ գտ-

* Այս միտքը Պողոս առաքյալի հետեւյալ խոսքի արձագանքն է.
«Կարող դարձրեց մեզ Նոր Ուխտի պաշտոնյաներ լինելու՝ ոչ թե
գրով, այլ՝ հոգով, քանի որ օրենքը, որ գիր է, սպանում է, իսկ Հոգ-
ին՝ կենդանացնում» (Բ Կոր. Գ 6):

նում ուղիղ ճանապարհը: Ի վերջո որոշեցի Աստվածաշունչն ընթերցել մանկան պես, որը գիտական աշխատությունների եւ բարդ իմաստակությունների կարիքը չունի՝ հասկանալու համար մոր խոսքերը, նրա մտքերն ու զգացմունքները, եթե նույնիսկ դրանք արտահայտվեն այլաբանությամբ, հեքիաթով կամ էլ միայն երեխային ու մորը հասկանալի պայմանական պատկերավոր լեզվով: Փրկիչն ասաց. «Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. ԺԸ 3): Եթե հավիտենական կյանքի խոսքը չընդունենք այնպես, ինչպես երեխաներն են ընդունում մայրական խոսքը, այսինքն՝ խոնարհաբար, հավատով եւ սիրով, չենք ըմբռնի կենարար հոգին եւ անխուսափելիորեն ապարդյուն կխարխափենք սպանիչ գրի բավիղում:

Երբեմն սպանող գիրն ինձ ապշեցնում էր իր չափազանց անմարդկային համարձակությամբ, մերթ՝ մերկ, անպաճույճ ճըշմարտացիությամբ, մերթ՝ զուտ արեւելյան, զունագեղ պատկերավորությամբ, որ մի ակնթարթ իրենով ծածկում էր կենարար հոգին. սակայն հավատը բարձրացնում էր այդ պճնագարդ ծածկույթը եւս, ու կենարար հոգին կրկին շողարձակում էր հոգուս:

Երբեմն ինձ շփոթեցնում էին թվացյալ հակասությունները, բայց հավատը չէր տկարանում, եւ դրանք բոլորն աստիճանաբար ներդաշնակորեն կապակցվում էին իրար: Ընթերցանության մեջ հարատեւելուն զուգընթաց հոգուս մեջ արմատավորվում էր Աստծո տնօրինության՝ փրկագործության ըմբռնումը, աճում նաեւ կենդանի Աստծո հանդեպ գիտակցված հավատի ուրախությունը: Եվ ես փորձով ճանաչեցի, թե ինչ է նշանակում անջրդի անապատի տոթի ու փոշու մեջ երկար դեգերած ուժասպառ հոգու համար խնել կենդանի ջրի աղբյուրից:

Կենաց գրքի վերջին էջը կարդալիս խաղաղության տաճարը փայլում էր իմ առջեւ գերագույն Բանականության նախահավիտենական մտքի ողջ անպատմելի վսեմությամբ, կե-

նարար սիրո ոգեշնչման բովանդակ շլացուցիչ գեղեցկությամբ»:¹³⁹

Նոր Կտակարանի՝ հոգին վեհացնող ներգործության մասին է բանաստեղծական մեծ տաղանդով օժտված ժամանակակից գրող Ա. Ա. Կորինֆսկու (ծն. 1868) բանաստեղծությունը.

Անկամ թախծի օրերին, հիվանդի վիատ օրերին,
այն ժամին, երբ պայքարում հալումաչ է լինում մարդու սիր-
տը,
այն պահին, երբ անուժ պատրաստ եմ հնազանդվել
Ճակատագրին,
կենդանանում է հոգիս Աստծո խոսքերի հայտնությամբ...
Թերթում եմ իրար ետեւից անփուտ էջերը գրքի,
այն գրքի, որ հավերժ հույսի եւ տիեզերական սիրո լույսն
ունի,
եւ ինչպես ճամփորդն անապատի, որ կենդանի
աղբյուր է տեսնում,
հառնում եմ ապրելու, եւ թոթափվում եմ ուժերս
խլող շղթաները,
ու նորից մարտի եմ ելնում խավարի դեմ՝ ճնշող ու ահեղ...

Վկայակոչենք նաեւ արվեստի մի քանի գործիչների:

Մեծատաղանդ նկարիչ Լյուդվիգ Ռիխտերը (1803-1884) պատանեկան հասակում հավատ չուներ, սակայն հետագայում դարձավ Ս. Գրքի երկյուղալից մեծարողը: 1825 թ. հունվարի 5-ին նա իր օրագրում գրում է.

«Այժմ Աստվածաշունչը իմ միակ գիրքն է: Իմ իրական երջանկությունը սկսվեց այն պահից, երբ Ս. Գիրքն ու ջերմեռանդ աղոթքը հավատ արթնացրին իմ մեջ: Միայն հիմա՝ կյանքի

¹³⁹ N. N. Nep1lev9, Qto est6 istina?. Lejpcig9, 1893, էջ 327-329, 348, 356, 360-363

աննուլար միակ ճշմարիտ ուղին գտնելուց հետո կարող եմ ինձ կենդանացած համարել»:¹⁴⁰

Նշանավոր գեղանկարիչ, Դրեզդենի ակադեմիայի պրոֆեսոր Յուլիուս Շնոռը (1794-1892) ասում է.

«Գիրք գրողը անսպառ է նաեւ արվեստի համար: Երբ այն վեհասքանչ գծերով սկսում է մարդկանց պատմությունը եւ լուսաբանում նրա բարեհաջող ընթացքը, երբ, վերջապես, իր ճառագայթներով ողողում է նաեւ գալիք իրադարձություններն ու աշխարհի վախճանը, այսինքն՝ ընդգրկում մարդկության ողջ պատմությունը, այդժամ արվեստն ամենուր ստիպված է լինում ստեղծագործությանը հաղորդել նաեւ Աստվածաշնչի լույսը: Եթե այս գիրքը պատմում է մեր ճակատագրի ու վարքի, միաժամանակ նաեւ ամեն մարդու պատմության եւ նրա սրտի մասին՝ ցույց տալով մարդուն ճշմարտության հայելին, ապա արվեստն էլ, հայտնվելով իր լույսով ու ստվերով հանդերձ, բերում է իրենը, որպեսզի մարդը գա ինքնաճանաչման: Ոչ մի այլ պատմություն այդքան նրբին դիտողականությամբ ու հստակությամբ մեզ չի ցույց տալիս մարդու շրջակա աշխարհը, որքան սուրբգրային պատումը: Նրանից բացի որեւէ այլ պատմություն չի ներկայացնում դրախտային վայելքը եւ շնորհը, հաշտությունն ու մեղքը, պատիժը, հիվանդությունն ու մահը: Որեւէ այլ պատմություն, աստվածաշնչականից բացի, չի տալիս ավելի զորավոր հիշեցումներ ու առավել համոզիչ օրինակներ մարդու բոլոր վիճակների վերաբերյալ. ոչ մեկը, բացի նրանից, չի խոսում կյանքի բոլոր հանգամանքներին համահունչ պատկերներով ու առակներով»:¹⁴¹

Հայտնի նկարիչ բարոն Մ. Պ. Կլոդտը (1835-1902) իր գեղարվեստական զարգացման վրա որոշակի ազդեցություն ու-

¹⁴⁰ Lebenserinnerungen eines deutschen Malers. Selbstbiographie nebst Tagebuchniederschriften und Briefen von I. Richter. Frankfurt am Main. 1886, էջ 381

¹⁴¹ Pestalozzi, Die christliche Lehre in Beispielen. Neue Folge, էջ 55-56

նեցած գրքերը թվարկելիս ի դեպ նկատում է. «Աստվածաշունչը երկար ժամանակ եղել է իմ ամենասիրելի ընթերցանության գիրքը»:¹⁴²

Մեր ակնարկը եզրափակենք պետական գործիչներով:

Պատմում են, որ պրուսական Ֆրիդրիխ Մեծ (1712-1786) թագավորի մերձավորներից մեկը, ժամանակի ֆրանսիացի անվանի փիլիսոփաների շրջանակում քննադատելով Լեռնան քարոզը, հակաճառել է թագավորին: «Սիրելի՛ս,- առարկել է նրան Ֆրիդրիխը,- եթե Քրիստոսն ընդամենը մեկ խոսք ասած լիներ՝ «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դուք արեք նրանց» (Մատթ. է 12), դրանով Նա ավելին է ասել, քան դուք՝ ձեր ողջ փիլիսոփայությամբ հանդերձ»:¹⁴³

Ս. Հեդինե կղզում իր բանտարկության ընթացքում Նապոլեոն I Բոնապարտը (1768-1821) շատ հաճախ Աստվածաշունչ էր կարդում: Կոմս դե-Լաս-Կեզասը Նապոլեոնի մասին իր հուշերում¹⁴⁴ հաղորդում է հետեւյալ փաստը, որն ի հայտ է բերում ամնվազն այն հարգանքը, որ նա տածում էր ավետարանական բարոյականության հանդեպ: «Կայսրը,- գրում է նա,- ավարտեց իր գրույցը՝ խնդրելով, որ որդիս նրան բերի Նոր Կտակարանը, եւ այնտեղից կարդաց Լեռնան քարոզը սկզբից մինչեւ վերջ: Այս ընթերցանությունը համակում էր նրան մեծագույն զարմանքով այդ քարոզի բովանդակած բարոյական սկզբունքների մաքրության, վսեմության եւ գրավչության հանդեպ: Մենք նույնպես զգում էինք այդ»:

¹⁴² Mnen][russk. lldej o luqwx knigax9 dl[qten][, SPb. izd. Lederle, էջ 43

¹⁴³ Pestalozzi, Die christliche Lehre in Beispielen. ZŃrich 1901, էջ 13

¹⁴⁴ Q. II, anglijsk. izd. v9 N61-}orke, էջ 256

Այդ ռազմական հանձարը, որի մասին ոչ ոք չի կարող ասել, թե նա պիետիստ* կամ զգացմունքային մարդ է եղել, մի անգամ Աստծո խոսքի մասին հետեւյալ մտքերն է արտահայտել.

«Ավետարանն ունի խորհրդավոր մի ուժ, ինչ-որ զարմանահրաշ գորություն եւ ջերմություն, որը ներգործում է մտքի վրա եւ դյուրեւ սիրտը: Նրա մասին խորհրդածելիս համոզվում ես, որ խոսքը երկնքի մասին է: Ավետարանը գիրք չէ, այլ մարդկային էակ, գործունեություն է ու գորություն, որը պարտության է մատնում այն ամենը, ինչ ցանկանում է խոչընդոտել նրա տարածմանը: Երբ սեղանի վրա է այս արտոնյալ գիրքը (այս խոսքերն արտաբերելիս կայսրը հարգալից ձեռք տվեց գրքին), ես չեմ հոգնում այն կարդալուց եւ ընթերցում եմ միշտ նույն հաճույքով:

Քրիստոսը չի փոխվում, չի հապաղում Իր ծրագրերն իրագործելիս, Նրա ամենատվորական խոսքն անգամ դրոշմված է պարզության եւ խորության կնիքով, որոնք գերում են թե՛ տգետին եւ թե՛ իմաստունին, եթե միայն ուշադրությամբ կարդան այն:

Անհնար է որեւէ այլ տեղում գտնել նման գեղեցիկ մտքեր, նման բարոյական կանոններ, որոնք երկնային մեծ գորքի նման ետ են մղում բոլոր հարձակումները, եւ մեր հոգում արթնացնում այնպիսի զգացողություն, որն ապրում ես չքնաղ գիշերը անթիվ աստղերով ընդելուզված պարզկա երկինքը գննելիս:

Մեր միտքը ոչ միայն կլանվում է այդ գրքի ընթերցանությամբ, այլեւ նրա միջոցով դառնում տիրական, իսկ հոգին այս գրքով ձերբագատվում է մոլորվելու ամեն վտանգից:

Մեր հոգիների Տերը մեր հանդեպ Իր սիրո պատճառով շնորհել է մեզ Իր Ավետարանը: Հենց Ինքն էլ մեր Ընկերը, Հայրը եւ մեր ճշմարիտ Աստվածն է: Իր կրծքի երեխայի

* Պիետիստ – խորհրդապաշտական՝ միստիկական տրամադրություններ ունեցող մարդ:

նկատմամբ մայրն ավելի հոգատար չէ, քան մեր Տերն ու Թագավորը՝ մեր հանդեպ: Ավետարանի թվչանքով հմայված հոգին այլևս ինքն իրեն չի պատկանում: Աստված իսկույն տիրում է նրան: Նա տնօրինում է նրա բոլոր խորհուրդները եւ ունակությունները, որոնք այլևս Իրենն են:

Քրիստոսի Աստվածության ինչպիսի~ ապացույց:

Իր անսահման արքայության մեջ Նա հետապնդում է լոկ մեկ նպատակ՝ մարդկանց բարոյական կատարելագործումը, խղճի մաքրությունը, հոգու սրբությունը եւ միությունն այն ամենի հետ, ինչ ճշմարիտ է»:¹⁴⁵

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Իոհան Ադամսը (1735-1826) խորին հարգանք էր տածում Ս. Գրքի հանդեպ, որը վերընթերցում էր մշտապես: Իր որդուն հասցեագրած նամակում (1811) նա գրում է. «Վաղուց է, ինչ սովորություն ունեմ տարին մեկ անգամ կարդալ Աստվածաշունչը: Ամեն առավոտ անկողնուց ելնելուն պես սովորության համաձայն ընթերցում եմ 4-5 գլուխ: Դա ինձանից պահանջում է գրեթե մեկ ժամ, եւ ինձ թվում է, թե օրն այդպես սկսելուց առավել նպատակահարմար ոչինչ չկա»:¹⁴⁶

Աստվածաշունչը բարձր էր դասում գերմանացի անվանի գիտնական եւ պետական գործիչ Վիլհելմ Հումբոլդտը (1767-1835): Նա գրում է.

«Երբ Ս. Գիրքը, ինչպես որ մեզանում է (նկատի ունի գերմանացիներին), սովորաբար ժողովրդի միակ գիրքն է հանդիսանում, ապա վերջինիս համար այն մարդկային հոգու ստեղծագործությունների մի ամբողջական ժողովածու է՝ պատմություն, բանաստեղծություն եւ փիլիսոփայություն. ընդ որում՝ այնպես, որ հազիվ թե գոյություն ունենա մտքի ու զգացմունքի որեւէ տրամադրություն, որն իր համապատասխան արձագանքը չգտնի Ս. Գրքում: Եվ միայն շատ քիչ բան

¹⁴⁵ F. Waff9, }isus9 Xristos9-Qudo istorji, էջ 185, 190-191

¹⁴⁶ Pestalozzi, Die christl. Lehre in Beispielen, էջ 26-27

կա նրա մեջ այնքան անհասկանալի, որ մատչելի չլինի առողջ, հասարակ զգացողությանը: Գիտելիքով հարուստ մարդը միայն առավել է խորամուխ լինում Աստվածաշնչի մեջ, սակայն ոչ ոք չի հեռանում չբավարարված... Ս. Գրքի ընթերցանությունը սփոփանքի անսպառ եւ, ընդամին, ամենահուսալի աղբյուրն է: Ես չգիտեմ այս առումով նրա հետ համեմատելի որեւէ այլ բան: Աստվածաշնչի մխիթարությունը հավասարապես առատ, թեպետ եւ բոլորովին տարբեր ձեւով, հեղվում է ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարաններում: Աստծո նախախնամությունը եւ առհասարակ տեսչության գոյությունը երկու Կտակարանների գերիշխող գաղափարն է: Եվ այստեղից է բխում [մարդու] կրոնական մտայնության խորին, ներքին ու կատարելապես անսասան այն համոզմունքը, թե ճակատագրի փոփոխականությունը, որից մարդիկ տառապում են, կատարվում է իմաստնագույն ձեւով եւ ծայրաստիճան օգտակար է ամբողջի, ուստի եւ՝ հենց իր՝ տառապողի համար»:¹⁴⁷

Ալեքսանդր I Բլագոսլովեննի կայսրը (1777-1825), իր մերձավորների վկայությամբ, պատկառում էր Աստվածաշնչից, որի բարերար ազդեցությունը հոգու վրա ճաշակել էր սեփական փորձով, եւ 1812 թ.-ից մինչեւ մահ պարտադիր ամեն օր առավոտյան ու երեկոյան կարդում էր այդ «աստվածային Գիրքը, բոլոր գրքերի Գիրքը»:¹⁴⁸ Կայսեր՝ Ս. Գիրքն ընթերցելու պատճառի մասին պատմում են հետեւյալը: Մոսկվայի կործանումը 1812-ին մինչեւ հոգու խորքը ցնցում է նրան: Ոչ մի տեղ մխիթարություն չգտնելով՝ նա իր երիտասարդության ընկերոջը՝ իշխան Ա. Ն. Գոլիցինին խոստովանում է, թե ոչինչ ի գորու չէ փարատել իր մռայլ մտքերը: Գոլիցինը՝ պալատականներից ամենաթեթեամիտն ու աչքի ընկնողը, մինչ այդ արդեն լրջացել էր եւ սկսել նորադարձի եռանդով ընթերցել Աստ-

¹⁴⁷ Fr. Arndt, Werth der Bibel, էջ 77-78

¹⁴⁸ N. K. Wilöder, Imper. Aleksandr I. Ego hizn6 i carstvovanje, t. IV, էջ 114

վածաշունչը: Նա երկչոտությամբ առաջարկում է Ալեքսանդրին սփոփանք քաղել այդ նույն աղբյուրից: Կայսրը ոչինչ չի պատասխանում, բայց որոշ ժամանակ անց, գալով կայսրուհու մոտ, հարցնում է, թե կարո՞ղ է նա իրեն տալ ընթերցելու իր Աստվածաշունչը: Այդ անսպասելի խնդրանքից խիստ զարմացած՝ կայսրուհին նրան է հանձնում իր Ս. Գիրքը, որը կայսրը մինչ այդ երբեք չէր կարդացել: Կայսրն առանձնանում է, սկսում կարդալ եւ զգում է, որ մտել է իր համար նոր հասկացությունների մի աշխարհ: Նա սկսում է մատիտով ընդգծել բոլոր հատվածները, որոնք կարող էր բաղդատել իր իսկ վիճակի հետ: Դրանք վերընթերցելիս նրան թվում է, թե ինչ-որ բարեկամական ծայն զորացնում է իրեն եւ փարատում մոլորությունները: «Մոսկվայի հրդեհը լուսավորեց իմ հոգին,- հետագայում խոստովանում է Ալեքսանդրը պրուսական եպիսկոպոս էյլերտին,- եւ սիրտս համակեց մինչ այդ անծանոթ հավատի ջերմությամբ: Այդ ժամանակ ճանաչեցի Աստծուն»: Ջերմ եւ անկեղծ հավատը հանգրվանեց կայսեր սրտում:¹⁴⁹ «Ես ըմբռնում եմ Ս. Գիրքը,- պատմում է նա,- զգալով, որ նրա խոսքերը սրտիս մեջ ներարկում են նոր, մինչ այդ անծանոթ մի աշխարհ եւ հագեցնում հոգուս ծարավը: Աստված Իր ողորմածությամբ շնորհեց ինձ Սուրբ Հոգով հասկանալ այն, ինչ կարդում էի. եւ այս ներքին ուսուցմանն ու լուսավորմանն եմ ես պարտական բոլոր այն հոգեւոր բարիքների համար, որոնք ստացա Աստծո խոսքն ընթերցելիս»:¹⁵⁰

Նապոլեոնի հետ վերջին պատերազմի (1815) նախապատրաստության ընթացքում կայսրն իր կասկածների փարատումը որոնում էր Ս. Գրքում: Հունիսի 7-ին նա կարդում է ԼԵ սաղմոսը (ըստ սլավոնա-ռուսական Աստվածաշնչի՝ ԼԴ), որից հետո երեկոյան ասում է, թե այդ սաղմոսը ցրել է պատերազմի հաջողության վերաբերյալ իր հոգում մնացած տագնապները.

¹⁴⁹ Նույն տեղում, Գ. III, էջ 116-117

¹⁵⁰ Նույն տեղում, Գ. IV, էջ 138

այլեւս ինքը համոզված է, որ գործել է Աստծո կամքի համա-
ծայն:¹⁵¹

Կայսրը հատկապես սիրում էր իր սիրտը սնել Նոր Կտա-
կարանի ընթերցանությամբ եւ իր ճամփորդությունների ըն-
թացքում հազվադեպ էր ձեռքից վայր դնում Ավետարանը: «Ես
հիացած եմ այդ գրքով», - Ավետարանի մասին խոստովանում
է նա իր ընկեր իշխան Ա. Ն. Գոլիցինին: Նա այնքան էր սիրում
Հայտնության գիրքը, որ «անկարող էր հագնել այն ընթերցե-
լուց»:¹⁵²

«Աստվածաշունչը լավագույնն է բոլոր գրքերից, եւ ես կկա-
մենայի, որ այն յուրաքանչյուրի ձեռքին լիներ», - ասել է Ամերի-
կայի Միացյալ Նահանգների նախկին նախագահ Թեյլորը
(1784-1850):

«Ս. Գիրքն անհրաժեշտ է մեր պետական հաստատություն-
ների ապահովության եւ անխախտելիության համար: Ազատ
կառավարումը չի կարող գոյատևել առանց կրոնի եւ բարոյա-
կանության, իսկ առանց Աստվածաշնչի չկա կրոն (ճշմարիտ՝
իհարկե), առանց կրոնի չկա բարոյականություն: Աստվածա-
շունչը պետք է տալ հատկապես պատանեկության ձեռքը: Նա
աշխարհի լավագույն դպրոցական դասագիրքն է: Այն, ինչ սո-
վորել եմ մանկուց, անհամեմատ ավելի լավ եմ հիշում, քան
այն, ինչ կարդում եմ հիմա: Կցանկանայի, որ մեր երկրի բոլոր
քաղաքացիները ենթարկվեն այդ սրբազան գրքի ազդեցությա-
նը»:¹⁵³

Անցյալ դարի ամենահռչակավոր պետական գործիչ եւ
քրիստոնեական բարոյական վեհ իդեալների կրող Վիլյամ
Գլադ-սթոնը (1803-1898) պատանեկան տարիքից մինչեւ մահ
եղել է Աստվածաշնչի խանդավառ մեծարողը: Ժողովրդի հա-
մար նախատեսված Ս. Գրքի բացատրությանը վերաբերող մի

¹⁵¹ Նույն տեղում, Գ. III, էջ 328

¹⁵² Տե՛ս 5Zapiski !. N. Barteneva%: 5Russk. Arxiv%, maj 1886, էջ
87:

¹⁵³ L. Pestalozzi, Die christl. Lehre in Beispielen, էջ 35

աշխատության իր ներածական խոսքում այս մեծ գրքի արժանիքի մասին նա գրում է.

«Անելանելի դրության, աղետների ու կյանքի բարդ իրավիճակներում հայտնված ո՞ր մեկիս է երբեւէ մերժել կամ կմերժի այս անսպառ գանձարանը: Ինչպիսի տիտղոս, ինչ հասարակական դիրք էլ [մարդն] ունենա, ամեն օր եւ ամեն ժամ նա կհարստանա Ս. Գրքի խոսքերով, որոնք հաճախակի կրկնվելուց չեն կորցնում իրենց գորությունը եւ այսօր էլ նույնքան լավ են շնչում պատանեկության եւ անմահության թարմ օդով, որքան այն օրերին, երբ հնչեցին առաջին անգամ: Երբ Ս. Գրքի ուսումնասիրողը առանձնության մեջ բաց անի իր սիրտը՝ ընկալելու Աստվածաշնչի խոսքերը, դրանք ջանքերի դիմաց կհատուցեն իրեն: Գիշերվա լուռ մենության մեջ, հիվանդության մահճում թե մահանալիս՝ ամենուր մեր օգնականն է Աստվածաշունչը: Այն իր խոսքերը թելավորում է հատուկ առաքելության՝ բավարարելու ամենայն կարիք՝ բժշկելով, թեթևացնելով, մխիթարելով, սատարելով, զորացնելով ու քաջալերելով»:¹⁵⁴

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հռչակավոր նախագահ Լինկոլնը (1809-1865) Աստվածաշնչի մասին ասել է. «Դա Աստծո՝ մարդուն շնորհած լավագույն պարգեն է: Այս գրքի միջոցով է աշխարհի Փրկիչը բաշխել բոլոր բարիքները: Առանց նրա մենք չէինք կարողանա տարբերել ճշմարտությունը ստից»:¹⁵⁵

Ռուս անվանի քաղաքական գործիչ կոմս Պ. Ա. Վալուեւը (1814-1890) իր կյանքի ձախորդ օրերին սեփական փորձով ճաշակել է Նոր Կտակարանի ընթերցանության բարերար ու անգուգական ազդեցությունը հոգու վրա: Ճակատագրի փոփոխություններ տեսած այս մարդու գրչով են գրվել այս զգացմունքային տողերը.

¹⁵⁴ Kirchenfreund, 1898, էջ 175

¹⁵⁵ The Bible Student and Teacher, 1906 Aug., էջ 134

Վերցրու կարդա՝ Աստծո գիրքը սուրբ,
հոգով ըմբռնի՛ր խոսքը փրկության,
որ փարատվի քեզ պաշարած ամեն մի տագնապ
եւ սրտով հայես դու երկինքը:
Հավատա՛, երբ ծերությունը դուռդ կթակի,
ու կբախվես հոգու կոհակներին մրրկալից,
այնժամ կլքես գրքերը բոլոր,
եւ լոկ այս մեկը քեզ հավետ կուղեկցի:
Այստեղ կգտնես այն, ինչ առ այսօր
չես ունեցել այս աշխարհում անեզերք,
եւ այսուհետ ոչինչ այլեւս չես փնտրի,
զի այստեղ է լիությունը բարիքների,
զի այստեղ է ամենայնը ամենայնում:

Պատմում են, թե Անգլիա այցելած մի հնդիկ իշխան ցանկա-
նում է իմանալ այդ հզոր պետության մեծության գաղտնիքը:
Վիկտորիա թագուհին (1819-1901) նրան չի ցույց տալիս ո՛չ իր
հիանալի նավատորմը, ո՛չ գանձարանը, ո՛չ քաջարի բանակը,
ո՛չ էլ ծովային հարուստ նավահանգիստները: Այլ, ձեռքը դնե-
լով Աստվածաշնչի վրա, ասում է. «Այս գիրքն է իմ ժողովրդին
բարօրություն պարգեւել եւ նրան դարձրել երջանիկ»:¹⁵⁶

Բրազիլիայի կայսր Դոն Պեդրոն (1825-1891), լրագրերի հա-
ղորդագրության համաձայն, մի անգամ այսպիսի դատողու-
թյուն է արել Աստվածաշնչի մասին. «Սիրում եմ Ս. Գիրքը:
Ամեն օր ընթերցում եմ այն եւ որքան շատ եմ կարդում, այն-
քան ավելի եմ սիրում: Մարդիկ կան, որ չեն սիրում Աստվա-
ծաշունչը. ես այդ մարդկանց չեմ հասկանում»:¹⁵⁷

Ականավոր իրավաբան եւ պետական գործիչ Կ. Պ. Պոբե-
դոնոսցեւի (1827-1907) մոտ կարդում ենք.

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 134

¹⁵⁷ Pestalozzi, Die christl. Lehre in Beispielen. Neue Folge, էջ 52

«Տանը Աստվածաշունչ կարդալիս եւ անտարբերությամբ ամբողջ էջեր չնկատելիս որքա՜ն հաճախ ես հանկարծ հանդիպում մի խոսքի, որը միանգամից ջերմացնում է հոգիդ եւ քեզ տանում ամենաքաղցր ու վսեմ հոգեւոր զգացողությունների աշխարհը: Ինչո՞ւ: Որովհետեւ այս խոսքը հարազատ է, ծանոթ հոգուն, խոսք, որն այն ժամանակ արթնացնում էր միտքդ ու փայփայում զգացմունքդ: Երբ հիշում ես անցյալի հանդիսավոր պահը, ներկան է պայծառանում այդ նույն հանդիսավոր լույսով: Երբեմն թվում է, թե սուրբգրային որոշ խոսքեր ինքնին օժտված են հոգին բոցավառելու եւ վսեմացնելու խորհրդավոր զորությամբ: Որքան հաճախ ես կարդում Ս. Գիրքը հոգեւոր խանդաղատանքի լավագույն պահերին, այնքան խոր են հոգում տպավորվում նրա խոսքերը եւ պահվում այնտեղ այնքան ժամանակ, մինչեւ որ հոգիդ կզգա այդ խոսքի կարիքը, որպեսզի թեժացնի այդ նույն բերկրանքի՝ մոխրի տակ անթեղված կայծը»:¹⁵⁸

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ռուզվելտը հետեւյալ կարծիքն է հայտնել Աստվածաշնչի մեծարժեքության վերաբերյալ.

«Ս. Գիրքը տարածելու նպատակ ունեցող յուրաքանչյուր հասարակություն արժանի է բոլոր ուղղամիտ քաղաքացիների գնահատանքին ու զորակցությանը, քանզի այն օրհնություն է բերում ողջ մարդկությանը: Մեր երկրի բարեկեցությունը, ինչպես նաեւ հոգեւոր զարգացումը խարխսված են Ս. Գրքի վրա: Աստվածաշնչի վարդապետություններն այնպես են միահյուսվում մեր քաղաքացիական եւ հասարակական կյանքին, որ անհնար է պատկերացնել մարդկային կյանքը առանց Ս. Գրքի: Նրա օտարմամբ մենք կկորցնենք ամեն մի հենարան: Ուստի յուրաքանչյուր ողջամիտ մարդ պետք է պարզ պատկերացնի, որ Աստվածաշնչի տարածման դադարեցումը անչափելի վնաս կհասցնի մեր լավագույն ձգտումներին: Մենք՝

¹⁵⁸ Prazdniki Gospodni. izd. Ø-oe, 1903, էջ 16

ամերիկացիներս, այնքան ենք պարտական Ս. Գրքին, որ վաղուց ժամանակն է մարել այդ պարտքը»:¹⁵⁹

Գերմանական թերթերում հրապարակվել է Գերմանիայի կայսր Վիլիելմ Երկրորդի կարծիքը Ս. Գրքի վերաբերյալ.

«Ես հաճախ եւ հաճույքով եմ ընթերցում Ս. Գիրքը, որը միշտ իմ գիշերային սեղանի վրա է. ես ընդգծել եմ նրա առավել արժեքավոր մտքերը: Չեմ կարող հասկանալ՝ ինչպես է, որ մարդկանց այսպիսի մեծ բազմությունը այդքան քիչ է հետաքրքրվում Աստծո խոսքով: Ավետարանը եւ Աստվածաշնչի մյուս գրքերն ընթերցելիս ո՞վ է, որ չի տոգորվել անբռնագրոս, վերապրած, հավաստի եւ ապացուցված ճշմարտության տպավորությամբ: Իմ յուրաքանչյուր մտքի, յուրաքանչյուր արարքի առնչությամբ ինքս ինձ հարց եմ տալիս, թե ինչ կասեր այս առիթով Աստվածաշունչը: Նա ինձ համար այն աղբյուրն է, որից զորություն եւ լույս եմ քաղում: Կասկածի ու թախծի ժամերին ես դիմում եմ սփոփանքի այս գանձարանին»:¹⁶⁰

Ծանոթանալով այս ակնարկում տեղ գտած հռչակավոր մարդկանց՝ Աստվածաշնչի մասին հայտնած կարծիքներին՝ թող այժմ ընթերցողն ինքը որոշի, թե որքանով են հիմնավոր նրանց կարծիքները, ովքեր պնդում են, թե միայն հիմար ու տգետ մարդիկ կարող են հավատալ Աստվածաշնչի իսկությանն ու սրբությանը: Կարծում ենք, որ վերոհիշյալ մեջբերումները հենց հակառակն են ապացուցում, ինչի հետ, ըստ երեւութին, պետք է համաձայնի յուրաքանչյուր անկանխակալ մարդ:

Աստվածաշնչի՝ դարերի հետ անանց նշանակությունը եւ աշխարհում բնավ չնվազող խոնարհումը նրա վսեմ արժանիքների առջեւ փաստ է, որն ակամա զարմանք է հարուցում մեր մեջ եւ մտորելու առիթ տալիս յուրաքանչյուր մտածող էակի:

¹⁵⁹ Sovremenna li Bibl][?, 1908, էջ 4-5

¹⁶⁰ Hurn. Xrist]anin9. 1910,]1n6-]116, էջ 157

Այս ապշեցուցիչ իրողությունը բացատրվում է հետևյալ կերպ. Աստվածաշունչը հավերժ կենդանի գիրք է, որն Աստծո կողմից նախասահմանված է մեր՝ ինչպես անհատական, այնպես էլ ընկերային հոգեւոր կյանքի անվերջ կատարելագործման համար: Վեր լինելով որեւէ տեղային ու ժամանակավոր նշանակությունից՝ Աստվածաշունչը մարդկության գիրքն է՝ բառի բացարձակ եւ բարձրագույն իմաստով: Մարդկանց ձեռքով գրված բազմաթիվ գրքեր վաղուց է, ինչ մեռել են կամ էլ պահպանվել նույնքան անկենդան, որքան եգիպտական մումիաները: Այդ գրքերն արժեզրկվեցին ժամանակի ընթացքում. այն անօրինակ գարմանքն ու մեծ հարգանքը, որ երբեմնի վայելում էին դրանք, արդեն մոռացության են մատնված: Պրպտե՛ք գրադարանները, եթե կամենում եք. բայց դրանք այլեւս չեն ստիպի տրոփել մարդու սիրտը, չեն ջերմացնի մեր հոգիները: Մարդկային հանճարի նույնիսկ կոթողային ստեղծագործությունների փառքի վաղանցիկությունը եւ հոգեւոր ազդեցության սահմանափակությունը կարելի է բացատրել լոկ նրանով, որ այդ ստեղծագործությունները, անկախ իրենց ողջ արտասովոր վեհությունից, իրենց ժամանակի ոգու եւ ժողովրդի ծնունդն էին: Եվ բնական է, որ մեկ այլ ժամանակի եւ մարդկային կյանքի այլ հարաբերությունների համար նրանք պետք է կորցնեին իրենց զորությունն ու նշանակությունը: «Habent sua fata libelli-գրքերն էլ ունեն իրենց ճակատագիրը», - ասում էին հին ժամանակներում: Եվ դա ճիշտ է. գրքերը գալիս են ու գնում, ինչպես մարդկային սերունդները, որոնց իսկ զավակներն են դրանք: Թեպետ Աստվածաշնչի գոյությունը մարդկանց մեջ թվագրվում է հազարավոր տարիներով, այդուհանդերձ միայն նա՝ Աստծո այդ հույժ օրհնյալ գիրքն է անմահ իր կյանքով եւ աննկուն՝ իր զորությամբ: Քանզի այն խոսում է ոչ թե որոշակի ժամանակահատվածների եւ սոսկ ընտրյալ անձանց համար, նշանակալից է ոչ միայն կյանքի որոշակի հարաբերություններում, այլ հռչակում է իր աստվածահայտ ճշմարտությունները

բոլոր ժամանակների եւ բովանդակ մարդկության համար, օգնական եւ առաջնորդ հանդիսանում մեր կյանքի բոլոր իրավիճակներում: Չնայած իր հնությանը՝ Աստվածաշունչը հավերժ պատանի ու թարմ է իր գաղափարներով եւ հույժ ուսանելի բոլոր ժամանակների մարդկանց համար: Աստվածաշունչի երիտասարդության ցողը առ այսօր իր վրա է. նրա խոսքերն այսօր էլ ընկնում են երկնքից՝ թարմ, ինչպես անրձեւը. նրա ճշմարտությունները ցայսօր հավետ կենդանի սփոփանքով են ամոքում աշխարհի բոլոր տառապյալ զավակներին: Երբեք ոչ մի գիրք այնպես չի խոսել, ինչպես այս գիրքը. նրա ծայրն նույնքան ամենագոր է, որքան Աստծո ծայրը, եւ միշտ լեցուն է գերմարդկային փառահեղությամբ: Ս. Գիրքը դույզն-ինչ չի հնացել իր գոյության ավելի քան 3000 տարիների ընթացքում եւ երբեք չի հնանա: «Երկինք ու երկիր պիտի անցնեն, բայց Իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. ԻԴ 35),- ասել է Փրկիչը: Աստվածաշունչը միշտ նույն հետաքրքրությունն է ներկայացնում բոլոր ժամանակների եւ բոլոր ժողովուրդների համար:

Ամբողջ հազարամյակներ Ս. Գիրքը գոյություն է ունեցել աշխարհի կրթված ժողովուրդների կյանքում. եւ այդ երկարուձիգ դարերի ընթացքում անդադար պայքարում է իր հոգեւոր իշխանության համար՝ դիմագրավելով բազում հարձակումները, որ մեծ մասամբ գալիս են իր հակառակորդի՝ թերահավատների ու անհավատների ճամբարից: Կարելի է ասել, որ Ս. Գրքի բազմադարյան պատմության ընթացքում ոչ մի ասույթ չի վրիպել նրա թշնամիների գրեթե մանրադիտակային քննությունից: Այս մեծ գրքի բազմաքանակ էջերում դժվար թե գտնվի մեկ հատված, ուր թեժ պայքարում իրար չբախվեին նրա թշնամիներն ու պաշտպանները: Ժամանակ առ ժամանակ Ս. Գիրքը դիտողի առջեւ հառնում է ասես բզկտված, մերժված, հավանաբար՝ նաեւ ոչընչացված: Բայց իրականում ամեն մի հարձակման ընթացքում նա ի հայտ է գալիս որպես ամրակուռ

գրանիտ, դարբնի յուրատեսակ մի սալ, որի վրա փշրվում են հարյուրավոր մուրճեր՝ նրան էական վնաս չպատճառելով: Որքա՞ն ջանացին ոմանք տապալել Ս. Գիրքը այն բարձր պատվանդանից, որի վրա այն իրավամբ բարձրացրել էին միլիոնավոր մարդիկ, այդուհանդերձ այն իր դիրքով անսասան մնաց առաջվա պես եւ նախկինից էլ արագ է տարածվում աշխարհում: XVIII հարյուրամյակի վերջում՝ Վոլտերի դարում, քիչ էր մնում բոլորովին մերժելն այն: Նշանավոր ծաղրասեր Վոլտերը՝ իր ժամանակի ամենաուսյալ մարդը, ի միջի այլոց գրել է. «Աստվածաշունչը հարյուր տարի հետո կմատնվի մոռացության ու կորստի. որպես հազվագյուտ իր՝ այն հնարավոր կլինի գտնել միայն պահոցներում ու հնագիտական թանգարաններում՝ իբրեւ նախկին սերունդների հիմարության վկայություն»: Անխիղճ ու արյունարբու անհավատությունը կատաղի ուժով էր տարածվում Ֆրանսիայում եւ հարեւան երկրներում: Այդ ժամանակից արդեն անցել է ավելի քան հարյուր տարի: Իրականում Վոլտերն ինքը պատմության գիրկն անցավ. նա մահացավ վախկոտի մահով (այնպես որ մինչեւ իսկ նրա մտերիմ ընկերներն ամաչեցին այդ մահից)՝ պատմության մեջ գրավելով խիստ անարգ մի տեղ, իսկ Աստվածաշունչը ապրում է առ այսօր՝ հանդիսանալով ողջ քաղաքակիրթ մարդկության անօրինակ զորության եւ ճշմարտության աղբյուրը: Եվ որքան հատկանշական է, որ Փարիզում, այն նույն տեղում, ուր Վոլտերը մի ժամանակ վերոհիշյալ խոսքերով մարգարեացավ Ս. Գրքի մասին, այսօր (այդպիսին է Աստծո նախախնամությունը) գտնվում է Բրիտանական աստվածաշնչական ընկերության գրապահոցը, որտեղից տարեկան 150.000 օրինակ Ս. Գիրք է տարածվում: Ճակատագրի ինչպիսի~ հեզնանք... Թեեւ հեթանոսական Հռոմը փորձում էր ոչնչացնել այն, միջնադարյան պապական Հռոմը՝ մեկուսացնել բանտում, նոր ժամանակների ռացիոնալիզմը՝ վարկաբեկել, ֆրանսիական անհավատությունը՝ ծաղրել, նորագույն պանթեիզմը՝ հանձնել հո-

դին, ժամանակակից քննադատությունը՝ այն անսահման հեռացնել մարդկության մեծամասնությունից, թեև ենթարկվել է բազում ու բազմապիսի չարական ոտնձգությունների, Աստվածաշունչը, այնուամենայնիվ, ապրում է՝ ի հայտ բերելով կենդանության բացահայտ նշաններ: Ավելին, այն ոչ միայն ապրում է հիմա, այլև երբեք չի եղել այնքան կենսունակ, որքան մեր ժամանակներում է: Մի՞թե Համաշխարհային աստվածաշնչական ընկերությունը դրա հրաշալի վկայությունը չէ: Այդ ընկերությունը հրատարակել է Աստվածաշնչի ավելի քան 312.000.000 օրինակ եւ այն թարգմանել 350-ի սահմանագիծը անցնող, ինչպես նաև 70 այնպիսի լեզուների, որոնք անցյալ դարի սկզբին գիր ու գրականություն դեռեւս չունեին: Սա ծայրաստիճան հրաշալի կամ, ավելի ճիշտ, ապշեցուցիչ փաստ է: Այսօր Աստվածաշունչը հառնում է աշխարհի ամբողջ իր բովանդակ հետաքրքրությամբ, որն ամփնքնում է թե՛ նրա բարեկամներին եւ թե՛ թշնամիներին: Երբեք Ս. Գիրքը չի ուսումնասիրվել այնպես մանրակրկիտ, երբեք այնքան ուժեղ չի գրավել մարդկանց ուշադրությունն առհասարակ, եւ երբեք քրիստոնյաների ցանկությունը՝ ճանաչել Ս. Գրքում ամփոփված Տիրոջ բոլոր խորհուրդները, ճանապարհներն ու խոհերը, չի եղել այնքան զորեղ, որքան մեր օրերում: Ս. Գիրքը ցայսօր շարունակում է անփոփոխ եւ հուժկու կերպով ներգործել աշխարհի ժողովուրդների վրա՝ վայելելով ոչ միայն ցածր ու անուս խավերի, այլև գիտության լավագույն ու լրջամիտ ներկայացուցիչների եւ պետական ու հասարակական կյանքի ազնվագույն գործիչների նվիրական հարգանքը: Աստվածաշունչը բոլոր մարդկանց սեփականությունն է՝ անկախ նրանց ծիրքից, հասարակական դիրքից եւ դաստիարակությունից: Գեղեցիկ կազմով Աստվածաշնչի կարելի է հանդիպել ազնվականի պալատում՝ սեղանի վրա, անպաճույճ կազմով՝ նավի տախտակամածին կանգնած նավաստու ձեռքին, կամ էլ հողագործ գյուղացու խրճիթում: Այս գիրքը բացված կտեսնեն թե՛ աստ-

վածաբան պրոֆեսորի աշխատասենյակում, թե՛ աֆրիկյան արքատ նեգրի հյուղակում:

Աստծո խոսքը ապրում է հավիտյան, քանզի այն ինքը ճշմարտությունն է: Չէ՞ որ ճշմարտությունը երբեք չի մահանում. այն անմահ է: Լույսի աղբյուրի մոտ վառված՝ այն երբեք չի մարի: Երբեմնի հռչակավոր բազում փիլիսոփայական ուսմունքներ եւ ոչ քրիստոնեական վարդապետություններ, իբրեւ մոլորություն, մատնված են մոռացության եւ թաղված վաղուց, սակայն ճշմարտությունը, ինչպիսին որ է ի Հիսուս Քրիստոս, գերեզման չունի եւ չի վախենում թաղումից: Այն շարունակում է ապրել ու շարժել մարդկանց սրտերը եւ երբեք չի անհետանա երկրի երեսից:

Աստծո խոսքը ապրում է, քանզի այն անայլայլ եւ ինքնագո Աստծո խոսքն է: Աստված այսօր չի ասի այն, ինչ չի կամեցել երեկ, իսկ վաղը չի ջնջի այն, ինչ ասում է այսօր: Երեք հազար տարի առաջ տրված խոստումը այնքան զորեղ է ու նոր, կարծես թե հավիտենական շուրթերը այսօր են արտաբերել դրանք: Ամենակարող Աստծո շուրթերից ելած խոսքը այսօր էլ օժտված է նույն մեծագործությամբ եւ հազվագյուտ նորությամբ, ինչպես այն ժամանակ, երբ Նա խոսում էր Մովսեսի, Եղիայի հետ կամ էլ հայտնում Եսայի եւ Երեմիա մարգարեների բերանով: Այն միշտ ստույգ է, անփոփոխ ու զորավոր: Եվ երբեք իր դարը չի ապրում: Այն հավերժ թարմ է, քանզի կենաց ջուրն է:¹⁶¹

Անգնահատելի է Աստվածաշնչի նշանակությունը մեր ողջ հոգեւոր կյանքի համար: «Ամբողջ քրիստոնեական մշակութային եւ հոգեւոր կյանքը,- գրում է Լյուտարդը,- երկու արմատ ունի անցյալում. մեկն արձակված է հունա-հռոմեական, մյուսը՝ Աստծո ժողովրդի հողում: Առաջինից մենք ստանում ենք մեր ոգեղեն կրթությունը, երկրորդից՝ մեր կրոնը: Վերջինս Հունաստանի ու Հռոմի աշխարհիկ կրթության եւ նորագույն ժողո-

¹⁶¹ Տե՛ս Օ. Spurdhona, Hiva[kniga. Beseda o Bibli], SPb. 1895, էջ 9-10

վուրդների ոգու հետ զուգակցվել է քրիստոնեական մշակութային կյանքի կուռ ամբողջությամբ: Ինչպես որ մեծ քաղաքակիրթ ժողովուրդների ոգին է մեզ հաղորդվում նրանց գրավոր հուշարձանների, այդ թվում՝ արվեստի ստեղծագործությունների միջոցով, որոնք հասկանալի են դառնում եւ խոսում մեզ հետ, այնպես էլ Իսրայելի կրոնն ու քրիստոնեությունը ունեն իրենց գրականությունը: Վերջինիս միջոցով մենք հաղորդակցվում ենք այս կրոնի հոգեւոր ոգուն: Աշխարհիկ կրթության գրականության կողքին ի հայտ է գալիս կրոնի այս սրբազան գրականությանը: Եվ այն կարող է իր տեղն ունենալ աշխարհիկ գրականության կողքին: Նույնիսկ անկախ կրոնական բովանդակությունից, դիտարկված սոսկ մարդկային տեսանկյունից՝ Ս. Գիրքը ներկայանում է իբրեւ աշխարհում երբեւէ գրված գրական ստեղծագործություններից ամենափառահեղը: Որքան մեծ է այն իր ապշեցուցիչ պարզությամբ եւ պատումների պատմական նշանակությամբ, այնքան էլ խոր ու հարուստ է իր մտքերով, իր խոսքի զորությամբ ու բազմազանությամբ, իր պոեզիայի հարստությամբ եւ գեղեցկությամբ: Օլիմպիական խաղերի հաղթողներին գովերգող Պինդարոսի հաղթական երգերից դեռ շատ առաջ Դավիթն արդեն կերտում էր իր սաղմոսները, որոնց թեիչքով ու զորությամբ դեռ այսօր էլ քաղցրանում է մեր հոգին: Իսկ դրանից էլ առաջ, մինչ Հոմերոսը Փոքր Ասիայի ավերին Տրոյայի հերոսների սխրանքների մասին իր պատմություններով կգմայլեր իր ժողովրդի պատանիներին, Մովսեսն ու իր քույրը արդեն երգում էին իրենց հաղթական երգերը եգիպտական փարավոնի կործանման առիթով, իսկ դատավորություն անող մարգարեուհի Դեբորան իր երգի վեհապանծ պատկերներում գովերգում էր իր ժողովրդի հաղթանակը: Երբ Տիբերի ավամերձ բլուրներին դեռ նոր էին դրվում ապագա աշխարհակալ պետության մայրաքաղաքի՝ Հռոմի հիմնաքարերը, Իսրայելի մարգարեներն արդեն Սուրբ Հոգով լույս էին սփռում ժողովուրդների ճակատագրերի վրա՝ կան-

խասելով նրանց ապագան, եւ Ղեմնութենեսի խոսքից գերազանց ուժով ու եւքիլեսի պոեզիայից ավելի վեհասքանչ թռիչքով ազդարարում էին Աստծո դատաստանները Իսրայելի ժողովրդի մեղքերի վրա: Աստծո շնորհի մասին նրանց խոսքերը տոգորված էին ավելի մեծ սիրով, քան ինչ-որ Սոֆոկլեսի ամենասիրաճատ խոսքերը: Մարդկային զգացմունքների աշխարհում չկա մի երանգ, որն իր արտահայտությունը չունենար այնտեղ՝ սկսած սրբազան զայրույթի որոտի ճայթումից կամ հուսահատության սրտակեղեք ողբից մինչեւ ապաշավանքի խանդաղատալից բացականչությունները կամ սիրո բոցաշունչ երգերը: Մենք հիշողության մեջ պահում ենք Հունաստանի յոթ իմաստունների անուններն ու նրանց ասույթները: Սակայն ի՞նչ է այս իմաստունների իմաստությունը Հին Կտակարանի ասույթներում ամփոփված կենսական իմաստության գանձերի համեմատ: Մենք սուզվում ենք Պլատոնի մտահայեցումների խորքը եւ զմայլվում նրա գաղափարների ազնվությամբ: Սակայն Ս. Գիրքը խոսում է հավիտենական տեսլականների աշխարհի՝ ինչպես իր հոգուն ծանոթ հայրենիքի մասին եւ արտահայտում խորախորհուրդ մտքերն ու ամենաընդգրկուն հայացքները այնպիսի վստահությամբ ու պարզությամբ, ասես խոսքը վերաբերում է աշխարհի պարզագույն ճշմարտություններին, ամենքին քաջածանոթ ու հասկանալի դրույթներին: Անկասկած, իբրեւ մարդկային ոգու ստեղծագործություն դիտարկելիս էլ Ս. Գիրքը գերազանցելով գերազանցում է բոլոր ժամանակների եւ ժողովուրդների գրական հուշարձանները: Մի պահ պատկերացնենք, թե Աստվածաշունչ չենք ունեցել, եւ այն միայն այսօր է հայտնաբերվել որեւէ գրադարանի մի անկյունում. ի՞նչ տպավորություն կգործեր այդ գյուտը... Աստվածաշունչն իբրեւ ուսուցման եւ հանդիմանության աղբյուր անսպառ է եւ գերիվեր, քան մարդկային ոգու որեւէ այլ, թեկուզ եւ ամենահանձարեղ ստեղծագործությունը: Իսկական գիրք է Աստվածաշունչը, այն էլ ինչպիսի~... Նրա մեջ մենք հանդիպում

ենք հոգու ամենանվիրական հարցերի, սրբազնագույն զգացմունքների ու մտքերի հետ: Նա միշտ ի զորու է կրկին ու կրկին լուսավորել մեր հոգիները իր մեջ խորամուխ լինելուն պես: Նրանում ասես հավերժ կարկաչող աղբյուր է հոսում, որի մեջ զովություն է գտնում մեր հոգին: Նրա մեջ կարող ենք ապաստան գտնել՝ փախչելով աշխարհի շփոթահարությունից, առօրյա աղմուկից, մեր մտքերի ու զգացմունքների ներհակությունից: Այնտեղ մեր հոգին հանգստանում է, այնտեղ զգում ենք հավիտենության շունչը, այնտեղ տիրում է Աստծո սրբությունը»:¹⁶²

Իր ողջ վեհությամբ հանդերձ Աստվածաշունչը, սակայն, չափազանց պարզ է: Բա՛ց արեք Գիրքը: Ինչպիսի՜ վեհություն սկզբից եւեթ: Եվ միաժամանակ՝ ինչպիսի՜ պարզություն: Համենատե՛ք Մովսեսի նկարագրած աշխարհի արարման պատումները հնդիկների ու պարսիկների թեոգոնիայի՝ դիցածննդաբանության հետ, որոնք լի են մանկամիտ հնարքներով ու նկարագրություններով, եւ որոնց մեջ հրաշալիւն հասնում է անհեթեթության: Հեթանոս հեղինակները ջանում էին իրենց չաստվածների հզորությունն ընդգծել բազմազան չափազանցությունների կուտակումով, իսկ Ծննդոց գրքի մեկ խոսքն իսկ բավական է. այն ավելի իմաստալից է, քան ամեն տեսակ փքուռույց պատկերները:

Մարդու արարման սուրբրգային պատումը եւս մեզ ապշեցնում է իր վսեմ պարզության այդ նույն բնույթով: Մարդու առաքելության բովանդակ մեծությունը այնտեղ շարադրված է մի քանի բառով. Աստված մարդուն արարեց հողից Իր «պատկերով եւ նմանությամբ», որպեսզի նա սիրի Աստծուն եւ ծառայի Նրան: Մարդու արարումից հետո միմյանց են հաջորդում մեղանչման, ջրհեղեղի, աշխարհով մեկ ժողովուրդների սփռվելու պատկերները: Եվ դրանց մեջ, ուր պատկերավորությունն

¹⁶² Xr. & Ltardt9, Apolog][xrist]anstva, SPb. 1892, էջ 330-331, 341

անկասկած մեծ դեր է խաղում, ինչպիսի~ խոր եւ ահեղ իմաստ ենք գտնում, մարդկության պատմության ինչպիսի~ անծայրածիր հեռանկարներ են բացվում: Մի քանի վրձնահարվածը ծառայում է իբրեւ առաջին դարերի տարեգրություն. այնտեղ ամեն ինչ վսեմ է, եւ արտառոց ու երեւակայական ոչինչ չկա: Այս պատմությունը կարդալիս երեխան կլանվում է նրանով. նրա գիտակցությունն ապշած է, քանզի բարոյական գաղափարը` աստվածային սրբության գաղափարը, մաքուր լույսի պես ճառագում է այդ պատումներում` նրանց հաղորդելով վեհապանծ միասնություն: Այս փառահեղ պատումներից հետո կլանենա՞ք արդյոք լսել հնադարյան բնության պարզունակ հնչյունները: Կարդացե՛ք նահապետների պատմությունը, որոնց կյանքն ընթանում է անապատներում, եւ որոնց լռակյաց մենությունը Աստված համակում է Իր ներկայությամբ: Ահա ձեր առջեւ Աբրահամն է, եւ դուք իսկույն եւեթ կհիշեք նրան իր որդուն վշտահար սրտով զոհաբերության տանելիս: Ահա Հակոբը, որ կարճառոտ պատմում է փարավոնին իր երկարամյա կյանքը: Ահա եւ Հովսեփը. առանց հուզմունքի կարո՞ղ եք կարդալ այս պատմությունը, ուր այնքան անկեղծ են շարադրված ամենաքնքուշ զգացմունքները: Մտաբերե՛ք Վոլտերին, որն այս տողերը կարդալիս չկարողացավ այլեւս ծաղրել, եւ նրա սարկաստիկ դեմքի վրայով հոսեցին խանդա-դատանքի արցունքները:

Աստվածաշունչն օժտված է զուտ մանկական հոգեւոր ընկալմանը հարմարեցված սքանչելի եւ միանգամայն հրաշալի զորությամբ: Այս գիրքը եւ մասնավորապես Քրիստոսի Ավետարանը հանձինս այս երեխաների միշտ գտել է նախանձախնդիր ընթերցողների լայն շրջանակ, որոնց անդիմադրելիորեն առիւնքնել են պարզ ու հանրամատչելի շարադրված վսեմագույն եւ խորախորհուրդ ճշմարտությունները Աստծո, աշխարհի եւ մարդու վերաբերյալ: Հեքսլին իր ճառերից մեկում ասում է, որ թեւեւ ինքը աշխարհիկ կրթության ջատագով է, այ-

նուհանդերձ ի վիճակի չէ վերջնականապես գտնել այն, ինչ կփոխարիներ Աստվածաշնչին, որովհետև չկա որեւէ այլ գիրք, որում արծարծված վեհագույն, ամենավսեմ ու մաքրագործող գաղափարները երեխայի մտքի համար լինեին այնքան գրավիչ, որքան Գիրք գրոցն է: Պրոֆեսոր Սենտ-Իլերը գրում է. «Ես ճամփորդել եմ հյուսիսում ու հարավում, արեւմուտքում եւ արեւելքում եւ չափազանց ցնցված եմ մի փաստով. Աստվածաշունչ ընթերցող երկրներում երեխաների եւ աշխատավոր մարդկանց համար գրականություն կա, իսկ այն երկրներում, որտեղ Աստվածաշունչ չեն կարդում, ինչպես Իտալիայում կամ նույնիսկ Ֆրանսիայում, երեխաների եւ աղքատ ժողովրդի համար գրականություն չկա: Ո՞ր մեկ այլ գրքում նմանօրինակ պատմություն կգտնեք: Որտե՞ղ կգտնեք նման պատումներ: Որտե՞ղ կգտնեք այսպիսի բնավորություններ: Ուրիշ ո՞ր գրքում է նման ուսմունք շարադրված: Որտե՞ղ կգտնեք այսպիսի պոեզիա, որը լինի այնքան վեհ եւ միաժամանակ, նախ եւ առաջ, այնքան հարազատ երեխաներին ու ժողովրդին, որ տալիս է Ս. Գիրքը... Նրա լեզուն հանրամատչելի է: Այն նման է արեգակի, որ լուսավորում է բոլոր երկրներն ու այդտեղ ապրողներին...»

Ուշադրություն դարձրեք Ս. Գրքի ոճին: Դժվար է նկարագրել այն, բայց ամենքս էլ նրա մասին որոշակի պատկերացում ունենք: Պատումների պարզություն, միայն իրեն հատուկ անաչառ հանգստություն, զորություն, հստակություն եւ նրբագեղություն՝ այս ամենը Ս. Գիրքն ընթերցելիս զգացել է յուրաքանչյուր ոք՝ լինի հավատացյալ թե՛ անհավատ: Գրքի լեզուն բռնագրոս չէ, նրան խորթ է ճարտասանության մեջ վերամբարձ կոչվող ոճը, որն իրականում ոչ այլ ինչ է, քան արհեստական ու շինծու մի բան: Աստվածաշնչում ոճը վեհանում է արծարծվող մտքերի հետ մեկտեղ՝ ներդաշնակ եւ անբռնագրոս կերպով: Երկնքի բարձունքներից առանց որեւէ ճիգի այն իջնում է երկիր եւ նկարագրում ամենաերկրային բաները՝ ամենեւին

չջանալով վեհացնել դրանք կեղծ վերամբարձությամբ: Ահա թե ինչու շատ էջեր կան Ս. Գրքում, որտեղ իզուր փնտրած կլինեք գեղագիտություն, քանզի այստեղ անպատեհ է այն: Ի հակադրություն մարդկային ստեղծագործությունների, Ս. Գրքում մեզ ապշեցնում է նրա վառ արտահայտված ճշմարտացիությունը: Աստվածաշունչը բոլոր գրքերից միակն է, որը չի հաճոյանում մարդկային բնությանը: Նույնիսկ առաջին դարերի խորհրդավոր հեռվում ապրող մարդուն նկարագրելիս, երբ երեւակայությունը դյուրությամբ կարող էր որսվել վեհապանծ պատկերներով, այս դեպքում անգամ գիրքը բնավ չողոմ խոսքերի ու քծնող չափազանցությունների մեջ չի ընկնում: Մտաբերեք թեկուզ մի ժողովրդի, որի բանաստեղծներն ու պատմիչները իրենց հայրենիքի մեծ ու նշանավոր մարդկանց մասին պատմած լինեին այնպես, ինչպես սուրբգրային հեղինակները: Ո՞վ է հայտնել մեզ Մովսեսի, Ղափթի, Սողոմոնի կամ էլ Նոր Կտակարանում Պետրոս առաքյալի տկարություններն ու սխալները: Ո՞վ է մեզ ավանդել իրենց անկեղծությամբ անզուգական նկարագրությունները: Տեսեք, թե ինչպես ավետարանիչները նույնիսկ դույզն-ինչ չեն արտահայտում իրենց խանդավառությունը կամ զգացմունքը: Սակայն եթե Աստվածաշունչը երբեք չի հաճոյանում մարդուն, ապա բնավ չի էլ նսեմացնում եւ նվաստացնում նրան. երկրի որդին երկնքի համար է ստեղծված, եւ որքան էլ նա երկրային ու թշվառ լինի, Ս. Գիրքը միշտ վերադարձնում է նրան այդ մեծ կոչմանը:

Գեղարվեստագետ լինելով՝ նշանավոր քնարերգու Հայնեն տեսնում էր Աստվածաշնչի ողջ գեղեցկությունը եւ այն անսահման տարածությունը, որ ընկած է այն ամենի, ինչ կարող է ստեղծել արվեստը, եւ այս գրքի միջեւ: «Սա ինչ գիրք է, բացականչում է նա,- մեծ ու ընդգրկուն՝ տիեզերքի խորքից մինչեւ երկնքի խորհրդավոր կապույտը ծավալված... Արդարեւ, դա Աստծո խոսքն է, մինչդեռ մյուս բոլոր գրքերը մարդկային արվեստի արգասիք են: Աստվածաշնչում արվեստի հետք իսկ

չկա. անհնար է քննել նրա ոճը»: Այս նշանավոր բանաստեղծը մոտ էր ըմբռնելու Ս. Գրքի ոճի գաղտնիքը: Ինչպես բնությունն է բարձր արվեստից, այնպես էլ Ս. Գիրքը՝ որեւէ այլ գրականությունից: Արհեստական վարդ տեսնելիս ասում եք. «Ինչ հմտություն»: Երբ իսկական վարդ եք տեսնում, բացականչում եք. «Ինչ գեղեցիկ է, ինչ հոտավետ»: Ինչպես բնությունը վեր է արվեստից, այնպես էլ ներշնչանքը՝ բնությունից: Հանձարեղ մարդը բարձր է սովորական մարդուց: Նա ինքն իր համար օրենք է: Նրա խոսքերը, նկարներն ու քանդակները ասես նրա ստեղծագործությունները լինեն: Բայց որքան էլ ահռելի է տարբերությունը հանձարեղ մարդու եւ սովորականի միջեւ, դա ոչինչ է այն տարբերության համեմատ, որ գոյություն ունի Սուրբ Հոգու լույսով լուսավորված մարդու, ում միջոցով խոսում է Նա, եւ ամենամեծ ու ամենափայլուն հանձարի միջեւ: Նրանք բոլորն էլ՝ հավատացյալ լինեն թե ոչ, պետք է ասեն. «Ոչ մի մարդ երբեք այնպես չի խոսել, ինչպես այս Մարդը» (Հովհ. Է 46), երբեք ոչ մի գիրք չի գրվել այնպես, ինչպես այս Գիրքը»:¹⁶³

Դարեր շարունակ մարդկությունը կարդում է Աստվածաշունչը, մենք անդադար լսում եւ ընթերցում ենք միեւնույն բանը, սակայն ոչ ոք չի ցանկանա որեւէ նոր, ավելի լավ բան: Անսպառ է Ս. Գրքի հոգեւոր հարստությունը: Օրինակ՝ Նոր Կտակարանը աշխարհի ամենափոքրածավալ գրքերից է: Բայց եւ այնպես արդեն շուրջ 19 դար է, ինչ սերտում, մեկնում եւ քարոզում են այդ գիրքը, եւ ո՞վ կարող է ասել, թե այն արդեն լիովին սպառել է իրեն: Միայն ոչ խորաթափանց մարդը կարող է այդպես կարծել: Այս փոքրիկ գիրքը նման է մեծ այգու, որի ծառերի վրա, որքան էլ քաղես, միշտ կարելի է պտուղներ գտնել: Ինչպես որ անուշահոտ նյութերը, որքան շատ են հարվում մատների մեջ, այնքան ավելի են բուրում, այնպես էլ Ս. Գրքի

¹⁶³ Տե՛ս A. Safir, *Veqnoe Slovo i pisannoe Slovo*. Rostov9 na Donu, 1906, էջ 11-13

դեպքում է. ով ջանում է առավել խորամուխ լինել նրա մեջ, այնքան շատ են բացվում նրա հոգեւոր գեղեցկությունները, այնքան շատ է նրանից ստանում կյանքի իմաստություն եւ հոգեւոր հարստություն: Ս. Հովհաննէս Ոսկեբերանի խոսքերով՝ Աստվածաշնչի կարճ ասություն անգամ կարելի է մտքերի անասելի հարստություն գտնել. «Ս. Գրքում չկա մի վանկ, մի նշանախօսք, որի խորքում մեծ գանձ ամփոփված չլինի: Միանգամայն անհնար է,- ասում է սուրբը,- սպառել Ս. Գրքի իմաստը: Այն անհատնում աղբյուր է»:

Աշխարհի բյուրավոր գրքերի մեջ միայն Ս. Գիրքն է մարդկանց համար բացահայտում կենդանի Սեր-Աստծո դաստիարակիչ գործունեության վեհապանծ գործընթացը, որը խիստ համաձայնեցված է մարդկության բարոյական եւ մտավոր զարգացման ընթացքին: Հին Կտակարանը, որ շնորհել է մարդկանց արդարության օրենքը՝ մարդկային համակեցության հիմնական օրենքը, Աստծո պատժող ճշմարտության հայտնությունն էր, որը նպատակ ուներ մեղավոր մարդկության մեջ արթնացնել բարոյական անզորության եւ հոգեւոր վերածնման համար Աստծո օգնության անհրաժեշտության գիտակցումը, մարդկանց մեջ հարուցել եւ դաստիարակել ապաշխարելու զգացմունք, նրանց սրտերում ցանել հավիտենական, երկնային բարիքների, փրկության հույսի բաղձանքը: Եվ երբ այդ նպատակն իրագործվեց, երբ նույնիսկ հեթանոսությունը, ի դեմս իր կարկառուն ներկայացուցիչների, գիտակցեց, որ աշխարհն անխուսափելիորեն դատապարտված է կործանման, եթե Ինքն Աստված չիջնի նրան փրկելու, հայտնվեց Աստծո մարմնացյալ Սերը՝ Հիսուս Փրկիչը, Ով մարդկանց շնորհեց Աստծո սիրո, գթասրտության եւ ներողամտության զարմանահրաշ գեղեցկությունը: Աստվածային տնօրինության այս մեծափառ գործընթացը եզրափակվելու է մարդկային ցեղը դատելու Քրիստոսի՝ «Իր փառքով» գալստյամբ: Երբ մարդկությունը կհասնի Աստծուց սահմանված հասունությանը, մարդկանց կը-շնորհվի Աստծո «նոր» անունը, կլինի «նոր երկինք եւ նոր

երկիր» (Հայտ. Գ 12, Բ Պետ. Գ 13): Քանզի այդժամ մարդիկ կկարողանան ըմբռնել արարող աստվածային սիրո վերջնական հայտնությունը, ի գորու կլինեն «տանել» (Հովհ. ԺԶ 12) երկնային լիակատար ճշմարտությունը:

Ս. Գիրքը երկնային Հոր կողմից նախասահմանված է բոլոր ժամանակների, տեղերի եւ ժողովուրդների համար: «Ոչ մի գիրք,- ասում է Բերսիեն,- այնպիսի համապարփակ բնույթ չունի, ինչպես Աստվածաշունչը: Ոչ մի գիրք այդքան խորությամբ չի ընդգրկել մարդկային հոգին իր բնավորության նախնական եւ տարբերակիչ հատկանիշներով՝ չնայած այն բոլոր խորքային նրբերանգների առկայությանը, որոնք մարդկանց հաղորդվում են կլիմայի, խառնվածքի, ցեղային հատկանիշի եւ կրթության միջոցով: Ոչ մի գրքի չի հաջողվել այդպես պատվաստվել իրենց ձգտումներով ու կրթությամբ ամենահակոտնյա ժողովուրդների գիտակցությանը՝ ասես նրանց կրոնաբարոյական բնության անքակտելի մասը կազմելով: Այս գիրքը հոգու հացն է եւ լիովին արժանի է այսպես կոչվելու, քանզի հացը մարմնի համար նույնքան անհրաժեշտ է ու համապատասխան մեր նյութական բնությանը, որքան այս գիրքը՝ մեր հոգիներին»:¹⁶⁴ Եվ որքան սիրով խորամուխ լինենք նրա մեջ ու սնունդ հայթայթենք մեր հոգու համար, այնքան ավելի նա կխթանի մեր ձգտումն առ Աստված եւ աստվածային շնորհի հանդեպ, կսաստկացնի երկնայինի ու հավիտենականի ծարավը, կգորացնի սերը ամենայն լուսավորի եւ սրբազանի նկատմամբ: Եվ մենք, Աստծո սիրո ճառագայթներով ջերմացած, անմահ ազատության եւ անթառամ գեղեցկության հոգով համակված, առավել երջանիկ կզգանք մեզ: Ջուր չէ, որ ճշմարիտ քրիստոնյաներն այդպես սիրում են Աստվածաշունչը: Որքան զուտ երկնային քաղցրություն են ճաշակում նրանք՝ ընթերցելով կամ լսելով խաղաղություն եւ սեր ավետող Աստծո խոսքը: Որքան անզուգական ուրախություն են քաղում իրենց սրտի համար աստվածային Հայտնության այդ անհատում աղբյու-

¹⁶⁴ Besedy, т. II. СПб. 1891, էջ 1902

րից՝ դեպի հավիտենական կյանք հոսող կենաց ջրի այդ աստվածաշունչ ջրհորից: Ինչպիսի~ խնդություն եւ մխիթարություն են հավատացյալի հոգուն պարգեւում Սուրբ Երրորդության երկրորդ Անձի՝ Աստծո Միածին Որդու խոսքերը, որոնք տալիս են մարդկային ճշմարիտ կյանքի առարկայական տեսլականը եւ բոլորին ցույց տալիս այդ նպատակին հասնելու մատչելի միջոցները:

Աստվածաշնչի ընթերցանությունը մեր հոգու կենսական սնունդն է, նրա շնչառությունն ու կյանքը: Եթե որեւէ ոք, կյանքի դժվարություններից հալումաշ եղած, կամենա զորացնել իր հոգին, թող գնա մարգարեների եւ ավետարանիչների աստվածային աղբյուրի մոտ եւ այնտեղ կգտնի փրկության եւ ամենայն շնորհի Աստծուն: Այս առումով Ս. Գիրքը կարելի է համեմատել Դավթի քնարի հետ, որի հնչյուններից փարատվում էր Սավուղի մելամաղձությունը: Սրբազան գրքերում կարծես երկնային մեղեդիներ են հնչում, որոնք հավատացյալների սրտերը տրամադրում են երկյուղած աղոթքի: Հավատացյալներից ո՞վ չգիտե, թե Աստծո խոսքը ինչպես է զորացնում մեղքերի դեմ պայքարելիս, ինչպես է այն գոտեպնդում դժբախտության մեջ, մխիթարում վշտի ու տխրության պահին, ինչպես է խաղաղեցնում խռոված ու հուզված խղճմտանքը... «Ի~նչ հաճելի է Ս. Գրքի ընթերցանությունը,- բացականչում է ս. Հովհաննես Ոսկեբերանը:- Այն հաճելի է ամեն ճառագայթից, քաղցր՝ դրախտից, մանավանդ երբ ընթերցանությանը միանում է ըմբռնումը: Մարգագետինը, ծաղիկների գեղեցկությունը, ծառերի զարդարանքը, վարդը, բաղեղն ու մրտենին հաճելի են աչքերին, սակայն թոշնում են սակավ օրեր անց: Իսկ Աստվածաշնչի ընթերցանությունը բյուրեղացնում է միտքը, մաքրում խիղճը, զսպում անմաքուր կրքերը, ներարկում առաքինություն, վեհացնում բանականությունը, չի թողնում շվարել անսպասելի իրավիճակներում, պաշտպանում է սատանայի նետերից, տեղափո-

խում դեպի երկինք, մարմնի կապանքից ազատագրում հոգին, նրա թեւերը դարձնում թեթելընթաց»:¹⁶⁵

Միայն հոգու վրա չէ, որ բարերար ազդեցություն ունի Ս. Գրքի ընթերցանությունը: Ըստ Սերաֆիմ Սարովսկու՝ Ավետարանի շնորհական ուժը ճաշակած մարդու վրա Աստծո խոսքի ներգործությունը տարածվում է մինչեւ իսկ մարմնի վրա՝ նրան հաղորդելով առանձնակի թարմություն, առույգություն եւ ամրություն: Սա իրողություն է, որին կարելի է հավատալ անվերապահ՝ նկատի առնելով այն խոր հեղաշրջումներն ու փոփոխությունները, որոնք մարդու էության մեջ առաջ է բերում Աստծո խոսքը, որն, ըստ առաքյալի, «կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, հոգերի եւ ողնածուծի սահմանը» (Եբր. Դ 12):

Հիրավի, Աստվածաշունչը ամենահրաշալիւն է, որ կա աշխարհում: Ով ամեն օր ընթերցում է այն, նրա մեջ կգտնի ճշմարիտ երջանկության, հավիտենական կյանքի բանալին, քանզի այն սկզբից մինչեւ վերջ վկայում է Նրա մասին, Ով Իր մասին ասաց. «Ես եմ Ճանապարհը եւ Ճշմարտությունը եւ Կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Երանի~ թե մարդիկ միշտ սիրեին ու գնահատեին Հավիտենականի գիրքը: Երանի միշտ՝ վշտի ու ուրախության, երջանկության ու դժբախտության, բարօրության ու հիվանդության մեջ հավատով փարվեին աստվածային փրկարար շնորհի փրկարար աղբյուրին՝ Աստծո խոսքին, քանզի «կենդանի է Աստծո խոսքը, ազդու եւ ավելի հատու» (Եբր. Դ 12): Այստեղ՝ Աստվածաշունչում՝ ընկած մարդկությանը Աստծո շնորհած այս անգին պարգետում է ամփոփված վսեմագույն իմաստության հիմքը, հանրագումարն ու ամբողջությունը, բացարձակ հավիտենական ճշմարտության կենաց աղբյուրը, երկնային Լույսի վառ ճաճանչը, որը լուսավորում է մարդկանց կյանքի ուղին

¹⁶⁵ Izbrann. mesta iz9 tvorenj sv. o. n. }oanna Zlat. o qtenji sv[\. Pisan][, sost. I. Hilov, izd. II, էջ 66

այս աշխարհի անթափանց խավարի եւ մեղսալից գիշերվա
մեջ:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբնեյ 19	Ժենչուժնիկով 97
Ադամս 107	Ժուկովսկի 76
Ալեքսանդր I 108	Լակորդեր 64
Ամպեր 10	Լամարտին 63
Աստաֆեւ 29	Լավուազիե 9
Բայրոն 55	Լաֆոնտեն 50
Բելիհնսկի 79	Լենորման 28
Բեններ 27	Լեսինգ 52
Բեր 12	Լինկոլն 111
Բերսիե 128	Լյուտարդ 119
Բետեքս 17	Խոմյակով 80
Բիո 10	Կանտ 32
Բոյլ 9	Կարլեյլ 26
Բրուզ 29	Կարուտերս 20
Գալիլեյ 9	Կլոդտ 105
Գարնակ 31	Կլոպշտոկ 60
Գերցեն 85	Կյուվիե 11
Գիզո 66	Կոխանովսկայա 82
Գլադսթոն 110	Կոմենսկի 38
Գյոթե 60	Կոնի 32
Գոլիցին 109	Կոպե 75
Գուլ 21	Կորինֆսկի 103
Դան 13	Կորոպչեւսկի 89
Դաուսոն 15	Կվենշտեդտ 15
Դե-Սանկտիս 69	Կրուզով 91
Դիկենս 68	Համան 34
Դիդրո 53	Հայնե 59, 125
Դոն Պեդրո 112	Հեկկել 6-7
Դոստոեւսկի 86	Հերդեր 54
Դրոմոնդ 16	Հեքսլի 16, 123
Թեյլոր 110	Հյուգո 67
Թենիսոն 71	Հոլլ 49

Հովհ. Ոսկեբերան	127, 129	Ռոտերդամցի	50
Հումբոլդտ	107	Ռուզվելտ	113
Մակինտոշ	20	Ռուսո	51
Մայեր	11	Սալտիկով	87
Մայկով	89	Սենտ-Իլեր	124
Մաունդեր	22	Սերաֆիմ Սարովսկի	129
Մեդլեր	13	Սիմփսոն	23
Մենցել	64	Սկովորոդա	36
Մյուլլեր Մ.	38	Սկոտ	54
Մյուլլեր Յ.	26	Սմայլս	74
Մյուսե	67	Սոլովյով	37
Նապոլեոն	105	Ստասով	32
Նեպյունե	97	Վազեն	14
Նիկիտին	85	Վազներ	12
Նյուտոն	25	Վալուե	111
Շնոռ	104	Վիլհելմ II	114
Պասկալ	24	Վիկտորիա	112
Պաստյոր	17	Վոլտեր	7, 58, 117, 123
Պելլիկո	56	Տյուտչե	82
Պեստալոցցի	45	Տոլստոյ	89
Պետրով	30	Ուշինսկի	46
Պիրոգով	23	Քուրիջ	55
Պրեդոնուցե	112	Օգոստինոս Երանելի	42, 44
Պուշկին	76	Օստրոգորսկի	48
Ռանկե	25	Օրջարդ	36
Ռաչինսկի	47	Ֆարադեյ	11
Ռեիլ	35	Ֆեխներ	13
Ռիխտեր	104	Ֆիխտե	34
Ռիտտեր	22	Ֆրիդրիխ Մեծ	105
Ռյոսկին	71		
Ռոզանով	93		

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Աստվածաշնչականությունը 8, 9, 10, 11, 12, 13, 14, 20, 21, 22, 25, 28, 35, 54, 58, 59, 61, 65, 67, 76, 94, 111, 122, 125

Միասնությունը 27, 28, 64, 65

Իսկությունը եւ արժանահավատությունը 11, 12, 14, 16, 20, 21, 28, 36, 58, 73, 75, 114

Գրական գեղեցկությունները 42, 43, 50, 63, 64, 65, 90, 120, 121

Անօրինակ գերազանցությունը մարդկային բոլոր ստեղծագործությունների նկատմամբ 9, 13, 31, 35, 36, 38, 40, 41, 42, 51, 58, 63, 64, 65, 70, 96, 122, 125, 126

Անանց նշանակությունը մարդկության համար 13, 32, 75, 104, 111, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 126

Ընթերցանության եւ սերտողության անհրաժեշտությունը յուրաքանչյուր քրիստոնյայի համար 10, 71, 74, 98, 99, 100, 107, 108, 112, 128, 129

Ինչպես կարդալ Աստվածաշունչը 44, 54, 55, 56, 57, 58, 59, 75, 77, 89, 101, 102, 103

Ընթերցանության պարզեւած հոգեւոր բերկրանքը 11, 57, 67, 95, 96, 114, 129

Դաստիարակչական եւ կրթական նշանակությունը 16, 29, 38-49, 70, 71, 72, 90, 91, 104, 105

Մատչելիությունը մանկական հասկացողությանը 42, 43, 44, 48, 49, 55, 90, 91, 95, 123

Երեխաներին վաղ հասակից Աստվածաշնչի բովանդակությանը ծանոթացնելու անհրաժեշտության մասին 16, 38, 44, 55, 71, 72, 78, 89, 91, 95, 110

Ընթերցանության բարերար ազդեցությունը երեխաների վրա 16, 67, 73, 90, 97, 123

Որպես աշխարհի լավագույն դպրոցական ձեռնարկ 16, 38-45, 48, 49, 70, 90, 91, 110, 123

Աստվածաշնչի վարդապետության հզոր ազդեցությունը մարդկանց սրտերի եւ մտքերի վրա 10-12, 18, 32, 34, 38, 54-60, 64, 70, 75, 89, 92, 96, 103, 107-114, 128-130

Սարսափելի եւ միաժամանակ հաճելի գիրք է 18-19

Ազդեցությունը առանձին անհատների եւ ժողովուրդների վրա 29-31, 34, 104, 107, 112-116,

Աստվածաշունչը ժողովուրդների գիրքն է 62, 107, 124, 128

Ազդեցությունը համաշխարհային քաղաքակրթության վրա 35, 55, 62, 110, 112, 113, 119

Որպես մարդկային կյանքի ուղեկից 22, 36, 37, 55, 73, 86, 104, 110, 115

Որպես մարդու հոգեբանության ձեռնարկ 49, 104, 105, 128

Լուծում է համաշխարհային առեղծվածները 18, 34, 35, 42, 56, 86, 100, 128

Աստվածաշունչը եւ բնագիտությունը 8-12, 14, 15, 18-20, 22, 36, 72

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ 16, 17, 49, 61, 62, 76,

Որպես մարդկային ցեղի լավագույն գիրք 51, 52, 111

Նշանակությունը մարդու հոգեկան կյանքի համար 16, 82, 85, 86, 103, 111

ԱԿԵՏԱՐԱՆ 17, 23, 24, 30, 31, 32, 33, 34, 51, 52, 53, 67, 91

Ավետարանը որպես Աստծո ստեղծագործություն 24, 53, 67, 106

Ավետարանի աստվածային գեղեցկությունը 23, 24, 27, 32, 51, 62, 65, 84, 92, 106

Ավետարանի պոեզիան 79

Ավետարանի արժանահավատությունը 51, 53, 62, 76, 92, 114

Ավետարանը որպես բոլոր գրքերից ամենակատարյալը 33, 48, 53, 69, 78, 79, 84

Ավետարանը որպես մարդկային կյանքի կանթեղ 37, 38, 63, 69, 86, 97

Ավետարանի ազդեցությունը աշխարհի քաղաքակրթության վրա 29, 30, 31, 78, 80

Ավետարանի բովանդակությունը մատչելի է բոլորին 80, 84,
Ավետարանի մատչելիությունը երեխաների հոգեւոր ընկալմա-
նը 47, 50, 87, 91, 97, 124
Մարդու առջեւ բացվող ավետարանական մտքերի խորությու-
նն ու հարստությունը 27, 33, 34, 80, 81
Ավետարանի՝ մարդկային հոգու խորունկ ըմբռնումը 46, 88
Ավետարանի վսեմացնող ներգործությունը մարդու հոգու վրա
18, 23, 24, 31, 32, 49, 50, 53, 70, 76, 78, 82, 83, 84, 85, 86,
87, 88, 89, 91, 94, 96, 97, 106, 109
Հայտնություն 64, 110
Սաղմոսարան 47, 48, 63, 64, 89
Սաղմոսարանը որպէս մարդու՝ կյանքի դժվարին պահերի
մխիթարության գիրք 26, 32, 47, 92, 93, 109
Հոբի գիրքը 36, 70, 78
Եսայի մարգարեի գիրքը 94

*Հիշեցե՛ք ի ՏԵՐ ՄԵՁ՝ ԱՆԱՐԺԱՆ ԵՒ ՄԵՂԱԿՈՐ
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂՆԵՐԻՍ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻՍ ԵՒ ՄԵՐ
ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ:*

*Ի. քահանա ժիլով
Ինչ են ասում նշանավոր մարդիկ
Աստվածաշնչի մասին*

Թարգմանությունը ռուսերենից՝
Գրիգոր Դարբինյանի
Ավետ Ավետիսյանի
Հրատ. խմբագիր՝ Շուշան Վարդանյան
Տեխ. խմբագիր՝ Տիգրան Ապիկյան
Սրբագրիչ՝ Հասմիկ Վարդանյան

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ